


Մորիս Բարրաթ

«Արմատական քրիստոնեություն»
մաս 5



**ԱԳԱՐ,
ԹԵ
ՀԱԳԵՑԱԾ**

Ջրաժարում հեղինակային իրավունքներից

**Դուք ազատ կարող եք մեջբերել,
կրկնօրինակել ու տարածել այս գրքի նյութը:
«Barratt Ministries»-ը ոչ մի բնօրինակ նյութի
նկատմամբ չի կիրառում հեղինակային
իրավունքի քաղաքականություն:**

Մորիս Բարրաթ

«Արմատական քրիստոնեություն» շարք
մաս 5

ԱԳԱՐ, ԹԵ ՀԱԳԵՑԱՆՑ

Գիրքն առաջին անգամ լույս է տեսել 2006թ.:

«Barratt Ministries» հրատարակչություն
Մանչեսթեր M14 5QH, Մեծ Բրիտանիա



Էլ. փոստ: info@barrattministries.org.uk
Ինտերնետային կայք: www.barrattministries.org.uk

Բովանդակություն

Ներածություն -----	5
--------------------	---

ՄԱՍ 1 – Աստված, թե՞ մամոնան

1. Ի՞նչ է ազահությունը -----	10
2. Գանձեր երկրի վրա՝ ազահություն -----	14
3. Գանձեր երկնքում՝ հազեցածություն -----	21
4. Մարմնի ճրագը -----	28
5. Աստված, թե մամոնան -----	35

ՄԱՍ 2 – Մի մտահոգվեք

6. Քո՞ կյանքը, թե՞ նրանը -----	39
7. Կե՛ր, խմի՛ր եվ գվարճացի՛ր -----	47
8. Դիրք, տեսք եվ ոճ -----	57
9. Վաղը երբեք չի գալիս -----	64

ՄԱՍ 3 – Իմաստություն՝ ի վերուստ

10. Մի՛ վախեցիր կրակից -----	72
11. Մի՛ դատիր -----	76
12. Ինչու՞ չդատել -----	81
13. Ի՞նչ պետք է դատենք -----	92
14. Հոգևոր դատ -----	106
15. Սուրբ բաներ -----	113
16. Շների բաժին դարձած -----	123
17. Իմաստության մարգարիտներ -----	131
18. Խոզերից՝ ոչ մի օգուտ -----	139

Ներածություն

Մեր հարստության իրական չափը այն է, թե ինչքան մենք կարժենանք, եթե կորցնենք մեր ամբողջ կարողությունը:

Ջոն Հենրի Ջոուեթ

...որովհետեւ բոլոր չարիքներուն արմատը՝ արձաթսիրութիւնն է, որուն բաղձալով՝ ոմանք մոլորեցան հաւատքէն եւ իրենք զիրենք խոցեցին շատ ցաւերով:

Ա Տիմոթեոս 6:10

Պահէ՛ սիրտդ ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են:

Առակաց գիրք 4:23

Լեռան քարոզի վերաբերյալ այս հիւնգերորդ գիրքը երկի ամենակարևորն է, որովհետև սա Յիսուսի քարոզի այն մասն է, որը բացահայտում է ու մարտահրավեր նետում ամեն չարիքի հիմնական արմատին: Ես չեմ հավատում, որ ամեն չարիքի արմատը սատանան է, այլ համոզված եմ, որ դա մարդու սրտում եղած ազահությունն է: Սատանայի ուժը այն մոլորությունն է, երբ նա առաջարկում է, թե մեր ազահությունն արդարացված է ու մեզ ավելի շատ Աստծու նման կդարձնի:

Մինչ այս պահը Յիսուսի ողջ քարոզը նախապատրաստություն է եղել այս ճշմարտության բացահայտման համար, և այն անձը, որ մինչև այս պահը չի ընդունել այս քարոզը, երբեք չի ընդունի դրա մասին Յիսուսի ասածները: Քանի դեռ մենք չենք բացահայտվել մեր գաղտնի կյանքում ու հասկացել, որ միայն մեկ այլ գաղտնի կյանք կարող է

Աստծուն թույլտվություն տալ փոխելու մեր սիրտը, մենք երբեք չենք կարողանա ընդունել, որ ամեն չարիք գալիս է մարդու ազահությունից:

Արմատների հետ գործ ունենալը

Չիսուսը կացինն արմատին է դնում, իսկ մենք կամ ընդունում ենք, կամ էլ մերժում նրա ասածներն ու ապրում համապատասխանաբար: Նրա ողջ քարոզը հիմնված է այն փաստի վրա, որ *որտեղ մեր գանձերն են, այնտեղ էլ մեր սիրտը կլինի*:

Այս գրքի երկրորդ մասում մենք կդիտարկենք *իմաստությունն ի վերուստ*, որ Չիսուսը տալիս է աշակերտին, երբ նրա ազահ սրտի գաղտնիքները բացահայտված են: Այնուհետև մենք կհասնենք քարոզի «վերջին մղունին» և հաջորդ՝ այս շարքի վերջին գրքում կդիտարկենք եզրահանգումներն ու ընտրությունները, որ Չիսուսը մեր առաջ է դնում: Մենք պետք է ընտրենք, թե որ ճանապարհով ենք քայլելու, որ ծառից ենք ուտելու ու որ հիմքի վրա ենք կառուցելու մեր քրիստոնյա կյանքը:

Ամեն մեղք սկսում է սրտում

Մատթեոսի ավետարանի գլուխ հինգի երկրորդ մասում Չիսուսը բացահայտում է իր ժողովրդի մեջ եղած կեղծավորությունն ու ցույց տալիս, որ մենք ծածկում ենք մեր սրտի գաղտնի կյանքը մեր արտաքին կեղծավորությամբ ու կեղծ բարեպաշտությամբ: Այժմ գլուխ վեցում Չիսուսը մեկ շերտ էլ է հանում ու մեզ ցույց տալիս, որ կեղծավորությունը կիրառվում է միայն առավել խորը արմատը ծածկելու համար, այն է՝ ազահությունը: Ամեն մեղք սրտից է բխում և ամեն մեղք սկսում է ազահությամբ:

Աշխարհի ամենաառաջին մեղքը տեղի ունեցավ Դրախտի այգում, երբ Եվան *տեսավ, որ ծառը **ցանկալի էր իմաստուն լինելու** համար*: Այլ կերպ ասած, նա բաղձում էր այն իմաստությունը, որ կունենար

միրգն ուտելու հետևանքով: Նա պատրաստ էր չհնազանդվել Աստծուն ու նրա պատվիրաններին, որպեսզի բավարարեր իր սեփական եսասեր տենչը: Այս ազահուրությունը նրա սրտում էր նախքան անգամ նա կերավ ծառի պտղից ու անհնազանդ եղավ Աստծուն, հետևաբար այն ներկա էր **Նախքան Եվայի մեղք գործելը:**

Երկրորդ Ադամը

Ամեն մեղք նույնատիպ է տեղի ունենում: Օրինակ, նախքան շնանալը անձը սրտում ունենում է «արգելված պտղի», այս դեպքում՝ մեկ այլ մարդու կնոջը տիրանալու բաղձանքը: Նախքան որևէ բան գողանալը մարդը սրտում ունենում է բաղձանք՝ տիրանալու մի բանի, որ իրեն չի պատկանում: Ամեն մեղք սկսում է սխալ բաղձանքով, այն է՝ ազահորեն տենչալով այն, ինչ մարդու համար արգելված է: Ահա թե ինչու ամեն մեղք անհնազանդություն է, քանզի որպեսզի տիրանանք նրան, ինչ մենք անօրինաբար տենչում ենք, մենք միայն մի ուղի ունենք՝ անհնազանդություն:

Միայն երկրորդ Ադամի հնազանդությունը կարող է մեզ ազատել այս պատժից, այն է՝ ազահության պտուղներն ուտելու անեծքից: Հիսուսի ուսմունքներին հետևելով կտեսնենք, որ գոյություն ունի երկու տեր, որին քրիստոնյան կարող է ծառայել, և դրանք Աստված կամ Սատանան չեն: Այդ երկու տերերը Աստված և մամոնան են, այն է՝ Աստված, կամ արժաթասիրությունը՝ փողի նկատմամբ սերը:

Փողը չեզոք է

Թույլ տվեք հստակեցնել, նախքան բուն նյութին անցնելը, և ես սա կկրկնեմ այս գրքում, որ խնդիրը ոչ թե փողն է, այլ փողի նկատմամբ սերը: Փողը, ինքնին, չեզոք է: Ադամը ծնվեց առանց որևէ կարիքի, և աշակերտներին նույնպես ասվում է, որ անհոգ լինեն ավետարանելու

համար:

Այնուամենայնիվ, հարուստ կանայք հոգում էին Յիսուսի ու նրա աշակերտների նյութական կարիքները, իսկ Սողոմոնն աշխարհի ամենահարուստ մարդն էր երբևէ, և Աստված էր նրան դա տրամադրել (Բ Թագավորաց 3:1-13): Խոսքը ոչ թե փողի մասին է, այլ սրտի ու դրա ազահուլթյան:

Բոլոր մեջբերումները Աստվածաշնչից բերված են այս կայքից՝

http://armenianbiblechurch.org/armenian_bible.htm



ገጽ 1

ገጽ 1
ገጽ 1, ገጽ 1
ገጽ 1



Գլուխ 1

Ի՞նչ է ագահությունը

Ուրեմն մեռցուցէ՛ք ձեր երկրաւոր անդամները.- պոռնկութիւնը, անմաքրութիւնը, անսանձ կիրքը, չար ցանկութիւնը եւ ագահութիւնը, որ կոապաչտութիւն է:

Կողոսացիս 3:5

Ուրեմն ի՞նչ ըսենք. Օրէնքը մե՞ղք է: Ամենեւին: Նոյնիսկ ես պիտի չգիտնայի մեղքը, եթէ Օրէնքը չըլլար. նաեւ պիտի չգիտնայի ցանկութիւնը, եթէ Օրէնքն ըսած չըլլար. «Մի՛ ցանկար»:

Հռովմեացիս 7:7

Ագահությունը հասկանալու համար մենք պետք է հետ գնանք Դրախտի այգին ու առավել խորությամբ դիտարկենք առաջին գործած մեղքը, նույնիսկ ավելի հետ, նախքան Ադամն ու Եվան կուտեին արգելված պտուղը: Նրանք դեռ մեղք չէին գործել նախքան պտուղն ուտելը, այսինքն նախքան Աստծուն չինազանդվելը: Սակայն սուրբ գրություններից առավել ակնհայտ է, որ Եվան բաղձում էր պտուղն ու ինքն իրեն հաճույք պատճառելը ավելի շատ, քան Աստծուն հնազանդվելը: Այս բաղձանքը նախորդում էր այն բանին, **երբ մեղքը մուտք գործեց աշխարհ:**

«Կինը՝ տեսնելով թէ ծառը լաւ էր ուտելիքի համար, փափաքելի՛ աչքերուն, եւ ցանկալի՛ ուչիմ ըլլալու համար, առաւ անոր պտուղէն ու կերաւ: Նաեւ իրեն հետ եղող իր ամուսինին տուաւ. ա՛ն ալ կերաւ...»
(Ծննդոց գիրք 3:6):

Սատանան ճշմարտությունն ասաց

Սատանան օձի միջոցով եվային ճշմարտությունն ասաց, այն է, որ եթե նա ուտեր պտղից, իր աչքերը կբացվեին, ու նա կիմանար բարու ու չարի միջև տարբերությունը: Ադամը ստեղծվել էր Աստծու կերպարանքով՝ իր սեփական բարին ու չարը ընտրելու բնական ցանկությամբ: Աստված փորձեց Ադամին, որպեսզի միջոցներ տրամադրի իր բարի ցանկությունը վարժեցնելու ու իրեն կառավարելու համար՝ այգում բարու ու չարի իմացության ծառը դնելով: Աստված այնուհետև պահանջեց Ադամից մերժել այդ ընտրությունն ու թույլ տալ, որ Աստված լինի իր Աստվածը: Աստված կամենում էր, որ Ադամը հնազանդվի Աստծո կամքին, փոխարենը իր սեփականի, չնայած նրան, որ Աստված նրան ազատ կամք էր տվել ինքն իրեն կառավարելու ու որոշելու, թե որն էր բարի և որը՝ չար: Նրա սխալ ընտրությունը աշխարհը մեղքի մեջ խորտակեց, ինչը երբեք չվերականգնվեց: Իրոք, սա չի վերականգնվի, մինչև Հիսուսը նորից չգա այս երկրի վրա իշխելու:

Ավտոնոմիա՝ ինքնակառավարում

Աստված երբեք չի նպատակադրել, որ մարդն ինքն իրեն կառավարի, և ամեն մեղքի արմատ կարելի է գտնել այս ազահության մեջ, այն է՝ ինքներս որոշելու, թե որն է բարին, իսկ որը՝ չար, ստեղծելու մեր սեփական բարոյականությունն ու դառնալու Աստված:

Ինքներս մեզ և ուրիշների կառավարելու ուժի նկատմամբ տենչը Բաբելոնի և Նեռի համակարգի հենց սիրտն է, իսկ փողի սերը սա իրականացնելու ուժն է: Սակայն ոչ ոք պարզապես փող չի ուզում, այլ այն ցանկանում է դրա գնելու ուժի համար: Փողը կարող է գնել նյութական ունեցվածք, օրինակ՝ տներ կամ հող, անգին գանձեր և մարմնական, հեշտասեր զվարճություններ: Բայց մարդն իրականում փնտրում է հոգևոր արդյունքները, իսկ փողը միայն դրա միջոցն է: Սրա

պատճառն այն է, որ շատ բաներ, որ փողը կարող է գնել, անգամ նյութական չեն:

Նյութական բաները կարելի է գնել

Փողը կարող է շատ հոգևոր բաներ գնել՝ իր մուրրեցնող ուժով, օրինակ՝ հանգստություն, ապահովություն, կամ էլ մարդկանց ու իրավիճակներ կառավարելու ուժ: Քանի որ հիմնական ցանկությունն ուրիշներին կառավարելն է, կամ էլ պարզապես մեր սեփական կյանքը կառավարելը, փողի նկատմամբ սերը դառնում է ամեն չարի արմատը:

Այժմ ես խոսում եմ այնպիսի ոլորտների մասին, որոնք քննարկելու համար իրականում մի քանի գիրք է պետք, բայց մինչև այժմ իմ ողջ գրածը պարզեցնելու համար թույլ տվեք ասել, որ **ազահությունը, իրականում, մեր սեփական կյանքը կառավարելու տենչն է:** Սրան հասնելու համար մենք պետք է անհնազանդ լինենք, քանզի Աստված բացիեբաց ասաց. *մի՛ կեր ծառից*, որը քեզ այդ ուժը կտա: Ամբողջ աշխարհը, և ցավոք սրտի, եկեղեցին նույնպես, ներքաշվել է այս բարու ու չարի պայքարի մեջ՝ սկսած վիուկության կողմից ներշնչված ֆիլմերից, մինչև երկրների նախագահներ, սկսած «սուրբ ջրից», մինչև դներ դուրս անելը:

Հնազանդությունը բանալին է

Օրինակ, երբ մենք դներ ենք դուրս անում, մենք ոչ թե չարի դեմ ենք պայքարում, այլ պարզապես հնազանդվում Հիսուսի պատվիրաններին. *բժշկե՛ք հիվանդներին, դու՛րս արեք դներին*: Խնդիրն այն է, որ այն, ինչ մարդուն բարի կամ չար կարող է թվալ, տարբերվում է նրանից, ինչ Աստծու կարծիքով է բարի կամ չար: Մենք չպետք է այս կամ այն կողմն ընտրենք, այլ պարզապես պետք է հնազանդվենք: Անգամ բարու իմացությունը կարող է բարի չլինել, երբ Աստված դա

արգելել է: Աստված վստահաբար մեզ համար կպայքարի, բայց ճիշտ է նաև այն, որ եթե մենք Աստծու ցուցումներին չհնազանդվենք, այդ ժամանակ Աստված մեր դեմ կպայքարի: Իսրայելի ողջ պատմությունն այն մասին է, թե ինչպես է Աստված պայքարում իր ժողովրդի համար և իր ժողովրդի դեմ:

Տիրոջ գորքի հրամանատարը

Երբ Յեսուն հարցրեց Աստծու գորքի հրեշտակին, թե նա ում կողմից էր, նա զարմանալի պատասխան ստացավ: Հրեշտակն ասաց, որ ինքը *Տիրոջ գորքի հրամանատարն է*: Այլ կերպ ասած, նա այս կամ այն կողմից չէր: Եթե նրանք հնազանդ էին, Աստված հրեշտակին կպատվիրեր նրանց համար պայքարել, բայց եթե նրանք հնազանդ չէին, այդժամ Աստված նրան կպատվիրեր պայքարել նրանց դեմ ու նրանց թշնամիների կողմից: (Տես Յեսուի գրքի գլուխ 5 և Իսրայելի պատմությունը՝ մինչև նրանց ստրկությունը Բաբելոնում): Քանի որ ազահությունն այդքան արմատական է մեր երկրային կյանքի համար, Հիսուսն ասում է մեզ, որ մենք չպետք է բաղձանք այս երկրի վրա որևէ բան, այլ գանձեր փնտրենք երկնքում: Մենք միշտ էլ տենչալու ենք կամ մեկը, կամ մյուսը, և ես առավել մոտիկից կուսումնասիրեմ մեր ընտրությունները հաջորդ մի քանի գլուխներում:



ԳԼՈՒԽ 2

Գանձեր երկրի վրա՝ ազահուլթյուն

*Երկրի վրայ գանձեր մի՛ դիզէք ձեզի, ուր ցեցը
եւ ժանգը կ'ապականեն, ուր գողերը պատ
կը ծակեն ու կը գողանան:*

Մատթեոս 6:19

*Ապա ըսաւ անոնց. «Ուշադիր եղէք եւ
զգուշացէ՛ք ազահուլթենէ. որովհետեւ մէկուն
ստացուածքներուն առատութենէն կախուած չէ
իր կեանքը»:*

Ղուկաս 12:15

Հիսուսը Մատթեոս 6:19-ում ասում է, որ մենք չպետք է գանձեր կուտակենք երկրի վրա: Ուշադրություն դարձրեք այն բանին, որ նա դեմ չէ գանձեր դիզելուն, քանզի հաջորդ համարում նա մեզ ասում է, որ մենք **պետք է** գանձեր դիզենք: Հիսուսին հետաքրքրում է այն վայրը, որտեղ մենք դիզում ենք մեր գանձերը. երկի՞ր, թե՞ երկինք:

Նախքան գանձեր դիզելու վայրը դիտարկելը, մենք պետք է հստակեցնենք, թե ինչ կարգի գանձերի մասին է Հիսուսը խոսում: Ճատ հեշտ է հետևություն անել, քանզի Հիսուսն ասում է մեզ, որ գողերը կարող են պատը ծակել և գողանալ, և ցեցն ու ժանգը կարող են ապականել: Ուրեմն այս գանձը պետք է որ նյութական բաներից բաղկացած լինի, քանզի ցեցն ու ժանգը երբեք չեն կարող հոգևոր բաների վրա քայքայիչ ազդեցություն ունենալ: Սերը, խաղաղությունը, ցնծությունը կամ հոգու շնորհները չեն կարող գողացվել գողերի կողմից կամ էլ ապականվել ժանգով:

Այսպիսով, մենք արդեն վստահ ենք, որ Հիսուսը խոսում է

Նյութական ունեցվածքի մասին: Սակայն նախադասության էական մասը ոչ թե ունեցվածքն է, այլ գանձերը: Նա ասում է, որ երկրի վրա գանձեր չդիպենք, ուրեմն, ի՞նչ կարգի նյութական բաներ են այդ գանձերը: Ինչպե՞ս ենք մենք սահմանում մեր գանձը, քանզի ոչ բոլոր քրիստոնյաներն են հարուստ:

Ի՞նչն է մեզ համար արժեքավոր

Մեր գանձն այն է, **ինչ մենք արժեքավոր ենք համարում**, այլ ոչ թե անպայման իրերի նյութական արժեքը: Դա այն է, ինչ ես չէի ցանկանա կորցնել կամ կցանկանայի ապահովագրել, որպեսզի այն կարելի լիներ փոխարինել՝ գողանալու կամ հնանալու դեպքում:

Եթե որևէ մեկն իմ աղբամանի պարունակությունը գողանար, ես չէի անհանգստանա, քանզի այնտեղ այն է, ինչ ես անարժեք եմ համարում: Ես իմ աղբամանի պարունակությունը չէի ապահովագրի, քանզի այն ինձ համար որևէ արժեք չունի և պետք է թափել ու այրել: Սակայն ես կարող եմ արժևորել այնպիսի իրեր, որոնք թանկարժեք չեն, ինչպես, օրինակ, հուզական արժեք ունեցող իրերը: Օրինակ, իմ երեխաները նույնպես կարող են լինել իմ գանձի մի մասը:

Մի՛ անհանգստացեք

Հիսուսն այստեղ չի ուսուցանում, թե քրիստոնյաները պետք է աղքատ լինեն, ոչ էլ նա ուսուցանում է, թե քրիստոնյաները պետք է հարուստ լինեն: Աղքատությունն ու հարստությունը հասկացություններ են, որ չափվում են մեկը մյուսով: Հիսուսը չի ուսուցանում ունեցվածքին հակառակ, այլ ուսուցանում է ազահությանը հակառակ: Նա ասում է, որ մենք չպետք է անհանգստանանք այն ամենի մասին, որի համար «աշխարհը» կանհանգստանա, այն է՝ հազուստ կամ ունեցվածք: Նա ասում է, որ այն ամենը, ինչը աշխարհն է արժևորում, մեզ համար

չպետք է կարևոր լինի:

Այս գլխի մնացած մասում Հիսուսը չորս անգամ ասում է «մի՛ մտահոգվեք», այն է՝ մի անհանգստացեք սննդի, հագուստի, կյանքի և ապագայի համար, և մենք այս չորս հիմքերը կդիտարկենք ավելի ուշ այս գրքում (տես Մատթեոս 6:25,31,34):

Ո՛չ ներս, ո՛չ դուրս

Հին կտակարանում Մովսեսի Օրենքն ասում է, որ մենք չպետք է ցանկանանք այն իրերը, որոնք պատկանում են այլ մարդկանց. *«Բու ընկերիդ տան մի՛ ցանկար. ընկերիդ կնոջ, կամ անոր ծառային, կամ աղախինին, կամ եղին, կամ իշուն, կամ ընկերիդ որեւէ մեկ բանին մի՛ ցանկար»* (Ելից 20:17):

Սակայն ինձ մոտ այնպիսի տպավորություն է, որ Աստծու շնորհի այս ներկայիս ժամանակում Հիսուսն ասում է, որ մենք չպետք է անգամ ցանկանանք մեր սեփական ունեցվածքը: Մենք մեր ունեցվածքին պետք է շատ թեթև վերաբերենք, քանզի մենք ոչինչ չենք բերել այս աշխարհ և որևէ նյութական բան չենք կարող տանել մեզ հետ, երբ հեռանանք: Ամեն մարդ այս աշխարհից հեռանում է չքավորի պես, քանզի մենք չենք կարող անգամ մեր սեփական մարմինը մեզ հետ տանել մահանալուց հետո. Մենք այն թողնում ենք այս երկրի վրա, որն էլ ի վերջո քայքայվում է (տես Ա Տիմոթեոս 6:7):

Ա Տիմոթեոս 6:5-ում Պողոս առաքյալը երիտասարդ հոգևոր սպասավորին զգուշացնում է, որ իրեն հեռու պահի այն քրիստոնյաներից, ովքեր ուսուցանում են, թե նյութական հարստությունը բարեպաշտություն է: Ցավոք սրտի, ժամանակակից երիտասարդ հոգևոր ծառաները գայթակղվում են հենց այդ քարոզիչներով: Իմ սիրտը կոտրվում է, երբ ես գնում եմ զարգացող երկրներ ու տեսնում այն վնասը, որ սա ունեցել է երիտասարդ անմեղ հոգևոր ծառաների վրա, որոնք այս ուսմունքով գայթակղվել են ու այժմ խելագարի պես վազում են Բաղաամի ճանապարհով՝ վարձքի համար:

Դա նրանց դարձնում է ազահ ու գոռոզ վարձկաններ:

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե արդյոք իմ նյութական ունեցվածքն իմ գանձն է: Դժվար չէ, եթե ես պատրաստ եմ բացահայտվելուն: Հիսուսն ասում է, որ *որտեղ մեր գանձն է, այնտեղ էլ մեր սիրտն է*: Ուրեմն մենք պետք է հարցնենք. «Իսկ որտե՞ղ է իմ սիրտը, ի՞նչ եմ ես սիրում»: Արդյո՞ք ես արթնանում եմ՝ մտածելով գուժի, ֆուտբոլի կամ իմ նոր մեքենայի մասին: Երբ ես աշխատանքի վայրում ազատ ժամանակ եմ ունենում, արդյո՞ք միտքս ուղղվում է տանս հարդարանքի կամ այգուս ուղղությամբ: Արդյո՞ք ես ժամեր եմ անցկացնում իմ արձակուրդի մասին երազելով, որ չորս ամսից պիտի վայելեմ: Այդ դեպքում, կարծում եմ, որ այս ամենը կարող է լինել իմ գանձը, քանզի իմ սիրտը տեսչում է դրանց կողմը: Մենք միշտ էլ տեսչում ենք դեպի մեր գանձը: Մենք չենք կարող միաժամանակ սիրել Աստծուն և ինքներս մեզ:

Հարուստ երիտասարդ կառավարիչը

Ավետարաններում մի հայտնի դեպք կա, ուր մի շատ հարուստ երիտասարդ գալիս է Հիսուսի մոտ ու հարց տալիս: *«Բարի՛ վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ՝ որ ունենամ յավիտենական կեանքը»* (*Մատթեոս 19:16*): Նա հավիտենականությունում ապահովագրված տեղ էր կամենում ունենալ: Ահա թե ինչ մենք պետք է անենք հավիտենական կյանք ժառանգելու համար՝ հավատքով պահենք պատվիրանները: Հիսուսը դեռ իր արյունը չէր թափել, և երիտասարդը արդարացված կլիներ հավատքով:

Դժվար է հավատալ, բայց նա տվեց հաջորդ հարցը: Նա ասաց. *«Ո՞րոնք»*: Ինչպիսի հիմարություն: Իհարկե բոլորը: Բայց նրա հարցը ցույց տվեց, որ նրա սիրտը մաքուր չէր, ու որ նա արդեն փորձում էր արդարացում փնտրել: Հիսուսը սկսեց նրան թվարկել պատվիրանները, և համոզված եմ, որ երիտասարդը մտովի նշան էր անում յուրաքանչյուրի առաջ, քանզի նա ոչ սպանել էր, ոչ էլ շնացել:

Ինքնաբերաբար

Նա ինքնաբերաբար էր դա անում, քանզի պատկերացնում էր, թե իր սիրտը մաքուր էր, և երբ Հիսուսն ավելացրեց՝ *«Եւ սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»*, համոզված էմ, որ նա կրկին մտովի նշան արեց՝ կարծես թե պահել էր այս պատվիրանը նույնպես, ինչպես մյուսները: Նա ասաց. *«Պահած եմ այդ բոլորը՝ պատանեկութենէս ի վեր. տակաւին ի՞նչ կը պակսի ինձի»*, բայց նա մոլորության մեջ էր, քանզի նա չէր սիրում իր մերձավորին, ինչպես ինքն իրեն, և Հիսուսը մերկացրեց նրան՝ ասելով. *«Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ՝ զնա՛, ծախէ՛ ինչքդ եւ տո՛ւր աղքատներուն, ու զանձ պիտի ունենաս երկինքը. ապա հետեւէ՛ ինձի»* (ողջ պատմությունը Մատթեոս 19:16-22-ում): Այս կատարելությունը հավիտենական կյանքի հետ կապ չունի, այլ այն մասին է, թե ինչպես ենք մենք ապրում այս աշխարհում (տես Մատթեոս 5:48):

Ինքնախաբեություն

Երիտասարդը տրտմած հեռացավ, քանզի նա շատ հարուստ էր: Նա անգամ չկարողացավ իր ունեցվածքի մի մասը տալ՝ ի հակառակ Չաբեոսի, ով իր ունեցվածքի կեսը տվեց՝ աղքատներին կերակրելու համար: Ինչու՞ արդյոք նա չառաջարկեց մի մասը, կամ անգամ մի շատ փոքր, աննշան մաս, որպես նշան այն բանի, որ ինքը սիրում էր իր մերձավորին: Ո՛չ, նա անգամ մի սիկո չառաջարկեց: Ինչպիսի մոլորված ու թշվառ անձնավորություն: Նա ցանկանում էր կառչել իր տիրացած ամեն մի լումային: Ինչպիսի ողբալի կյանք: Նա մերկացված էր, քանզի իրականում չէր սիրում իր մերձավորին, ուրեմն, չէր սիրում նաև Աստծուն: Նրա ողջ կյանքը սուտ էր:

Քրիստոնյան կարող է հավատքով հավիտենական կյանք ունենալ, սակայն սա Աստծուն սիրելու չափանիշ չէ: Հիսուսն ասաց. **«Եթե ... սիրում ես ինձ, պահիր պատվիրաններս»**: Հարուստ երիտասարդ կառավարիչը չէր կարող հնազանդվել Հիսուսի այս դժվար հրամանին:

Նա գերադասեց անհնազանդ ու տրտում լինել, քան հնազանդ ու երջանիկ: Թույլ տվեք նորից ասել այն, որ հարստությունը սխալ չէ, այլ դրանց նկատմամբ սերն է մոլորեցնում մեզ:

Այս երիտասարդը հավիտենական կյանք ուներ, սակայն նա կկորցնեի Հիսուսի իշխանությունն ու նրա Հարսնացուի մի մասը լինելու հնարավորությունը:

Հարստության մոլորությունը

Սերմնացանի առակում մարդկանց երրորդ դասը ընդունել էր ավետարանն ու պտղաբեր եղել, այն է՝ աճել էր շնորհքով ու ցույց տվել Քրիստոսի կյանքն ու եությունն իր կյանքում: *Բայց այս աշխարհի հոգսերն ու հարստության խաբեությունը* մոլորեցրեցին ու խեղդեցին Հիսուսի կյանքը՝ դուրս մղելով այն նրանց միջից, ու նրանք *դարձան անպտուղ*: Հավատացած եմ, որ ժամանակակից քրիստոնյաների մեծամասնությունն այս դասին է համապատասխանում: Նրանք մոլորվել են այս աշխարհի հոգսերով և հարստության խաբեությամբ: Որքան տխուր է սա:

Հիսուսը մի առակ պատմեց հարուստ և ազահ մարդու մասին: Երբ Աստված նրան իր ունեցածից ավելի օրհնեց, նա որոշեց ավելի շատ պահեստներ կառուցել, **պահուստավորել իր ունեցվածքն** ու անհոգ ապրել: Հիսուսն ասաց, որ նա հիմար էր, բայց ոչ այն պատճառով, որ հարուստ էր: Սրա պատճառն այն էր, որ նա երկնքում ոչ մի հարստություն չկուտակեց:

«Բայց Աստուած ըսաւ անոր. "Անմիտ, այս գիշեր անձդ պիտի պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ պատրաստած բաներդ"» (ողջ պատմությունը Ղուկաս 12:15-21-ում): Հիսուսն այս առակը պատմեց՝ որպէս ազահությունից խուսափելու զգուշացում: *«Ապա ըսաւ անոնց. «Ուշադիր եղէք եւ զգուշացէ՛ք ազահութենէ. որովհետեւ մէկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը»* (տող 15): Նա ավարտում է մի դաժան զգուշացումով. *«Այսպէս*

է ան՝ որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ մօտ»:

Խոսքն Էժան Է

Այս գլխի իմ հետևությունն այն է, որ եթե մենք երկրի վրա գանձեր ունենք, ուրեմն ազահ ենք: Եթե մենք ունենք ունեցվածք, առանց որի մենք նույնքան երջանիկ կարող ենք լինել, ուրեմն դրանք մեր գանձերը չեն, ու մենք ապացուցում ենք, որ ազահ չենք: Սրա միակ խնդիրն այն է, որ մենք պետք է ապացուցենք, որ մեր ունեցվածքը մեր գանձերը չեն, իսկ մենք չենք կարող դա անել ասելով կամ դրան հավատալով:

Եթե ես բանկում մեկ միլիոն \$ուստ ստերլինգ ունեմ ու ասում եմ, որ դա իմ գանձը չէ, ապա ես նաև ասում եմ այն, որ եթե Աստված ինձ ասեր, ինձ համար շատ հեշտ կլիներ այդ ամբողջն ուրիշներին տալ, դա դեռ որևէ բան չի նշանակում քանի դեռ այդ գումարը ապահով է իմ բանկային հաշվում: Ես չեմ փորձվել, ուրեմն չգիտեմ կբաժանե՞մ, թե՞ չէ, եթե Աստված ինձ ասի:

Քանի դեռ ես չեմ սկսել ինքս ինձ և Աստծուն ապացուցել գործնական ուղիներով, իմ մտքերը կարող են երբեք փաստեր չդառնալ, կամ միգուցե ավելի լավ բառ կլինի՝ ճշմարտություն:

Հարուստ երիտասարդ կառավարիչը հավատում էր, թե ինքը ցանկանում է կատարյալ լինել, բայց երբ Հիսուսը նրանից պահանջեց ցուցադրել դա, նա թշվառորեն տապալվեց, և վախենամ, որ քրիստոնյաների մեծամասնությունը նույնպես չի անցնի այս փորձությունը, եթե Աստված նրանցից պահանջի: Խոսքը Էժան է, դրա համար Հիսուսը ավետարանը ցուցադրեց իր կյանքով, այլ ոչ միայն խոսքերով: Եկե՛ք համոզվենք, որ մենք պարզապես «շրթունքով չենք ծառայում» Լեռան քարոզին: Եկե՛ք լինենք մարդիկ, որ կատարող են, այլ ոչ հավատացող՝ ի հակադրություն նրանց, ովքեր հավատում են, թե իրենք հավատում են:



ԳԼՈՒԽ 3

Գանձեր երկնքում. հազեցածուրթյուն

Սակայն բարեպաշտութիւնը՝ ինքնաբաւութեամբ միասին՝ մեծ շահավաճառութիւն մըն է:

Ա Տիմոթեոս 6:6

Ո՛չ մէկ զինուորագրեալ կը կաշկանդուի այս կեանքին գործառնութիւններով, որպէսզի հաճեցնէ իր զօրավարը:

Բ Տիմոթեոս 2:4

Վերջին գլխում մենք դիտարկեցինք երկրի վրա գանձերը և հայտնաբերեցինք, որ Հիսուսը մեզ ասում է, որ չկուտակենք դրանք: Այժմ մենք կդիտարկենք դրական մասը, ուր Հիսուսն ասում է մեզ, որ լավ է երկնքում գանձեր կուտակելը: Ի՞նչ գանձեր կարող է քրիստոնյան կուտակել երկնքում քանի դեռ նա երկրի վրա է: Առաջին հայացքից կարող է թվալ, որ դրանք պետք է հոգևոր բաներ լինեն, այլ ոչ նյութական, սակայն սա չի համապատասխանում նրան, ինչ Հիսուսն ասում է առակում: Նա կիրառում է ցեցի, ժանգի և գողերի միևնույն օրինակները, կարծես թե երկնային գանձերը նույնպես նյութական բաներ են: Ես հավատացած եմ, որ երկնային գանձերը նույնպես նյութական բաներն են: Գիտեմ, որ սա կարող է արտասովոր մեկնաբանություն թվալ, բայց թույլ տվեք փորձել ցույց տալու իմ մտածելակերպը: Կարո՞ղ են արդյոք սերը, խաղաղությունը կամ Սուրբ Հոգու շնորհները ի պահ դրվել՝ հետագա գործածության համար: Չեմ կարծում:

Մենք նոր երկրի վրա հավիտենական կյանքի ժամանակ հոգևոր շնորհների կարիքը չենք ունենա, քանզի Պողոս առաքյալը Ա

Կորնթացիս 13:9-10-ում մեզ ասում է, որ այդ ամենն անցած կլինի, և խաղաղությունը, խնդությունն ու սերը հավիտենականության համար ձեռք են բերվում խաչի վրա Չիսուսի զոհաբերության նկատմամբ հավատքի միջոցով, այլ ոչ որովհետև ինչ-որ մեկը դրանք երկնքում ի պահ է դրել:

Արքայությունը՝ երկրի վրա

Շատ քրիստոնյաներ մոլորված են, քանզի նրանք չեն հասկանում երկնքի արքայության մասին: Չիսուսն ասաց, որ երկնքի արքայությունը տեսանելի չէ, և որ Աստծու արքայությունը մարդու մեջ է: Սրա պատճառն այն է, որ Աստծու ֆիզիկական արքայությունը (հսրայելը) Չիսուսի օրոք ավերված էր ու գտնվում էր հռոմեական տիրապետության տակ: Քանի դեռ հսրայելը թագավոր չունի, երկրի վրա ֆիզիկական Աստծու թագավորություն չի լինի: Մենք Աստվածաշնչից գիտենք, որ Չիսուսը երկրորդ անգամ կգա՝ որպես թագավոր ու կհաստատի երկրի վրա իր թագավորությունը և կիրագործի արքայության մասին բոլոր այն մարգարեությունները, որոնք դեռ պետք է իրագործվեն: Սա ներառում է երկրի վրա խաղաղությունը, առյուծի պառկելը գառան հետ և ոչխարի պես խոտ ուտելը:

Թագավորական գանձեր

Այս գալիք արքայությունն է, ուր մենք պետք է մեր պարգևները, մեր գանձերը ծախսենք, և հավատացած եմ, որ երկինքը հենց այն բանկն է, ուր Աստված դրանք մեզ համար պահում է: Քարոզիչները ուրախությամբ մեջբերում են, որ «չարամիտների հարստությունը պատրաստված է արդարների համար», և իհարկե, սա ճշմարտություն է, բայց հավատացած եմ, որ այս հարստությունը գալիք արքայության համար է, այլ ոչ թե ներկայիս եկեղեցու դարաշրջանի¹:

Հիսուսն ասաց, որ նա հեռանում էր՝ թագավորությունը պատրաստելու ու դրանով վերադառնալու համար: Հովհաննեսի Հայտնություն 22:12-ում ասվում է. *«Ահա՛ շուտով կու գամ, ու վարձատրութիւնս ինձի հետ է՝ իւրաքանչիւրին հատուցանելու իր արարքին համեմատ»*: Ի՞նչ կարգի վարձատրության մասին է նա խոսում: Անկասկած, նյութական ունեցվածքի, որը մենք կուտակել ենք երկնքում:

Քրիստոսի դատաստանը

Տաղանդների առակը Մատթեոսի ավետարանի գլուխ 25-ում մեզ հենց այս իրավիճակը նկարագրում է շատ խորությամբ: Առակն այն համատեքստում է, երբ Հիսուսը պատասխանում է աշակերտների հարցին: Նրանք հարցնում են Հիսուսին. «Ե՞րբ պիտի դարի վերջը գա ու դու վերադառնաս»: Հիսուսն ասաց, որ երբ նա նորից գա, *երկնքի թագավորությունը կնմանվի...* և այնուհետև նա նրանց երեկ առակ է պատմում: Առակներից մեկը տաղանդների (երեք ծառաների) առակն է: Այն ծառայության մասին է, և քրիստոնյաների մեծամասնությունը հավատացած է, թե այս առակում Հիսուսը տերն է, իսկ մենք, նրա որդիները, նրա ծառաներն ենք, որոնք պետք է Քրիստոսի դատաստանի առաջ հաշիվ տան: Սա համամիտ է Պողոս առաքյալի ասածի հետ. *«Որովհետեւ պէտք է որ բոլորս ալ ներկայանանք Քրիստոսի դատարանին առջեւ, որպէսզի իւրաքանչիւրը ստանայ այն բաներուն համեմատ՝ որ իր մարմինին մէջ եղած ատեն ըրած է, բարի կամ չար»* (Բ Կորնթացիս 5:10):

Կրակով փորձություն

Պողոս առաքյալը խոսում է այս դատաստանի մասին ու այն վարձատրության կամ կորստի մասին, որ այն իր հետ կբերի: *«...իւրաքանչիւրին գործը բացայայտ պիտի ըլլայ. քանի որ օրը պիտի*

բացայայտէ, որովհետեւ կրակով պիտի յայտնուի եւ իւրաքանչիւրին գործին ինչպէս ըլլալը կրակը պիտի փորձարկէ: Եթէ մէկուն գործը՝ որ չինած է անոր վրայ՝ մնայ, ինք վարձատրութիւն պիտի ստանայ. եթէ մէկուն գործը այրի՝ պիտի կորսնցնէ, իսկ ինք պիտի փրկուի, սակայն իբր թէ կրակի մէջէն» (Ա Կորնթացիս 3:13-15):

Տաղանդների առակում վարձատրությունը լավ ծառայության համար քաղաքների վրա իշխանությունն ու զորությունն էր: Սա պետք է փոխաբերական դարձվի: Ես նկատել եմ, որ երբ Նոր կտակարանում բարդ բան է ասվում, այդ ժամանակ միտումը դրան փոխաբերական իմաստ տալն է ու հաճախ ակնհայտ ու պարզ ֆիզիկական հետևությունները մերժելը:

Հազարամյա թագավորում

Երանություններում Հիսուսն ասում է, որ հեզերը կժառանգեն երկիրը, ինչը վստահաբար նշանակում է, որ դրա ունեցվածքը նույնպես: Հայտնություն 20:1-6-ում պարզ ասվում է, որ Հիսուսը հազար տարի թագավորելու է, այն բանից հետո, երբ Նեռը չեզոքացվի, և սա համահունչ է Հին կտակարանի մարգարեությունների և Պողոս առաքյալի ուսուցումների հետ՝ ուղղված կորնթացիներին ու թեսալոնիկեցիներին:

Պողոս առաքյալը Տիմոթեոսին ասում է, որ *ովքեր կտառապեն Քրիստոսի հետ, նաև կթագավորեն նրա հետ* (Բ Տիմոթեոս 2:12): Երբ երկինքն ու երկիրը կրակով ավերվի և նոր երկինք ու երկիր ստեղծվի, Հիսուսն այլևս արքա չի լինի, քանզի նա արքայությունը հետ հանձնած կլինի իր Հորը (Ա Կորնթացիս 15:24-28), և մենք կլինենք **Աստծու ընտանիքը** ողջ հավիտենականություն, ու կարիք չի լինի քաղաքական կամ թագավորական կարգի:

Մենք պետք է հիմա պատրաստվենք

Այս բոլոր սուրբ գրությունների միակ հնարավոր հետևողական բացատրությունն այն է, որ Հիսուսը նորից կգա ու կթագավորի այս երկրի վրա՝ իր եկեղեցին վարձատրության ու կորստի համար դատելուց հետո, և որ վարձատրությունները նյութական գանձեր կլինեն, որոնք երկնքում են ի պահ դրված՝ նրանց հաշվին, իր հավատարիմ հարսնացուի համար: Իմաստուն է նա, ով պատրաստվում է ապագային ու ապահով վայրում (երկնքում) հարստություն ունի ի պահ դրված:

Հենց այս մասին էլ Հիսուսը խոսում է իր քարոզում: Մենք ընտրություն ունենք. հարստություն ի պահ դնել՝ այս կյանքում ծախսելու համար, եթե իհարկե ապրենք երկար, կամ էլ հավատքով հարստություն ի պահ դնենք, որպեսզի ծախսենք, երբ Հիսուսը վերադառնա այս երկրի վրա թագավորելու համար:

«Թագավորությունը հիմա» դոկտրինը սկզբունքորեն սխալ չէ. սխալ է ժամանակը, և այդ պատճառով էլ նրանք, ովքեր քարոզում են այդ դոկտրինը, իրականում ազահություն են քարոզում: Այդ դոկտրինը ենթադրում է, թե քրիստոնյաները կարող են այս երկրի վրա թագավորել նախքան Հիսուսի գալուստը՝ որպես իշխող Թագավոր:

Դուք պետք է ինքներդ ընտրեք, թե որտեղ եք դիզում ձեր գանձը, բայց հիշեք, որ որտեղ ձեր գանձն է, **այնտեղ էլ ձեր սիրտը կլինի:** Պողոս առաքյալը Տիմոթեոսին ասում է, որ փախչի նրանցից, որքեր ուսուցանում են, *թե շահավաճառությունը բարեպաշտություն է*, քանզի դա ցույց է տալիս մի ազահ սիրտ, բայց նա նաև ասում է, որ *բարեպաշտությունը ինքնաբավությամբ իսկական շահավաճառություն է* (Ա Տիմոթեոս 6:6): Մեր գանձը կբացահայտի մեր սրտի իրական դիրքը՝ հազեցա՞ծ է այն, թե՞ ազահ:

Գործնական հետևանք

Եթե մենք ընդունում ենք, որ պետք է երկնքում գանձեր դիզենք,

ապա մենք պետք է իմանանք, թե ինչպես դա գործնականում կարող ենք անել: Մի մարդ ասել է, որ երկնքում գանձերը դիզվում են, երբ երկրի վրա դրանցից հրաժարվում են: Առակաց 19:17-ում ասվում է. **«Չքաւորին ողորմողը՝ Տէրոջ փող կու տայ, եւ ինք անոր պիտի հատուցանէ»:**

Քրիստոնյաները գիտեն, որ Աստված ոչ մեկի պարտապանը չէ, և որ իրականում հնարավոր չէ Աստծուց շատ տալ: Բայց նրանց ասվում է, որ այս կյանքում ակնկալեն դա, որպեսզի իրենց դիրքով բարձրանան ու արժանանան մարդկանց գովեստին, որ այդ ամենի հետևանքն է: Սա մուրացիկի մտածելակերպ է, որովհետև մենք կորցնում ենք այն ամենը, ինչով Աստված մեզ օրհնել է մեր մահվան պահին: Բայց եթե մենք այս կյանքում վարձատրություն չենք փնտրում, այլ գանձեր ենք դիզում ապագայի համար՝ մեր իրական թոշակի անցնելու համար, ապա մենք կունենանք գանձեր, որոնք կկարողանանք վայելել, երբ արքայությունը գա:

Թույլ տվեք այս գրքի ամեն մի ընթերցողի խրախուսել, որ հրաժարվեն իրենց կյանքից ու այս աշխարհի ցոփ ու կոտորվող, խամրող ունեցվածքից և ապրեն առանց եսասիրության՝ գալիք արքայության ու այն վարձատրության համար, որ Հիսուսը կբերի նրանց համար:

Ինչպիսի հիանալի միտք է, որ մենք կկիսենք թագավորությունը և դրա ողջ զորությունն ու հարստությունը մեր Տիրոջ ու Փրկչի հետ՝ բարձրաձայն ասելով. **«Այդ մորթուած Գառնուկը արժանի է ընդունելու գօրութիւն, հարստութիւն, իմաստութիւն, ոյժ, պատիւ, փառք եւ օրհնաբանութիւն» (Հայտնություն 5:12):**

*Մեռած աշխարհին, նրա բոլոր խաղերին,
Մին ցոփությանն ու մարող ցնծություններին.
Հիսու՛ս, իմ փա՛ռքը եղիր...*

Չարլզ Ուեալի

Եզումներ

1. Տես Ալեքս Ռոբերթսոնի գիրքը Աստծո թագավորության մասին «Manifesto for a Revolution»՝ տպագրված «Barratt Ministries Publications» կողմից ISBN 0-9528222-2-9:



Գլուխ 4

Մարմնի ճրագը

Մարմինն ճրագը աչքն է. ուրեմն եթէ աչքդ պարզ է, ամբողջ մարմինդ լուսաւոր կ'ըլլայ: Բայց եթէ աչքդ չար է, ամբողջ մարմինդ խաւարամած կ'ըլլայ. ուրեմն եթէ քու մէջդ եղած լոյսը խաւար է, ա՛լ ո՛րքան է այդ խաւարը:

Մատթեոս 6:22-23

Արծաթին համար հալոց կայ, եւ ոսկին համար՝ քուրայ. բայց Տէ՛րն է սիրտերը քննողը:

Առակաց 17:3

Արդյոք որքանո՞վ է լավ բարու ինացութիւնը, երբ Աստված այն արգելում է:

Արթուր Բլրթ

Ո՞վ է կոյր՝ եթէ ոչ իմ ծառաս, կամ խուլ՝ իմ ղրկած պատգամաւորիս պէս. Ո՞վ է կոյր՝ Աստուծոյ նուիրեալին պէս, եւ խուլ՝ Տէրոջ ծառային պէս:

Եսայիա 42:19

Յիսուսը դեռևս գործ ունի ազահ սրտի հետ, երբ խոսում է *մարմնի ճրագի մասին*: Յիսուսը հաճախ է օգտագործում մեր ֆիզիկական մարմինը, որը բոլորս լավ ենք հասկանում, որպեսզի ցույց տա դրան

գուգահեռ հոգևոր կիրառությունը, որ մենք հաճախ չենք հասկանում:

Մարդու աչքը միշտ հակված է դեպի լույսը, քանզի լույսն է մեզ տալիս տեսնելու ունակությունը: Մենք չենք նայում մեր աչքերով, այլ դրանք մեզ հնարավորություն են տալիս տեսնելու այն արտացոլումը, որ ի հայտ է գալիս, երբ լույսն ընկնում է այն առարկայի վրա, որին մենք նայում ենք, որպեսզի մեր ուղեղը կարողանա որոշել այն, ինչն արտացոլվել է:

Հոգու հայելին

Մենք ասում ենք, թե աչքերը «հոգու հայելին են», ինչն Աստվածաշնչից է վերցված, քանզի այն, ինչ մեր աչքերը տեսնում են, ազդում է մեր հոգու վրա, այլ ոչ մեր ուղեղի: Մեր ուղեղը պարզապես մեր աչքերի ու մեր հոգու միջև միջնորդի դեր ունի: Մեր մարմինը գործում է միայն այն պատճառով, որ մեր հոգին որոշում է գործել: Մեր ուղեղը՝ մարմնի բիոլոգիական համակարգիչը, որպես միջնորդ օղակ, գիտի ինչպես արտահայտել մեր զգացմունքները մարմնի միջոցով՝ արտաքին գործողություններով:

Հիսուսն ասում է, որ այն, ինչ մենք տեսնում ենք ու տեսչում, հենց այն է, ինչի նկատմամբ մենք կհակվենք, ու մեր ողջ մարմինը կքաշվի այդ գանձի կողմը: Ահա թե ինչու մենք պետք է զգույշ լինենք, թե որտեղ է մեր գանձը, քանզի անկախ նրանից մենք հասկանում ենք դա, թե ոչ, փաստն այն է, որ այն, ինչ հաճո է մեր աչքին, կգրավի մեր սիրտն ու կորոշի մեր վարձատրությունը կամ կորուստը, երբ Հիսուսը նորից գա իր եկեղեցին դատելու:

Սատանան մեզ լույս է առաջարկում

Քրիստոնյաների համատարած սխալն է հավատալը, թե Աստված մեզ լույս է առաջարկում, իսկ Սատանան՝ մթություն: Սատանան միշտ

Էլ մեզ լուսավորում է առաջարկում, և ինչպես Աստվածաշունչն է ասում, *Նա կերպարանափոխվում է լույսի հրեշտակի*: Արուսյակ (Լյուցիֆեր), որ հավատացած եմ Նեռն է (Սատանան՝ մարմնավորված) նշանակում է «փայլող», և նա կմոլորեցնի ողջ աշխարհն իր լուսավորչությամբ:

Բոլոր գաղտնի, միստիկական կրոնները, հումանիզմը, վիոլությունն ու օկուլտիզմը, առաջարկում են թաքնված իմաստությունն ու լուսավորում, այլ ոչ միություն: Եվան հակվեց բարու ու չարի գաղտնի իմացության նկատմամբ: Նա ազահորեն տենչաց հայտնությանն ու չինազանդվեց Աստծուն, որպեսզի հասնի դրան: Նրա ճրագը միությունն դառավ, ինչը տեղի կունենա մեզ հետ, եթե մենք սխալ գանձի կողմը հակվենք:

Կեղծ լույս

18-րդ դարի լուսավորչությունը, չնայած նրան, որ մահացած է հայտարարվել շատերի կողմից, առավել կենդանի երբեք չի եղել: Հավասարության ու իրավունքների մեր ժամանակակից մոտեցումն իր ծագմամբ պարտական է այս կեղծ լույսին: ԱՄՆ-ի Ազատության արձանը հեթանոս աստվածությունն է, որ նվիրել է Ֆրանսիան, և ունի հետևյալ փորագրումը. «Ազատություն, որ լուսավորում է աշխարհը»: Հենց ԱՄՆ-ի սահմանադրությունը, չնայած նրան, որ քողարկված է կրոնական բառապաշարով, իր հիմքով հումանիստական փաստաթուղթ է: Ջեֆերսոնը Ֆրանսիայում էր ժամանակ անցկացրել, և նրա վրա մեծ ազդեցություն էին ունեցել լուսավորչական փիլիսոփայությունները:

Միգուցե մենք քիչ ավելին հասկանանք, թե ինչու է Հիսուսն այդքան արմատական հայտարարություն անում. *Եթե աչքդ գայթակղեցնում է քեզ, հանի՛ր այն* (նա շնանալու մասին է խոսում), կամ Էլ թե ինչու է Հովհաննես առաքյալն այդպես խոսում աշխարհի ու դրա իմաստության մասին. *«...Որովհետև ամեն ինչ որ աշխարհի մեջ է՝ մարմինի ցանկութիւնը, աչքերու ցանկութիւնը եւ այս կեանքին ամբարտաւանութիւնը՝ Հօրմէն չէ, հապա այս աշխարհէն է»* (Ա Հովհաննես 2:16):

Տեսնելը դեռ հավատալ չէ

Դժվար է ազահ լինել՝ առանց պատկերի: Մենք մի աշխարհում ենք ապրում, ուր պատկերն ու պատկերները գերակշռող են մեր կյանքում: Պատահական չէ, որ Հիսուսը **խոսքն էր** մարմին դարձած, այլ ոչ պատկեր (կերպար):

Պատկերը շատ խաբուսիկ է, և տեսնելը դեռ հավատալ չէ: Հեռուստատեսությունն ամենամոլորեցնող միջնորդն է, որ աշխարհը երբևէ իմացել է, և չնայած նրան, որ այն կարող է լավ բանի համար օգտագործվել, վնասը, որ այն հասցնում է իր անբաժանելի մասը կազմող մոլորեցնող գործընթացների միջոցով, շատ ավելի ծանր է կշռում քան դրա արած շատ փոքր լավը: Եթե սա միամիտ է հնչում, ես ձեզ խորհուրդ եմ տալիս կարդալ վաղամեռիկ Մալքոլմ Մագերիջի գիրքը, ով ինքը հանրային լրատվամիջոցների մարդ էր: Նա այս նյութի վերաբերյալ խիստ համոզիչ փաստարկներ է բերում¹:

Մատթեոս 6:22-ում Հիսուսն ասում է, որ *եթե աչքդ պարզ է, ամբողջ մարմինդ լուսավոր կլինի*: Պարզ (բառացի՝ ոչ երկակի) նշանակում է շիտակ, կենտրոնացած, և հավատացած եմ, որ սա հաջող բառ է, քանզի Դրախտի այգում երկու ծառ կար՝ պարզ (ոչ երկակի) ծառը և երկակի ծառը: Թույլ տվեք բացատրել. **կենսաց** ծառն այն ծառն էր, որից Եվան պիտի ուտեր և այն միայն մի պտուղ էր տալիս՝ կյանք: Եթե նա միայն ուտեր այդ ծառից, նրա մարմինը լուսավոր կլիներ:

Պա՞րզ, թե՞ երկակի ծառը

Եվան, սակայն, ճաշակեց **բարու և չարի** իմացության ծառից, այն է՝ երկակի ծառից, և անմիջապես պարուրվեց ու կուրացավ մթությանմբ: Հիսուսը համար 23-ում ասում է. *«Բայց եթե աչքդ չար է, ամբողջ մարմինդ խաւարամած կ'ըլլայ...»*: Եվան տենչաց թաքնված իմաստությունը. Բարին ու չարը գիտենալու և ընտրելու լուսավորչությունը, և նա ողջ արարչությունը ներքաշեց հոգևոր

կուրության ու մթության մեջ:

Քանի-քանի բարի հոգևոր սպասավորներ, որոնց Աստված օրհնել է գերբնական ու բնական շնորհներով, վազում են Բաղաամի մոլոր ուղիով, երբ **տեսնում են** այն արդյունքներն ու առավելությունները, որ շնորհները բերում են: Ազահությունը ժամանակակից քրիստոնեության մեծ մասի անեծքն է:

Հիսուսն իր քարոզում մի նշանակալից հայտարարություն է անում, որ *եթե քո մեջ եղած լույսը* (և նա խոսում է աշակերտների, այլ ոչ բազմությունների հետ) *խավար է, էլ որքան է այդ խավարը*: Արդյոք հնարավոր է, որ Աստծու զավակը խավարի մեջ ընթանա: Այո՛, շատ հնարավոր է, և ավելի հեշտ, քան կարող ենք պատկերացնել: Հովհաննես առաքյալն ասում է, որ եթե մենք ատում ենք մեր եղբորը (և նա նույնպես քրիստոնյաներին է գրում), ապա մենք խավարի մեջ ենք ընթանում ու կուրացել ենք: *«Բայց ա՛ն որ կ'ատէ իր եղբայրը՝ խաւարի մէջ է, խաւարի մէջ կը քալէ եւ չի գիտէր թէ ո՛ւր կ'երթայ, որովհետեւ խաւարը կուրցուցած է իր աչքերը»* (Ա Հովհաննես 2:11):

Լույսի մեջ, բայց խավարում քայլող

Հիսուսի օրոք այս դասին էին պատկանում փարիսեցիները: Նրանք Աստծու ժողովուրդն էին, բայց նրանց ազահությունն իրենց կուրացրել էր, և քանի որ նրանք առաջնորդներ էին, Հիսուսն ասաց, որ *նրանք կույր էին ու կույրերի առաջնորդներ* (Մատթեոս 15:14):

Վստահաբար, մեր օրերի այն քարոզիչները, ովքեր ուսուցանում են քրիստոնյաներին տենչալ հարստություն, հանրաճանաչություն ու ապահովություն այս աշխարհում, ոչնչով նրանցից չեն տարբերվում: Այս ուսուցիչները գիտեն լույսը, սակայն քայլում են խավարի մեջ, որովհետև նրանց աչքը պարզ (ոչ-երկակի) չէ, իսկ նրանց գանձերը բոլորը երկրի վրա են: Հիսուսն ասաց, որ երբ կույրը կույրին առաջնորդում է, *երկուսն էլ փոսն են ընկնում*:

Հիսուսի այս մեղադրանքի համատեքստը հետաքրքիր է, քանզի

այն տրվում է ի պատասխան փարիսեցիների քննադատության: Նրանք ասում էին, թե Հիսուսն իր ձեռքերն ուտելուց առաջ չէր լվացել, ինչն ավագների ավանդույթին հակասում էր: Հիսուսն էլ ասաց, որ այն ինչ բերանն է մտնում, չի ապականում մարդուն, քանզի մարմինը կարող է թույլները դուրս հանել և նյութափոխանակության միջոցով հեռացնել աղբը:

Սատանային մեր սիրտն ուղիղ հասանելի չէ

Ցավոք սրտի, մարդու սիրտը նյութափոխանակություն չունի, և այն ինչ ներս է գնում զգայարանների միջոցով, **հիմնականում աչքերի** և ականջների, ապականում է սիրտն ու ավելի ուշ դուրս գալիս բերանից: Աչքերի ցանկությունն այնքան քրիստոնյաների է ապականել, և չնայած նրանք հայտնություն են ստացել, այն է՝ փրկության լույսը, նրանք կուրացել են: *Նրանք խավարի մեջ են քայլում և չգիտեն, թե ուր են գնում:*

Հավատացած եմ, որ մոլորեցնողը՝ Սատանան, ուղղակիորեն չի կարող հասնել մարդկանց սրտին, որի համար էլ պետք է մեզ գայթակղի մեր զգայարանների միջոցով ու ցույց տա արգելված պտուղը: Երբ մենք ուտում ենք այդ պտուղը, մեր սիրտը մթազնում է:

Սատանան Հիսուսին ազահություն և առաջարկեց

Հիսուսին անապատում փորձության ենթարկելիս Սատանան նրան **ցույց տվեց այս աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը:** Նա Հիսուսին ազահություն էր առաջարկում: Նա ցանկանում էր, որ Հիսուսը փափագեր ու ստանար դրանք խաչից առաջ: Նա թագավորությունն առաջարկում էր առանց տառապանքի, ճիշտ այնպես, ինչպես շատերը ներկա դարձնում առաջարկում են թագն առանց

խաչի:

Փա՛նք Աստծու, որ Հիսուսը մաքուր աչք ուներ և իր երեսը գայլախագի պես կարծրացրեց՝ քայլելով դեպի խաչը: Նա անկասկած գիտեր, որ ստանալու էր աշխարհի թագավորությունները՝ որպես իր ժառանգություն, երբ երկրորդ անգամ վերադառնար այս մոլորակ:

Բերանը դավաճանում է սիրտը

Ես պետք է զգուշացնեմ բոլոր քրիստոնյաներին, որ վաղ թե ուշ մեր աչքերն ազդելու են մեր սրտի վրա, և միայն երկու ուղղություն կա, ուր մեր աչքերը կարող են նայել. գանձեր երկրի վրա՝ ազահություն, կամ էլ գանձեր երկնքում՝ հազեցածություն, և վաղ թե ուշ մեր բերանը կդավաճանի այն, ինչ մեր սրտում է: *«...քանի որ իւրաքանչիւր ծառ կը ճանաչցուի իր պտուղէն: Որովհետեւ փուշերէն թուղ չեն քաղեր, ու մորենիէն խաղող չեն կթեր: Բարի մարդը՝ բարութիւն կը բխեցնէ իր սիրտին բարի գանձէն, իսկ չար մարդը՝ չարիք կը բխեցնէ իր սիրտին չար գանձէն. քանի բերանը կը խօսի սիրտին լիութենէն»* (Ղուկաս 6:44-45):

Նշումներ

1.Մալքոլմ Մազերիջ, «Christ and the Media», Hodder and Stoughton: Հրատարակված 1979-ին, ISBN 0 340 23261 7



Գլուխ 5

Աստված, թե մամոնան

*Ոչ մեկը կրնայ ծառայել երկու տիրոջ.
որովհետեւ կա՛մ պիտի ասէ մեկը եւ սիրէ
միւսը, կա՛մ պիտի յարի մեկուն ու արհամարհէ
միւսը: Չեք կրնար ծառայել Աստուծոյ եւ
մամոնային:*

Մատթեոս 6:24

*Ուրեմն հպատակեցէ՛ք Աստուծոյ: Դիմադրեցէ՛ք
Չարախօսին, եւ ան պիտի փախչի ձեզմէ:*

Հակոբոս 4:7

Մատթեոս 6:24-ը սկսում է նոր պարբերությամբ և մի պարզ պնդմամբ. *Ոչ մեկը չի կարող ծառայել երկու տիրոջ*: Սա ակնհայտ պնդում է, և ոչ մի խելամիտ անձնավորություն չի հակասի սրան: Հիսուսը նաև ասում է, որ եթե մենք մեկին սիրենք, ապա կատենք մյուսին, և եթե մեկին հարենք, ապա կարհամարհենք մյուսին: Կրկին, սա խելամիտ է, քանզի մի տիրոջ նկատմամբ խորությունը կնվազեցնի մյուսի նկատմամբ եղածը: Հիսուսի պնդման անակնկալը տերերի ընտրությունն է: Ես հաճախ եմ մտածում, թե ինչու է Հիսուսն ասում, որ *չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային*: (Մամոնան արամերեն ծագում ունեցող բառ է, որ նշանակում է ինքնավստահություն, այն է՝ մարմնացած հարստություն):

Ես միշտ հավատացած եմ եղել, թե այն երկու տիրոջը, որ մեկը կարող է ծառայել, պետք է լինի Աստված և Սատանան: Սակայն ես որևէ սուրբ գրություն չեմ կարող գտնել, որ քրիստոնյային այս երկու

տարբերակն առաջարկի և որի մասին Յիսուսը խոսի: Լեռան քարոզն ուսումնասիրելուց հետո ես կարող եմ հասկանալ, թե ինչու է Յիսուսն ասում, որ մենք ծառայում ենք Աստծուն կամ մամոնային, քանզի այն պայքարը, որ ես, որպես քրիստոնյա ունեմ, ոչ թե սատանայի հետ է, այլ իմ անձի:

Փրկված, բայց մամոնային ծառայող

Եվայի խնդիրը Դրախտի այգում այն էր, որ նա ցանկանում էր և ազահորեն տեսչում այն, ինչ սատանան նրան առաջարկեց: Սատանան որևէ այլ ուժ չունի, բացի մեզ փորձությունների ենթարկելը: Նա մեզ «յուդալի պատառներ» է առաջարկում: Խնդիրն այն է, որ մենք բոլորս էլ սիրում ենք «յուդալի պատառներ» և դրանք վերցնելով մեղք ենք գործում, *որովհետև հրապուրվում ու խաբվում ենք **մեր ցանկությունով*** (Յակոբոս 1:14): Մենք ընտրություն ունենք Աստծու կամքի և մեր ցանկության միջև, այն է՝ ազահության: Ընտրությունն է՝ Աստված կամ մամոնան: Ազատագրված քրիստոնյան չի կարող ուղղակիորեն Սատանային ծառայել, բայց կարող է մամոնային ծառայել: Նա կարող է ծառայել աշխարհի բարիքներին, իր սեփական կյանքին ու ապահովությանը, և դեռ հավատքով փրկություն ունենալ:

Փողի սերը

Ես նկարահանել եմ վարդապետության մի շարք՝ «Բաբելոնի 6000 տարիները» թեմայով և պատրաստվում եմ այդ թեմայով գիրք գրել՝ Լեռան քարոզն ավարտելուց հետո: Այս վարդապետություններում ես ցույց եմ տալիս, որ աշխարհի համակարգը, որ բաղկացած է քաղաքականությունից, մշակույթից ու գոռոզությունից, լիովին հիմնված է փողի սիրո վրա: Սատանան հարստությունը կիրառել է ողջ աշխարհը Բաբելոնի համակարգի մեջ մոլորեցնելու համար: Կարդացե՛ք

Չայտնություն 18:10-19-ը, որտեղ Չովհաննես առաքյալն իր տեսիլքում տեսնում է Բաբելոնի տապալումը: Սա ողջ մշակույթի ու քաղաքականության տապալումն է, բայց ամենից ի վեր՝ առևտրի և հարստության, որ այս աշխարհը տեսչում է, և այն ուժը, որ այն տալիս է քաղաքականությանն ու մշակույթին: Մտքում հենց սա ունենալով էլ Չիսուսը մեզ այս հետևությունն է տալիս, ինչը նաև ազահությունից զատ ապրելու ճանապարհ է: Մենք հետագա գլուխներում կդիտարկենք այս կենսակերպը:



ԳԼՈՒԽ 6

Քո՞ կյանքը, թե՞ նրանը

Ուստի կը յայտարարեմ ձեզի. «Մի՛ մտահոգուիք ձեր անձին մասին՝ թէ ի՞նչ պիտի ուտէք կամ ի՞նչ պիտի խմէք, ո՛չ ալ ձեր մարմիններուն մասին՝ թէ ի՞նչ պիտի հագնիք. միթէ անձը աւելի չէ՞ կերակուրէն, ու մարմինը՝ հագուստէն»:

Մատթեոս 6:25

Ապա ըսաւ անոնց. «Ուշադիր եղէք եւ զգուշացէ՛ք ազահուլթենէ. որովհետեւ մէկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չի իր կեանքը»:

Ղուկաս 12:15

Քրիստոսի հետ խաչուեցայ. սակայն կ'ապրի՛մ, բայց ա՛լ ո՛չ թէ ես՝ հապա Քրիստո՛ս կ'ապրի իմ մէջս: Իսկ այն կեանքը որ հիմա մարմինովս կ'ապրիմ՝ Աստուծոյ Որդիին հաւատքով կ'ապրիմ, որ սիրեց զիս եւ ինքզինք ընծայեց ինձի համար:

Գաղատացիս 2:20

Աստծու և մամոնայի մասին իր հայտարարությունից հետո Չիսուսը դեռ փորձում է մերկացնել մեր ազահուլթյունը, բայց նա արմատներից (մեր սրտից) շարժվում է դեպի մեր միտքը, այն է՝ մեր

գիտակից մտածողությունը: Մեր մտքի հենց այս հատվածում է, որ հնարավոր է սկսել փոփոխությունը: Աստված չի կարող փոխել մեր ազահ սիրտը քանի դեռ մենք չենք փոխել մեր գիտակից մտածողությունը և պատրաստ չենք նորացնելու մեր միտքն ու վերաբերմունքը:

Ես այս ամենի մասին արդեն խոսել եմ այս շարքի առաջին գրքում՝ «Կարո՞ղ եմ արդյոք իրական քրիստոնյաները ոտքի կանգնել», որտեղ ես բացատրում եմ մեր սրտի ու մտքի միջև եղած տարբերությունը և այն, որ յուրաքանչյուր նոր բան լավ սովորելու համար անհրաժեշտ է կրկնություն¹:

Ուղեղի լվացում՝ համաձայնություն

Ուղեղը լվանալու (ինչը չարիք է) և միտքը նորացնելու (ինչը բարի է) միջև միակ տարբերությունն այն է, որ ուղեղի լվանալն առանց մեր համաձայնության է ու ստիպում է այն, ինչին մենք չենք ուզում հավատալ, իսկ միտքը նորացնելը գիտակից որոշում է՝ փոխելու մեր մտածելակերպը կրկնության միջոցով և արդեն հայտնի հետևանքներով:

Գլուխ 6-ի մնացած մասում Յիսուսն այժմ մեզ ասում է, թե ինչպես պետք է մեր գիտակից մտածելակերպով տարբեր կերպ մտածենք: Նա ասում է, որ մենք պետք է անհոգ լինենք, այն է՝ չմտահոգվենք, չանհանգստանանք: Նա խոսում է հինգ բանի մասին, որոնք մեր գոյության համար առաջին անհրաժեշտությունն են և որոնց համար մենք չպետք է մտահոգվենք. անձ (կյանք), սնունդ, խմիչք, հագուստ և ապագա:

Առաջինը նա խոսում է անձի (կյանքի) մասին, որը մենք հիմա կդիտարկենք:

Յիսուսի նման մտածելը

Երբ Յիսուսն ասում է. *մի՛ մտահոգվոր կյանքիդ* (անձիդ) համար, նա ի նկատի չունի մեր ֆիզիկական կյանքը կամ գոյությունը, քանզի մենք մշտապես պետք է մտածենք ու պլանավորենք: Եթե ես սնունդ չգնեմ, ուրեմն խոհանոցի դարակները դատարկ կլինեն, իսկ Աստված չի ցանկանում ամեն օր հրաշք գործել մեզ կերակրելու համար, երբ ինքներս կարող ենք պլանավորել: Եթե ես չպլանավորեմ մեքենայիս մեջ բենզին լցնել, ապա որոշակի պահի կկանգնեմ, ու չեմ կարող հավատալ, թե Աստված իմ ծուլության կամ պլանավորման պակասի համար կցանկանա հրաշքներ գործել: Ուրեմն ո՞ր կյանքի մասին է խոսում Յիսուսը: Դա **իմ** կյանքն է, այն կյանքը, որ **ես** եմ ուզում, ընտրելու իրավունքը, թե **ես** ինչ եմ անում ու **ես** ուր եմ գնում, և ինչպես եմ ես ապրում: Միգուցե **իմ կենսակերպը** ավելի հեշտ կլիներ հասկանալ: Վերջին հաշվով դա **իմ անկախությունն է**:

Մենք այժմ կդիտարկենք ազահ կյանքը, այն կյանքը, որ ապրում է մամոնայի համար: Յիսուսը մեզ պատվիրում է կենտրոնանալ ու մտածել մեր մեջ Քրիստոսի կյանքի մասին, այլ կերպ ասած՝ Լեռան քարոզի կենսակերպի, երանությունների կենսակերպի, մերձավորին սիրելու՝ փոխարենը ինքներս մեզ սիրելու կենսակերպի մասին:

Սա իմ կյանքն է

Մարկոս 8:35-ում Յիսուսն ասում է, որ եթե մենք փորձենք փրկել մեր կյանքը, կկորցնենք այն: Եթե ես հետապնդեմ այն ամենը, ինչի հետևից աշխարհն է ընկած, ինչը, ըստ Յիսուսի, այն հինգ բաներն են, որ ես արդեն նշել եմ (անկախություն, խմիչք, սնունդ, հագուստ և ապագա), ապա մենք կկորցնենք Քրիստոսի կյանքը: Բայց եթե մենք պատրաստ ենք կորցնելու մեր կյանքն ու փնտրելու Աստծու թագավորության կենսակերպը, ապա մենք կշահենք Քրիստոսի կյանքը: Յիսուսն ասում է. *«Որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի*

կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի համար, պիտի գտնէ զայն: Քանի որ մարդ ի՞նչ օգուտ կ'ունենայ, եթէ շահի ամբողջ աշխարհը, բայց կորսնցնէ իր անձը. կամ՝ մարդ ի՞նչ փրկանք պիտի տայ իր անձին փոխարէն» (Մատթեոս 16:25-26):

Ինչպիսի՛ մարտահրավեր է սա ավետարանի ցանկացած հոգևոր սպասավորի համար, ով ուսուցանում է, թե շահավաճառությունը բարեպաշտություն է: Արդյոք ի՞նչ արժեք պիտի ունենա ողջ աշխարհի գանձերը շահելը, եթե այն պետք է ապականի (և դա միշտ տեղի կունենա, եթե **մենք** դրանց հետևից ենք ընկած) Քրիստոսի կյանքը: Աստծու ուղին այն է, որ մենք մեջքով դառնանք այս կյանքի ունեցվածքին ու դիրքին և փնտրենք Աստծու արքայությունն ու նրա արդարությունը, և այն ամենը, ինչի կարիք մենք ունենք, այն է՝ սնունդ, խմիչք և հագուստ, պիտի տրվի մեզ, քանզի *մեր երկնային Յայրը գիտի, որ մենք դրանց կարիքն ունենք՝ նախքան անգամ դրանք կ'իսկողենք:*

Պողոս առաքյալը հասկանում էր, որ ժամանակի որոշակի պահին հնարավոր է միայն մի կյանքին ծառայել, և կորնթացի քրիստոնյաներին գրելով՝ ասում է, որ իր եսասեր մարմնական կյանքն ու դրա բոլոր հետևանքները պետք է մեռնեն, որպեսզի **Քրիստոսի կյանքը** տեսանելի դառնա իր մահկանացու մարմնում: Մենք միայն մի մարմին ունենք, բայց այդ մարմնի միջոցով կարող է ի հայտ գալ երկու կյանք՝ մեր կյանքը, կամ Քրիստոսի կյանքը: Այն կյանքը, որ կարտահայտվի մեր մարմնում, կլինի մյուսի մահվան հաշվին: Եթե Յիսուսն է արտահայտվում, ուրեմն Ադամը մահանում է: Եթե ես եմ ապրում, ուրեմն Քրիստոսն է մեռնում: Միաժամանակ միայն մեկը կարող է իշխել:

«Ամէն ատեն Յիսուսի մահը կը կրենք մեր մարմինին մէջ, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնաբերուի մեր մարմինին մէջ: Որովհետեւ մենք որ կ'ապրինք՝ ամէն ատեն Յիսուսի համար մահուան կը մատնուինք, որպէսզի Յիսուսի կեանքն ալ յայտնաբերուի մեր մահկանացու մարմինին մէջ» (Բ Կորնթացիա 4:10):

Հավատքով ապրելը

Գաղատացի քրիստոնյաներին Պողոս առաքյալը կրկնում է այս սկզբունքը, որ մի կյանքը պետք է մեռնի, որպեսզի մյուսը հայտնաբերվի մեր մարմիններում: Նա ասում է, որ խաչված է Քրիստոսի հետ: Ակնհայտ է, որ Պողոս առաքյալը ֆիզիկական մահվան մասին չի խոսում, այլ իր հին եուֆյան մահվան, որը տենչում է ծառայելու մամոնային: Նա պնդում է, որ այն կյանքը, որ ինքը հիմա ապրում է իր մարմնում, այլևս իրենը չէ. նա այժմ ապրում է **Աստծու որդու հավատքով**: Իր բնական մարմնի միջոցով մեկ այլ կյանք է այժմ արտահայտվում:

Ես ինքս չեմ կարող ապրել քրիստոնյա կյանքը: Եթե եսը ապրի Քրիստոսի կյանքը, դա կլինի ինքնարդարություն՝ կեղծավորություն, բայց մենք կարող ենք մեռնել մեր կյանքին, որպեսզի թույլ տանք, որ Քրիստոսն ապրի մեր միջոցով: Քրիստոսը ձեր մեջ, փառքի հույսը (Կողոսացիս 1:27): Աստվածաշնչի ժամանակակից տարբերակներն ասում են, թե Պողոս առաքյալն ապրում է հավատքով՝ **առ Աստծու որդին, սակայն սա սխալ է**: Ինչպե՞ս կարող է մեռած մարդը հավատք ունենալ: Ոչ թե **Պողոս առաքյալի հավատքը** առ Աստված, այլ **Աստծու հավատքն** է հայտնաբերվում Պողոս առաքյալի միջով, որը ճիշտ հակառակն է: *«Քրիստոսի հետ խաչուեցայ. սակայն կ'ապրի՛մ, բայց ա՛լ ո՛չ թէ ես՝ հապա Քրիստո՛ս կ'ապրի իմ մեջս: Իսկ այն կեանքը որ հիմա մարմինովս կ'ապրի՛մ՝ Աստուծոյ Որդիին հաւատքով կ'ապրի՛մ, որ սիրեց զիս եւ ինքզինք ընծայեց ինծի համար»* (Գաղատացիս 2:20):

Կենաց խոսքը

Հովհաննես առաքյալը նույնպես գրում է քրիստոնյաներին՝ հավաստելու, որ Հիսուսն ինքը երբեք իր սեփական կյանքը չի արտահայտել, այն է՝ այն կյանքը, որ ինքը Ադամից էր ժառանգել: Հիսուսը *փորձության ենթարկվեց ամեն կերպ, ինչպես մենք,*

ապացուցելով, որ նրա համար հնարավոր կլիներ իր սեփական կամքը կատարելը՝ իր Յոր կամքը կատարելու փոխարեն: Յովհաննես առաքյալն ասում է, որ նա իրականում շոշափել է Յիսուսի մահկանացու մարմինն ու *Նրա ձեռքերը շոշափեցին Աստծու խոսքը*: Միակ կյանքը, որ Յիսուսն արտահայտեց, հավիտենական կյանքն էր ու իր Յոր եռթյունը:

«Կեանքի Ոսպին մասին - որ սկզբէն էր, որ մենք լսեցինք, որ մեր աչքերով տեսանք, որ դիտեցինք ու մեր ձեռքերը շոշափեցին. (արդարեւ կեանքը յայտնուեցաւ, մենք տեսանք զայն, եւ կը վկայենք ու կը պատմենք ձեզի այդ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը քով էր եւ յայտնուեցաւ մեզի)» (Ա Հովհաննէս 1:1-2):

Յարուստ երիտասարդ կառավարիչը

Այս երկու կյանքերի ու սեփական կյանքի նկատմամբ մահանալու մի իրական վառ օրինակ է հարուստ երիտասարդ կառավարիչը, որը ցանկանում էր հավիտենական կյանք ունենար, բայց **չէր ցանկանում այս կյանքում մահանալ իր անձի համար**: Երբ նա հարցրեց, թե ինչ պետք է աներ, որպեսզի հավիտենական կյանք ունենար, Յիսուսը նրան պատասխանեց, իսկ նա էլ ասաց, որ այդ պահանջները բավարարել էր: Այնուհետև երիտասարդը հարցրեց, թե էլ ինչի պակաս ուներ, և Յիսուսն ասաց. *Եթե ուզում ես կատարյալ լինել...* Սա տարբերվում է հավիտենական կյանքից, սա այն կատարելությունն է, որի մասին Յիսուսը խոսում է Մատթեոսի ավետարանի գլուխ 5-ի վերջում, որը մենք դիտարկել ենք այս շարքի 3-րդ հատորում²: Յիսուսը նրան ասաց, որ վաճառի իր ունեցվածքը ու բաժանի աղքատներին և հետևի ոչ թե իր կարիերային, տենչանքներին կամ ապահովություններին, այլ ուրանա այդ ամենն ու հետևի Յիսուսին, և այդ դեպքում երկնքում գանձեր կունենա: Նա կփոխեր այն կյանքը, որ իր ֆիզիկական մարմնում էր հայնաբերվում, և կփառավորեր Աստծուն իր ֆիզիկական մարմնում, փոխարենը իր սեփական կյանքն ու փառքը: Նա չկարողացավ դա անել:

Այս երիտասարդի համար գինը շատ բարձր էր, և միևնույնը տեղի է ունենում այսօր շատ քրիստոնյաների հետ: Նրանք հավիտենական կյանք ունեն հավատքով, բայց չեն ցանկանում կատարյալ լինել: Չկան շատ քրիստոնյաներ, որոնք պատրաստ են մահանալ իրենց անձի համար, որպեսզի Աստված կարողանա իր կյանքն ապրել նրանց մարմիններում: Բայց սա է իրական աշակերտությունը. ես պետք է մահանամ, որպեսզի Քրիստոսը կարողանա ապրել իմ միջոցով ու իմ մեջ:

Ո՞րն է Հիսուսի այս՝ մեր անձի մասին անհոգ լինելու ցուցման եզրահանգումը: Վստահաբար, սրա համար մտածելակերպի փոփոխություն է պահանջվում, մեր մտքերի շարքի նորացում: Թույլ տվեք առաջարկել, որ եթե դուք լրջորեն հետապնդում եք սուրբ լինելը, ուրեմն սկսեք պրակտիկ կերպով, ու ավելի քիչ մտածեք այն ամենի մասին, ինչ դուք եք ցանկանում ձեր կյանքից, ու մտածեք ավելի շատ Քրիստոսի կյանքի մասին, ու թե ինչ է նա ցանկանում ձեր կյանքում անել՝ ինչպես ամփոփված է երանություններում:

Ինքների ձեզ մի նյարդայնացրեք

Սա նշանակում է, որ դուք միգուցե պետք է դադարեք ինքների ձեզ գայթակղելով այն բաներով, որ երբեք չեք կարող ձեզ թույլ տալ: Նորաձևության ու նիհարելու վերաբերյալ ամսագրերը կանանց ազահ են դարձնում: Մեքենաների և սպորտի վերաբերյալ ամսագրերը կարող են միևնույն կերպ ազդել տղամարդկանց վրա:

Ես լեգալիստական մոտեցում չեմ առաջարկում, այլ պարզապես խորհուրդ եմ տալիս մտածել այն բաների մասին, որոնք ձեզ ավելի շատ են Քրիստոսին նմանեցնում, այլ ոչ այն բաների, որոնք ձեզ ավելի շատ են ստիպում մտածել միջին մարդու պես, և որոնք երես են տալիս **իմ կյանքին**, փոխարենը առաջ քաշելու **Քրիստոսի կյանքը**:

Այս պարզ օրինակները պարզապես օրինակներ են, և դուք ինքների պետք է որոշեք, թե ձեր կյանքում ինչն է հաճոյացնում ձեր

եսին, փոխարենը այն մեռցնելու: Որպես քրիստոնյա դուք ծառայում եք կամ ձեր սեփական անձին՝ ազահուությանը, կամ էլ Քրիստոսի անձին՝ հազեցվածությանը: Այս երկու անձերից մեկը, ըստ Հիսուսի, ձեր տերն է:

Նշումներ

- 1. Հատոր 1-ին՝ «Կարո՞ղ եմ արդյոք հրական քրիստոնյաները ոտքի կանգնել», գլուխ 15՝ «Ամենը ինչ մտքում է», էջ 133: Հրատարակված Barratt Ministries Publications-ի կողմից: 2. Հատոր 3-րդ՝ «Օրնքի իրագործումը», գլուխ 19՝ «Քրիստոնյա կատարելություն», էջ 125. Հրատարակված Barratt Ministries Publications-ի կողմից:*



Գլուխ 7

Կե՛ր, խմի՛ր եվ զվարճացի՛ր

Ուստի կը յայտարարեմ ձեզի. «Մի՛ մտահոգուիք ձեր անձին մասին՝ թէ ի՞նչ պիտի ուտէք կամ ի՞նչ պիտի խմէք, ո՛չ ալ ձեր մարմիններուն մասին՝ թէ ի՞նչ պիտի հագնիք. միթէ անձը աւելի չէ՞ կերակուրէն, ու մարմինը՝ հագուստէն: Նայեցէ՛ք երկինքի թռչուններուն, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, ո՛չ ալ կը ժողվեն ամբարի մէջ. բայց ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք: Դուք աւելի չէ՞ք արժեր անոնցմէ: ... Ուրեմն մի՛ մտահոգուիք՝ ըսելով. «Ի՞նչ պիտի ուտենք», կամ «Ի՞նչ պիտի խմենք», կամ «Ի՞նչ պիտի հագնինք» (քանի որ հեթանոսները կը փնտոեն այդ բոլոր բաները). որովհետեւ ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ այդ բոլոր բաները պէտք են ձեզի»:

Մատթեոս 6:25-32

Քրիստոնէությունը խոստանում է մարդկանց սպաստ դարձնել. այն երբեք չի խոստանում նրանց անկախ դարձնել:

Ուղյտեր Ռալֆ Ինգ

Մենք այժմ դիտարկում ենք մեկ այլ ոլորտ, որի մասին Հիսուսն ասում է, որ չմտահոգվենք. կերակուր և հագուստ: Նա ասում է, որ

դրանք չպետք է մեզ համար կարևոր լինեն: Հակառակ դեպքում մենք ազահ ենք դառնում ու վտանգում ենք Քրիստոսի կյանքը կորցնելը: Մենք փնտրում ենք այն բաները, որոնք փնտրում են նաև մարդիկ, ովքեր չունեն Յիսուսի կյանքը:

Նախքան մարդկության այս հիմնական կարիքները քննարկելը, ցանկանում եմ ձեզ Աստվածաշնչից մեկ այլ օրինակ բերել, որը ցույց է տալիս, թե Աստված ինչպես է սահմանում դատաստանի նախադեպը, երբ այն առաջին անգամ ի հայտ է գալիս: Ես Աստվածաշնչից երեք կանանց եմ օգտագործելու սա ցույց տալու համար:

Եվան՝ առաջին կինը

Առաջին անգամ, երբ ազահությունն ի հայտ եկավ, Եվայի՝ առաջին կնոջ միջոցով էր: Նա տեսավ ծառը, որը **ցանկալի էր** (Ծննդոց 3:6): Նա անկախություն էր ցանկանում Աստծու պատվիրաններից, որպեսզի ընտրի իր սեփական բարոյականությունը, այն է՝ բարու և չարի իմացությունը: Աստված դրա հետ հաշիվները միանգամից պարզեց և Ադամին ու Եվային արգելեց ուտել Կենաց ծառից, որովհետև նրանք սխալ ծառն էին ընտրել, իսկ Աստծու ծրագրերում չկար, որ որևէ մեկը միաժամանակ երկու ծառի պտղից ուտեր:

Աստծու կինը

Երկրորդ կինը Աստծու կինն է՝ Իսրայելը: Աստված այս ազգին ընտրեց ու նրանց ազատեց Եգիպտոսից: Հենց նրանք մտան խոստացված երկիր ու գրավեցին առաջին քաղաքը՝ Երիթովը, Աքար անունով մի մարդ ազահությունն արեց, ու չնայած Աստված հստակորեն արգելել էր դա անել, նա ավարից պահեց թանկ հագուստը, ոսկին և արծաթը:

Աստված սրա հետ անմիջապես հաշիվները մաքրեց, քանզի սա

Իսրայելի՝ խոստացված երկիրը գրավելու սկիզբն էր, և նա ցույց տվեց, թե ինչքան էր ատում ազահուությունը: Աքարն ու իր ողջ ընտանիքը քարկոծվեցին ու այրվեցին, որպես պատիժ: Աքարի խոստովանությունը հետևյալն էր. *«...աւարին մէջ վայելչագեղ Բաբելոնի վերարկու մը, երկու հարիւր սիկղ արծաթ ու յիսուն սիկղ կշոող ոսկի լեզու մը տեսայ, անոնց ցանկացի, զանոնք առի...»* (ողջ պատմությունը բերված է Յեսու 7-ում):

Քրիստոսի հարսնացուն

Երրորդ կինը Քրիստոսի հարսնացուն է: Եկեղեցին ծնվեց Երուսաղեմում՝ Պենտեքոստի տոնին, և Քրիստոսի կյանքը ի հայտ եկավ: Նրանց ամեն ինչն ընհանուր էր, և նրանց միտքն ու սիրտը մեկ էր:

Մի ամուսնացած զույգ, Անանիան և իր կին Սափիրան, ազահուություն ցուցաբերեցին ու հետ պահեցին իրենց տան վաճառքից ստացված շահույթի մի մասը, երբ մտադրվել էին ամենը նվիրաբերել, և դա անելով նրանք փորձեցին մոլորեցնել Եկեղեցուն և Սուրբ հոգուն. ու այս ամենն արվեց փողի սիրո համար: Պետրոս առաքյալն ասաց, որ նրանք պարտավոր չէին շահույթից և որևէ բան Աստծուն տալ, ուրեմն «ինչու՞ էին փորձում գայթակղել իրենց ու Սուրբ Հոգուն»:

Դատն ակնթարթային էր, և Պետրոս առաքյալը մահապատիժ հայտարարեց երկուսի համար էլ. նրանք մեռած ընկան և դուրս հանվեցին ու թաղվեցին (ողջ պատմությունը Գործք Առաքելոք 5:1-10-ում):

Երբ դառնում ենք մեր սեփական աստվածը

Այս երեք օրինակները ցույց են տալիս, որ երբ մենք ազահ ենք, այդ տենչը բավարարելու միակ ճանապարհն Աստծու օրենքներին չհնազանդվելն է ու մեր սեփական անկախությունը ցանկանալը, իսկ

դա իրականում մեզ ինքներս մեր համար օրենք է դարձնում, և մենք դառնում ենք մեր սեփական աստվածը: Անկախությունը մեր ընտանիքում, աշխատանքային իրավիճակներում, եկեղեցում և անձնական կյանքում միայն ի հայտ է գալիս Աստուծու օրենքներին անհնազանդ լինելու հաշվին:

Սա շատ լուրջ է, և այդ պատճառով է, որ Հիսուսն ասում է, թե մենք չենք կարող երկու տիրոջ ծառայել, ու հենց այդ պատճառով էլ մեզ տալիս է անկախության այս հինգ հիմնավոր իրավունքները, որոնք պետք է վայր դրվեն, որպեսզի մեր մահկանացու մարմիններում ապրի Քրիստոսի կյանքը:

Այժմ ես կդիտարկեմ սնունդը, ու կտեսնենք, թե ինչպես մեր սնվելու սովորություններն ու այն, թե ինչքան ենք մենք սնունդը գնահատում, կարող է արտահայտել մեր հոգևոր իրավիճակը, իսկ հաջորդ գլխում ես կդիտարկեմ հագուստն ու դրա ազդեցությունը: Սնունդն այն է, ինչ **ներս** է մտնում մեր մարմին, մինչդեռ հագուստը մենք հագնում ենք մեր մարմնի **վրա**:

Ուտել՝ ապրելու՞ համար, թե՞ ապրել՝ ուտելու համար

Ինչու՞ համար է սնունդը: Այն կյանքը պահպանելու համար է, քանզի առանց դրա մենք չենք կարող գոյություն ունենալ: Աստուծու նպատակն է, որպեսզի մենք ուտենք՝ ապրելու համար, այլ ոչ թե ապրենք՝ ուտելու համար: Չարմանալի է, թե ինչպես է սնունդը արևմտյան մշակույթի մեջ դառել սոցիալական կարգավիճակի խորհրդանիշ: Ընդհանուր առմամբ, երբ մարդու եկամուտն ու սոցիալական կարգավիճակը փոխվում է, նրա սնվելու սովորություններն էլ են փոխվում: Էժանագին գարեջուրը փոխվում է գինու և շամպայնի, հասարակ ձուկը փոխարինվում է խավիարով, հասարակ սնունդը մոտիկ սննդի կետից վերածվում է էլեգանտ ռեստորանի, և այլն:

Ասածս այն չէ, թե սնունդը սխալ է, այլ այն, որ կյանքի

գոռոզությունն ու աչքերի ցանկությունը կարող են շատ հեշտությամբ վերացնել կյանքի պարզությունը, և եսասեր ազահությունը (ընչասիրությունը) կարող է մեզ կույր դարձնել Քրիստոսի կյանքի նկատմամբ, ու մենք կարող ենք դառնալ ինչպես այն հարուստ մարդը, որը սնվում էր պերճ ու շվայտ ձևով՝ քաջ գիտակցելով, որ իր սեղանի տակ նստած էր ողորմություն խնդրող մեկը, որը փշրանքներն էր հավաքում:

Մենք պատասխանատու ենք

Այս անվերջ նեղացող աշխահում միլիոնավոր որբեր կան ու մեռնող բազմություններ: Մեր ծանրությունից կոտրվող սեղաններից ինքնաթիռով ընդամենը մի քանի ժամվա ճանապարհի հեռավորության վրա մարդիկ փշրանքներ են փնտրում, և մենք պետք է Հիսուսին իր դատի առաջ պատասխան տանք այն ամենի համար, ինչ արել ենք մեր մարմնում (Կորնթացիս 5:10):

Արդյոք քրիստոնյաները պետք է բուսակեր լինեն: Աստված Ադամի և Եվայի հետ դրախտի այգում ուխտ արեց և նրանց սննդի համար տվեց միայն հացաբույսերն ու պտուղները (կենդանիները ստեղծված էին ընկերակցության համար՝ նախքան Աստված Եվային ստեղծեց): Սակայն այս հարցի պատասխանը պարզ է: Քրիստոնյաները չպետք է բուսակեր լինեն՝ ելնելով հենց քրիստոնյա մի սկզբունքից: Իհարկե, եթե որևէ մեկը նախընտրում է մսից բացի մեկ այլ կերակուր՝ համի կամ անձնական այլ պատճառներով, ուրեմն դա սխալ չէ:

Պատճառն այն է, որ ջրհեղեղից հետո Աստված Նոյի ու հաջորդ սերունդների հետ նոր ուխտ արեց: Ուխտի մեծ մասը միևնույնն է, ինչ Ադամի և Եվայի դեպքում՝ «Աճե՛ք և բազմացե՛ք», և այլն, բայց այնուհետև նա ասաց, որ նրանց էր տվել **կենդանիների մարմինը**՝ որպես սնունդ, սակայն այն պետք է ուտել առանց արյան:

«Ամեն չարժող կենդանի՝ ձեզի կերակուր ըլլայ. կանաչ բոյսի պէս՝ բոլորը ձեզի տուի: Բայց միսը իր կեանքով՝ այսինքն իր արիւնով՝ մի՛

ուտէք» (Մենդոց 9:3-4):

Բուսակերութիւնը հինդուիզմի և վերածնման (ռեինկարնացիայի) դոկտրինի մի մասն է: Ես չեմ կարող այս թեման խորութեամբ դիտարկել, քանի որ այն այս գրքի նյութից դուրս է, սակայն շատ հեշտ է դրա իսկութիւնը տեսնել, եթէ ինտերնետային կայքերում փնտրեք բուսակերութիւն, հինդուիզմ, բուդդիզմ կամ թեոսոֆիկ միութիւն:

Օրգանական և առանց ճարպերի

Վիտամինային հավելումները, օրգանական կերակուրը, ցածր յուղայնութեամբ սննդակարգը բոլորը արևմտյան մշակույթի մի մասն են և նույնպէս կարող են դառնալ «սոցիալական դասի խնդիր» ու մեզ հեռացնել այն ճշմարտութիւնից, որ առողջութեան համար ամենամեծ վտանգը ոչ թէ վատ կերակուրն է, այլ վատ վերաբերմունքը: Կյանքի ճնշումը, բարկութիւնը, ատելութիւնը, դառնութիւնը կամ չնտրող վերաբերմունքը բոլորը կարող են վնասել մեր ֆիզիկական մարմինը շատ ավելի, քան ոչ կատարյալ սնունդը, որ մենք հնարավոր է ընդունենք:

Ես ուշադրութեամբ հետևել եմ, որ այն մարդիկ, որոնք չափից ավելի են մտահոգված, թէ ինչ է սնունդը պարունակում, որոնք հաշվում են կալորիաներն ու տարված են անգամ իրենց կերած ամեն ինչի աղտոտվածությամբ, սովորաբար մոտենում են կան դառնում հիպոխոնդրիկ և ավելի վատառողջ են թվում, քան այն մարդիկ, որոնք չեն մտահոգվում, թէ ինչ են ուտում:

Իմ կնոջ ընկերներից մեկն իրենց խոհանոցի մի աչքի ընկնող մասում վիտամինային «ավետարան» ունի, որը իմ Աստվածաշնչից էլ հաստ է: Նա և իր կինը ամեն օր նախաճաշի հետ մի աման հաբեր էին ընդունում (բավականին թանկ գնով ներմուծված ԱՄՆ-ից), որպէս իրենց սննդի հավելում: Տարօրինակ է այն, որ նրանք գրեթէ միշտ անառողջ էին ու բողոքում էին, և մի քանի տարի շարունակ նման կենսակերպով ապրելուց հետո ամուսինը տառապում էր խրոնիկ հոգևածութեան

սինդրոմով:

Չամոզված եմ, որ վիտամինների և այլ հավելումների գերշահագործումն իրականում կործանել էր նրանց բնական իմունային համակարգն ու դարձրել ավելի թույլ և առավել բաց՝ վիրուսների համար:

Աղբը՝ ներս, աղբը՝ դուրս

Չիտեսն ասաց, որ այն, ինչ մեր բերանից ներս է մտնում՝ սննդի տեսքով, վերամշակվում է մեր մարմնի կողմից՝ նյութափոխանակության միջոցով, իսկ աղիների գործունեության արդյունքում թունավոր աղբը հեռացվում է: Ցավալին այն է, որ մեր սիրտը չունի նյութափոխանակության ֆունկցիա: Մեր սրտի թունավոր նյութերը հեռացնելու միակ ճանապարհը մեր բերանն է, և հենց դա էլ աղտոտում ու թունավորում է քրիստոնյային:

«Լսեցէ՛ք եւ հասկցէ՛ք. ո՛չ թէ ինչ որ կը մտնէ բերանը՝ կը պղծէ մարդը, հապա ինչ որ կ'ելլէ բերանէն՝ անիկա՛ կը պղծէ մարդը: ...չէ՞ք հասկնար թէ ամէն ինչ որ կը մտնէ բերանը, կը պարունակուի փորին մէջ, ու կը ձգուի արտաքնոցը: Իսկ ինչ որ բերանէն դուրս կ'ելլէ՝ սիրտէ՛ն յատաջ կու գայ, եւ անիկա՛ կը պղծէ մարդը: Որովհետեւ սիրտէ՛ն կ'ելլեն չար մտածումներ, սպանութիւններ, չնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ ու հայհոյութիւններ: Ասո՞նք են որ կը պղծեն մարդը, բայց անլուայ ձեռքով հաց ուտելը՝ չի պղծեր մարդը» (Մատթեոս 15:10-20-ից):

Սննդի շռայլ կենսակերպը հնարավոր է, որ առաջին հայացքից այդքան էլ վատ չթվա, սակայն ամեն կենսակերպ իր հետևանքներն ունի, իսկ «Սիոնում անխռով ապրելն» ու ինքնաբավությունը երկարաժամկետ տեսակետից կործանարար հետևանքներ ունեն: Ամեն մեղք սրտում է սկսում, և քանի որ ազահությունն ամեն մեղքի արմատն է, ուրեմն այս աշխարհի բարիքների, սոցիալական կարգավիճակի և դրա հետևանքով մարմնի նկատմամբ սերը չի կարող ճիշտ պտուղն

արտադրել:

Կցանկանայի Սողոմը և Գոմորը որպես օրինակ օգտագործել: Մենք բոլորս գիտենք, որ սողոմությունը (արվամոլությունը, կամ միասեռականությունը) իր անվանումը ստացել է այն քաղաքի անունից, որ Աստված կրակով ու ծծմբով ավերեց: Սակայն եթե կարդանք Եզեկիելի մարգարեությունը, կտեսնենք, որ Սողոմի արտաքին մեղքերը իրականում սրտի մեղքերն էին: Սեռական անբարոյականությունը միայն հետևանք է հանդիսանում շվայտ, եսի վրա կենտրոնացած ու նյութապաշտ հասարակության: *«Ահա՛ սա՛ էր քրոջդ՝ Սողոմի անօրէնութիւնը.- Ան իր գիւղերով ունեցաւ ամբարտաւանութիւն, հացի առատութիւն եւ անհոգ հանդարտութիւն, բայց դժբախտին եւ աղքատին չօգնեց» (Եզեկիել 16:49):*

Որպես Բաբելոնում այս իրավիճակի հակապատկեր՝ թույլ տվեք դիտարկել Դանիելի կյանքը, քանզի նա լավ օրինակ է մի մարդու, որ ապրում էր այս աշխարհում, սակայն դրա մասը չէր կազմում՝ սննդի տեսակետից: Դանիելը հասկանում էր, որ Բաբելոնում էր ու նշանակված էր լինելու համաշխարհային կայսրության բարձրագույն մակարդակի կառավարական աստիճանակարգի մի մասը: Այս դիրքից ելնելով՝ նրան թույլ էր տրվում, ավելի շուտ, նրան խրախուսում էին ուտել և խմել ամենալավ բաները՝ թագավորական ուտելիքներ: Դանիելը հրաժարվեց իր օրինական իրավունքներից ու որոշեց տարբեր կենսակերպով ապրել: Նա միայն որպես սնունդ խնդրեց ընդդեմ:

Կոշեր¹ սնունդ

Ես լսել եմ շատ քարոզիչներից, որ Դանիելը չէր կարող թագավորի կերակուրից ուտել, քանզի նա հրեա էր և չէր կարող պղծվել՝ ոչ-կոշեր կերակուր ուտելով: Սա այդքան էլ խելամիտ ենթադրություն չէ, քանզի Դանիելի դիրքն իրեն թույլ էր տալիս, որ խնդրեր, որպեսզի իր կերակուրը պատրաստված լիներ այնպես, ինչպես ինքն էր ցանկանում, և հաստատ կարելի է ասել այն, որ գոյություն չունի այնպիսի

հասկացություն, ինչպես կոշեր գինի: Ո՛չ, նա իրականում հրաժարվում էր օրինական, շվայտ կենսակերպից: Նրա խնդրանքը ոչ թե կոշեր կերակուրն էր, այլ ընդեղեն՝ պարզ կերակուր: Նա ապրում էր աղոթքի ու ծոմապահության կենսակերպով, այլ ոչ թե զվարճանքի ու խնջույքների:

Նրա կենսակերպն առանցքային հանդիսացավ այն հայտնության համար, որ Աստծու դատաստանը Երուսաղեմի համար ավարտին էր մոտենում, և Դանիելի բարեխոսության աղոթքն իր դերն ունեցավ այն բանում, որ Աստծու ժողովուրդը վերականգնվեց խոստացված երկիր՝ Երուսաղեմի պատերն ու տաճարը վերակառուցելու: Արդյոք ո՞վ կցանկանա վերադառնալ Երուսաղեմ ու վերակառուցել պատերը, երբ կարող է Բաբելոնում թագավորի պես ապրել: Տոնակատարություն արող եկեղեցին, որ ապրում է չար ազգի մեջ, միլիոնավոր տարիներում անգամ չի կարող երբևէ հոգևոր զարթոնք բերել: Նրանք միայն կարող են նախապատրաստել Բաբելոնի թագավորի՝ Նեռի ճանապարհը:

Հոգևոր սպասավորի կենսակերպը

Երբ Հիսուսը Մատթեոսի ավետարանի գլուխ 10-ում իր աշակերտներին ուղարկեց թագավորության ավետարանը քարոզելու, նա նրանց ցուցումներ տվեց, որ ապրեն Աստծուց կախվածության մեջ լինելու պարզ կենսակերպով, ուրեմն նրանք պետք է գնային առանց հավելյալ հագուստի կամ ֆինանսական ապահովության: Մեր ժամանակակից հասարակությունում շատ հոգևոր սպասավորների կենսակերպը ուղիղ հակասում է այս ցուցմանը և իրականում խայտառակություն ու ստորացում է, ի հակառակ Հիսուսի հստակ վարդապետությանը:

«Մի՛ ունենաք ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ ու ո՛չ պղինձ՝ ձեր գօտիներուն մէջ. ո՛չ ճամփորդութեան համար պարկ, ո՛չ կրկին բաճկոն, ո՛չ կօշիկ, ո՛չ գաւազան. որովհետեւ գործաւորը արժանի է իր կերակուրին» (Մատթեոս 10:9-10):

Իմ կերակուրը նրա կամքը կատարելն է

Հիսուսն այնքան էր հետաքրքրված սամարացի սանձարձակ կնոջով, որ մոռացել էր իր կերակուրի մասին, և մինչ նրա աշակերտները գնացել էին հաց գնելու, նա այդ կնոջը փրկության ուղին ցույց տվեց: Երբ աշակերտները վերադարձան, նրանք ցանկացան, որ Հիսուսը մի բան ուտի, բայց նա փոխարենն ասաց. *«Ես՝ ուտելու համար՝ ունի՞մ կերակուր մը, որ դուք չէք գիտեր»:* Աշակերտները, ինչպես միշտ, մտածում էին իրենց ստամոքսի մասին ու պատկերացրեցին, թե Հիսուսը պետք է որ որևէ բան կերած լիներ, բայց Հիսուսը նրանց համար մի հայտնություն ասաց. *«Իմ կերակուրս՝ գործադրել է զիս զրկողին կամքը, եւ աւարտել անոր գործը»:*

Նա ասում էր, որ այն, ինչ իրեն բավարարել էր, ոչ թե նյութական սնունդ էր, այլ իր Հորը հաճոյանալու ու նրա գործը կատարելու ցնծությունը: Իհարկե, Հիսուսն ուտում էր՝ ապրելու համար, և համոզված եմ, որ հաճույք էր ստանում իր կերակուրից, ուրեմն մենք էլ պետք է նույնն անենք, բայց նրա համար առաջնահերթությունն ու իրական բավարարվածությունը գալիս էր հոգևոր աղբյուրից, այլ ոչ թե նրանից, ինչ հաճելի էր իր մարմնին:

Եկեք հաճույք ստանանք մեր կերակուրից ու այն ուրախությամբ ուտենք, սակայն եկեք հիշենք, որ մեր մարմինը շուտով մահանալու է և միայն ժամանակավոր մի տուն է, որի մեջ մենք ապրում ենք: Եկեք հավաստիանանք, որ մենք առավել մտահոգված ենք կյանքի իրական արժեքներով, այն է, որ Քրիստոսի կյանքը հայտնաբերվի մեր մահկանացու մարմիններում:

Նշումներ

1. Կոչերի սնունդ նշանակում է միս, որից քամված է ողջ արյունը:



Գլուխ 8

Դիրք, տեսք եվ ոճ

Եւ ինչո՞ւ կը մտահոգուիք հագուստի մասին. նկատեցէ՛ք դաշտի շուշանները, թէ ինչպէս կ'աճին. ո՛չ կ'աշխատին ու ո՛չ կը մանեն: Բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: Ուստի եթէ դաշտի խոտը, որ այսօր կայ եւ վաղը փուռը կը նետուի, Աստուած ա՛յնպէս կը հագուեցնէ, հապա որչափ աւելի ձե՛զ, թերահաւատներ: Ուրեմն մի՛ մտահոգուիք՝ ըսելով. "Ի՞նչ պիտի ուտենք", կամ "Ի՞նչ պիտի խմենք", կամ "Ի՞նչ պիտի հագնինք" (քանի որ հեթանոսները կը փնտռեն այդ բոլոր բաները). որովհետեւ ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ այդ բոլոր բաները պէտք են ձեզի:

Մատթեոս 6:28-33

Մենք այժմ դիտարկելու ենք հագուստի հարցը: Սա մի ոլորտ է, որի մասին Յիսուսն ասում է, որ մենք չպետք է հոգ տանենք, սակայն արդյոք ի՞նչ կապ ունի հագուստը մեր փրկության հետ: Այն որևէ կապ չունի փրկության հետ, քանզի մենք արդարացված ենք Աստծու շնորհքով՝ հավատքի միջոցով, այլ ոչ թե արարքների կամ հագուստի: Սակայն նորաձևությունը շատ մեծ կապ ունի մեր սուրբ լինելու հետ, այն է՝ աշխարհից զատված լինելու, և սա մեկ այլ ոլորտ է, ուր մենք կարող ենք ցուցադրել մեր անկախությունը ժամանակակից դարից:

Ստեղծված Էին մերկ

Ադամը և Եվան մերկ էին ստեղծված և հագուստի կարիք ընդհանրապես չուներին: Ադամին ասվեց, որ պարտեզը հարդարի, այլ ոչ թե ինքն իրեն: *«Տէր Աստուած առաւ մարդը ու Եղեմի պարտէզին մէջ դրաւ, որպէսզի դայն մշակէ եւ պահէ»* (Մենդոց 2:15): Ջրհեղեղից առաջ կլիման բուրրովին տարբեր էր, և Ադամն ու Եվան տաք լինելու համար հագուստի կարիք չուներին: Ադամը և Եվան միակ կենդանի մարդիկ էին, հետևաբար պարկեշտության համար հագուստի կարիք նույնպես չուներին:

Սխալ ծառից ուտելուց հետո Ադամն ու Եվան բարու ու չարի մասին գիտելիք ուներին և այդ ժամանակ իմացան, որ մերկ էին: Երկրի վրա այլ մարդիկ չկային, որոնք նրանց մերկությունը կտեսներին, իսկ իրենք մեկը մյուսից չէին ամաչի՝ որպես այր ու կին, ուրեմն նրանք ամաչում էին ու ծածկի կարիք ուներին Աստծու ներկայությունից: Նրանք իրենց թգենու տերևներով էին ծածկում և սխալ չէին, քանզի Աստված ինքը նրանց համար կաշվե հագուստ ստեղծեց: *«Ու Տէր Աստուած Ադամի եւ անոր կնոջ կաշիէ հանդերձներ շինեց ու անոնց հագցուց»* (Մենդոց 3:21):

Հագուստի մշակույթը

Ադամի մեղքի և ջրհեղեղով երկիրն ավերելու պատճառով մենք այժմ հագուստի կարիք ունենք երկու նպատակով՝

- ◆ մերկությունը ծածկելու
- ◆ մեզ տաք պահելու

Սա էլ հենց տեղի է ունենում աղքատ երկրներում և ոչ քաղաքակիրթ հասարակություններում: Հարուստ հասարակություններում կյանքի ամբարտավանության ու աչքերի ցանկության

պատճառով հագուստն ինքնին դառել է մշակույթ և կիրառվում է սոցիալական կարգը հաստատելու կամ մեզ ցուցադրելու համար: Երբ մարդիկ հարստանում են ու հասարակությունում դիրք գրավում, նրանց հագած հագուստը ու դրա բազմազանությունը սովորաբար արտացոլում են այս փաստը: Պիտակն ավելի կարևոր է դառնում, քան ծածկի կամ տաքության կարևորությունը:

Նորաձևության ու նիհարելու «բիզնեսը» բազմամիլիարդանոց փողի մեքենա է, որ առաջարկ է ստեղծում և շահագործում է մեր հասարակության ազահությունը, ամբարտավանությունն ու տենչը: Նորաձևությունը փոխվում է ամեն սեզոն՝ ոչ այլ ուրիշ պատճառով, քան բիզնեսը, և մինչ աշխարհում այդքան մարդ մերկ է ու քաղցած, ինձ համար դժվար է տեսնել, թե ինչպես կարող է Աստուծու սիրով լեցուն մեկը լինել այդ բիզնեսի մի մասը կամ էլ նորաձևության հավատարիմ հետևորդ:

Մի՛ սիրեք աշխարհը

Եթե մենք չպետք է այս աշխարհից լինենք, ապա սա հստակորեն մի ոլորտ է, ուր քրիստոնյան կարող է տարբեր լինել: Խնդրում եմ, մի կարծեք, թե ես քարոզում եմ, որ քրիստոնյաները պետք է սև հագնեն, իսկ կանայք պետք է իրենց մազերը կոս անեն: Ցոփության ու շվայտության հակառակ կողմը լեզալիզմն է, իսկ ես այն ատում եմ ճիշտ նույնչափ, որքան ատում եմ նորաձևության ու հագուստի բիզնեսի ցոփությունն ու անկումը: Հիսուսը չի խոսում գեղեցիկ հագուստի ու գրավիչ արտաքինի դեմ, նա խոսում է սրտում ազահության մասին ու այն բանի դեմ, որ այս աշխարհի իրերը մեր վրա իշխանություն ունենան: Հիսուսն ասաց. *«Մի՛ սիրեք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը կը սիրէ աշխարհը, Հօրը սէրը չկայ իր մէջ...»* (Ա Հովհաննես 2:15-16):

Երբ դեռահաս աղջկա նորաձևությունն այն հանդերձանքն է, որ մարմնավաճառը միայն կհագներ մի քանի տարի առաջ, ապա հավատացած եմ, արդեն ժամանակն է, որ քրիստոնյաները հետ քաշվեն

ու սկսեն իրենց երեխաներին այլ կերպ հազցնել: Կանացի նորաձևության մեծամասնությունն ուղղված է տղամարդկանց մոտ ցանկությունն արթնացնելու, և իհարկե, տղամարդիկ սիրում են դա անել իրենց սրտի «ակնհայտ» ապահով անկյուններում, ուր ոչ ոք չի կարող դա տեսնել: Ես տղամարդկանց համար անցկացրած սեմինարներից գիտեմ, որ քրիստոնյա տղամարդիկ ցանկության բնագավառում մեծ խնդիր ունեն: Ճնանալու արմատը միշտ էլ ազահությունն է, քանզի այն սկսում է սխալ ցանկություններով, որոնց կրակի վրա հաճախ յուղ է լցնում գայթակղիչ հանդերձանքը:

Սիրամարգի սինդրոմը

Չիսուսն ասաց, որ մարմինը հագուստի համար չի ստեղծված, այլ Աստծուն գոհացնելու: Աստված կարող էր Ադամին ու Եվային ամեն տեսակ ապշեցուցիչ հագուստ տալ ու նրանց մարմիններն անուշահոտությամբ օծել, սակայն նա չէր ցանկանում, որ մարդը շեղվի այն փաստից, որ ինքը ստեղծված է Աստծու կերպարանքով:

Աստծու արարչագործության մեծ մասը հանդերձված է շատ ավելի գեղեցիկ, գունագեղ ու անուշահոտ կերպով, քան մարդը, բայց նրանք չեն պակասեցնում Աստծու փառքն այնպես, ինչպես մարդն է անում, երբ գոռոզաբար սիրամարգի պես է իրեն պահում ու գողանում Աստծու փառքը: Չագուստը մեկ այլ բնագավառ է, ուր մենք կարող ենք ինքներս մեզ համար փառք վաստակել:

Սողոմոնը մերկ վիճակում այդքան էլ գրավիչ չէր լինի, իսկ տղամարդու մարմնի բույրն այդքան էլ հաճելի չէ: Սողոմոնը հազնում էր թանկարժեք ու հազվագյուտ հագուստ, որպեսզի գրավիչ լիներ, մինչդեռ Չիսուսն ասաց, որ դաշտի շուշանը ուներ բնական բույր, գեղեցիկ գույն ու շատ ավելի նուրբ էր, քան մարդու կողմից պատրաստված հագուստը: *«Եւ ինչո՞ւ կը մտահոգուիք հագուստի մասին. նկատեցէ՛ք դաշտի շուշանները, թէ ի՞նչպէս կ'աճին. ո՛չ կ'աչխատին ու ո՛չ կը մանեն: Բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն*

*այ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս»
(Մատթեոս 6:28-29):*

Սուրբ հոգու տաճարներ

Գոյութիւն ունի մի փաստարկ, որն ասում է, թէ մենք Սուրբ Յոգու տաճարներն ենք, ուրեմն պետք է մեզ Աստծու համար գեղեցկացնենք: Մենք պետք է բարետես կառուցվածք ունենանք ու նորաձև հագնվենք, որպեսզի Աստծուն փառավորենք: Ճշմարիտ է այն, որ Սուրբ Յոգին ապրում է մեր ֆիզիկական մարմիններում, և որ մենք այժմ Աստծու տաճարն ենք, բայց Աստվածաշունչն աղաղակում է ամեն անգամ ու ասում մեզ, որ տաճարը պետք է **սուրբ** լինի, իսկ սուրբ նշանակում է գատված ու աշխարհից տարբերվող:

Ինչ վերաբերում է գեղեցկությանը, ապա այն, ինչ ասում է Պետրոս առաքյալը պետք է համոզի մեզ. այն գեղեցկությունը, որ Աստված դիտարկում է, ոչ թէ արտաքին տեսքն է, այլ սրտի գեղեցկությունը, այն է՝ սրբության գեղեցկությունը:

«...մինչ կը տեսնեն ձեր մաքրակենցաղ ու երկիւղած վարքը: Ձեր զարդարանքը թող չըլլայ դուրսէն՝ մազերու հիւսքերով, ոսկիներու շարքերով կամ չքեղ հանդերձներ հագնելով, հապա ձեր զարդը թող ըլլայ սիրտին ծածուկ մարդը, հեղ եւ հանդարտ հոգիի մը անապականութեամբ, ինչ որ թանկագին է Աստուծոյ առջեւ» (Ա Պետրոս 3:2-4):

Հավասարակշռություն գտնելը

Աստվածաշունչն ասում է, որ ամուսնացած կինը, չնայած նշանված լինելով Քրիստոսի հետ, պարտավոր է հաճոյանալ իր ամուսնուն: Համոզված եմ, որ բոլոր տղամարդիկ կհամաձայնեն, որ իրենց համար հաճելի է, երբ իրենց կինն ուշադրություն է դարձնում իր մազերին ու հանդերձին, քան թէ երբ նա կարող է ամբողջ օրը

չհարդարված մազերով ու թափթփված տեսքով ման գալ:

Նույնը ճիշտ է տղամարդու դեպքում: Ո՞ր կնոջը կգրավի մի ամուսին, որը վատ բույր ունի ու չխնամված տեսք:

Պողոս առաքյալն ասում է. *«Նոյնպէս տարբերութիւն կայ ամուսնացած կնոջ եւ կոյսին միջեւ. չամուսնացած կինը կը հոգայ Տէրոջ բաները, որպէսզի ինք սուրբ ըլլայ մարմինով ու հոգիով. իսկ ամուսնացած կինը կը հոգայ աշխարհի բաները, թէ ի՞նչպէս հաճեցնէ իր ամուսինը» (Ա. Կորնթացիս 7:34):*

Իհարկէ, մեծ տարբերություն կա գրավիչ լինելու և գայթակղեցնող կամ վուլգար լինելու մեջ, և եթե տղամարդն ակնկալում է, որ իր կինը հազնվի այնքան գայթակղեցնող, ինչպես աշխարհը, ուրեմն նա պետք է իր սեփական սիրտը մաքրի: Այն տղամարդը, որ հաճույք է ստանում, երբ տեսնում է, որ այլ տղամարդիկ ցանկանում են իր կնոջը, որպեսզի իր սեփական ետը գոռոզացնի (թե ինքը գրավիչ կին ունի), վտանգավոր հողի վրա է կանգնած:

Մենք պետք է հավասարակշռություն ձեռք բերենք լեգալիզմի ու այն բանի միջև, երբ թույլ ենք տալիս, որ Աստծու կողմից մեզ տրված անհատականությունը շողա: Համեստությունը չի նշանակում սև հագուստ կրելը, իսկ կանացիություն չի նշանակում ցանկալի կամ գայթակղիչ լինել: Երբ ես գնում եմ Հնդկաստան, միշտ զարմանում եմ, թե որքան գրավիչ կարող է լինել սարի հագած կինը: Դրանք շատ վառ գունավորում ունեն ու հաստատ կանացի են, սակայն միևնույն ժամանակ ի ցույց չեն դնում իրենց մարմինը կամ էլ մարմնի իրական կառուցվածքը: Իհարկէ, ես չեմ ասում, թե արևմուտքի կանայք պետք է սարի հագնեն: Սա պարզապես մի հագուստի օրինակ է, որը տղամարդու մոտ ցանկություն չի արթնացնում:

Կենսակերպը բացահայտում է սիրտը

Ազահության դեմ պայքարի միջոցն այն է, ինչ Հիսուսն ասում է մի քանի տող հետո՝ Մատթեոս 6:33-ում: *«Բայց նախ խնդրեցէ՛ք Աստուծոյ*

Թագաւորութիւնն ու անոր արդարութիւնը, եւ այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի»: Եթէ մենք խնդրում ու փնտրում ենք միևնույն բաներն, ինչ աշխարհը, ապա հստակ է այն, որ մենք մեջքով ենք դարձել Աստծու իրական թագավորությանը:

Մեր կենսակերպը միայն բացահայտում է մեր սիրտը, և մենք պետք է ինքներս մեզ հարց տանք. արդյոք որքանո՞վ է հագուստը, արտաքին տեսքն ու նորաձևությունը կարևոր ինձ համար: Եթէ դրանք մեզ համար կարևոր են, ուրեմն պետք է լրջորեն մտածել մեր կյանքի ու թագավորության մասին՝ ելնելով Հիսուսի վարդապետության լույսից:

Ճոխությունը մեղքի սկիզբն է

Լեռան քարոզի այս հատվածն ավարտելու համար իմաստուն կլինի դիտարկել, թե քանի մեղք է «խրախուսվում» հագուստի, սննդի և խմիչքի ճոխությամբ: Քանի՞ կանայք են գայթակղվում մեքենաներով, թանկարժեք կերակուրով ու արտասովոր խմիչքով, և քանի՞ տղամարդիկ են ցանկանում իրենց սրտում՝ գայթակղիչ նորաձևության և ալկոհոլի հետևանքով, ինչը նոսրացնում ու տապալում է նրանց բարոյականությունը:



ԳԼՈՒԽ 9

Վաղը երբեք չի գալիս

Ուստի մի՛ մտահոգուիք վաղուան համար, որովհետև վաղուան օրը պիտի հոգայ իրեն համար. բաւական է օրուան իր անձկութիւնը:

Մատթեոս 6:34

Մտահոգութիւնը չի դատարկում վաղվա դժբախտութիւնը. այն դատարկում է այսօրվա ուժը:

Բորի Թեն Բում

Երբ Քրիստոս՝ մեր կեանքը՝ երեւնայ, այն ատեն դո՛ւք ալ փառքով պիտի երեւնաք՝ անոր հետ: Ուրեմն մեռցուցէ՛ք ձեր երկրաւոր անդամները.- պոռնկութիւնը, անմաքրութիւնը, անսանձ կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահութիւնը, որ կոպակաշտութիւն է:

Կողոսացիս 3:4-5

Վերջին բնագավառը, որի համար Յիսուսն ասում է, թե մենք չպետք է մտահոգվենք, ապագան է: Միգուցե սա ներկայիս դարում ապրող յուրաքանչյուր քրիստոնյայի համար ամենամեծ կոչն է, քանզի պլանավորումը մեր կենսակերպի մի մասն է ու բարեպաշտ հատկութիւնն է: Աստված վերջնական նախագծողն ու պլանավորողն է, ուրեմն նախապես պլանավորումը սխալ չէ: Ակնհայտ է, որ մենք չենք կարող պլանավորել անցյալը կամ ներկան, այլ միայն ապագան, և ճիշտ

Է, որ մենք դա անենք: Վստահաբար, երկնքում գանձեր դիզելը մեր ապագան պլանավորելն է, այնպես չէ՞:

Հիսուսն իրականում կասկածի տակ է դնում **մեր** պլանավորման պատճառը: Սխալ է պլանավորել՝ մտահոգված լինելու կամ այն լարվածության պատճառով, որ այս աշխարհը մեզ վրա է դնում: Ապագան Աստծու ձեռքում է, և Հին ու Նոր կտակարաններից բարի մարդիկ այդ վերաբերմունքն ունեին. **մենք սա կանենք, եթե Աստված կամենա:**

Երկու թագավորություն՝ երկու ապագա

Լեռան քարոզի այս հատվածը դեռևս գտնվում է այս պարբերության ենթավերնագրի ներքո, այն է՝ *ոչ մեկը չի կարող երկու տիրոջ ծառայել*, ուրեմն մենք կծառայենք ու կփնտրենք երկու ուղիներից մեկը: Մենք կցանկանանք գանձեր երկրի վրա և ստիպված կլինենք մեր ապագան համապատասխան կերպ պլանավորել՝ ամբողջ այն լարվածությամբ, որ դա մեզ վրա կդնի, կամ էլ կցանկանանք ու կծառայենք ապագա երկնքի թագավորությանն ու կունենանք անհոգ կյանք՝ գիտենալով, որ մեր *երկնային Հայրը հոգ է տանում մեր մասին*:

Ես որևէ գաղափար չունեմ, թե արևմուտքում մարդը միջինում որքան է ամեն տարի ծախսում ապահովագրության վրա, բայց ես գիտեմ, որ այդ ծախսված գումարը կարող էր զարգացող երկրներում միլիոնավոր երեխաների կյանք փրկել: Ապահովագրությունը հարուստ մարդկանց համար է, այն է՝ այն մարդկանց համար, որոնք ապահովագրելու բան ունեն: Երբ ես գնում եմ Աֆրիկա կամ Հնդկաստան, այնտեղ մարդիկ բավարար սնունդ ունեն միայն տվյալ օրվա համար, և այդ պատճառով էլ ապագան նրանց համար կարևոր չէ: Նրանք ապրում են օրեցօր:

Արևմուտքում ապահովագրությունը գովազդվում է՝ որպես խթան գործածելով վախը: «Սա կարող է տեղի ունենալ ձեզ հետ», և նրանք ցույց են տալիս մի մարդու ուրվագիծ, որ փորձում է ձեր տուն

ներխուժել: Կամ էլ ասում են. «Եթե դուք դժբախտ պատահար եք ունեցել ու այլևս չեք կարող աշխատել. ի՞նչ տեղի կունենա ձեր ապառիկ վճարումների հետ»: Անորոշ ապագայի նկատմամբ վախը ստիպում է մարդկանց ավելի շատ փող վճարել, ինչպես ապահովագրական ընկերություններն են ասում, խաղաղ մտքի համար: Ես ապահովագրությանը հակառակ չեմ խոսում:

Ապագան Աստծունն է

Եթե դուք վախենում եք, ուրեմն դրա կարիքն ունեք: Եթե դուք ապրում եք հավատքով՝ առ Աստված, ինչպես բոլորս պետք է անենք, ուրեմն դուք խաղաղ միտք կունենաք՝ անկախ այն հանգամանքներից, որոնք ձեր ճանապարհին կհանդիպեն, և հիմարություն կլինի վճարել մի բանի համար, որ դուք արդեն ունեք:

Ինչու՞ է Յիսուսն ասում, որ չմտահոգվենք վաղվա մասին: Պատճառներից մեկն այն է, որ վաղը երբեք չի գալիս: Մենք միայն կարող ենք ապրել ներկայում, և երբ հաջորդ օրը գա, այն արդեն ոչ թե կլինի «վաղը», այլ «այսօր»: Սա կարող է պարզ մտածելակերպ թվալ, բայց սկզբունքը շատ խիստ է, քանզի մինչդեռ մենք մտածում ենք վաղվա մասին, մենք կորցնում ենք ներկան ու թալանվում այն հաճույքից, որ կստանանք, եթե ապրենք ամեն րոպեն ըստ արժանվույն:

Որտե՞ղ եք ապրում դուք

Ինձ հանդիպած մարդկանց մեծամասնությունն ապրում է անցյալում կամ ապագայում, հետևաբար իրականում յուրաքանչյուր րոպեն ըստ արժանվույն չի ապրում: Ես աշխատել եմ մի մեծ գրասենյակում, որ կապված է եղել գործարանի հետ, և ուշադրություն եմ դարձրել աշխատակիցների վրա: Երկուշաբթի առավոտյան աշխատակիցները պատմում էին հանգստյան օրերի «արկածների»

մասին, որոնցից այդքան բավականություն են ստացել: «Տեսա՞ր Մանչեսթեր Յունայթեդի շաբաթ օրվա խաղը: Ա՛յ քեզ խաղ»: «Օհ, ես ուրբաթ գիշերը այնքան էի հարբել, որ ոտքի վրա չէի կարողանում կանգնել, ու ինձ ստիպված ուրիշները տուն քարշ տվեցին»: «Մենք շաբաթ օրը ողջ գիշեր մի հիանալի ակումբում էինք», և այդպես շարունակ: Նրանք երկու օր ապրում էին անցյալ հանգստյան օրերի խնջույքների ու գվարճանքների հաշվին:

Չորեքշաբթի օրը նրանք արդեն անհամբերությամբ սպասում են աշխատանքային շաբաթվա ավարտին: «Ախ, ու՞ր ես ուրբաթ, երբ բոլորս կգնանք մի այլ պանդոկային ճանապարհորդության», «Հազիվ եմ համբերում մինչև շաբաթ երեկոյի համերգը», և այլն: Նրանք կորցնում են յուրաքանչյուր օր կենդանի լինելու ցնծությունն ու Աստծու առողջության և ուժի առավելությունը: Նրանք թալանվել են յուրաքանչյուր րոպեն ապրելու հաճույքից:

Ապրեք այսօրվա համար

Շատ մարդիկ իրենց դուր չեկող առօրյա տհաճ գործն անում են՝ մտածելով ապագա բաների մասին, որոնք իրենց հաճելի կլինեն: Քրիստոնյաները պետք է հաճույք ստանան իրենց արած ամեն ինչից ու անեն դա՝ Աստծուն փառավորելու համար: Բավական չէ անհամբեր սպասել հաջորդ մեծ ավետարանչական հանդիպմանը կամ եկեղեցական գործունեությանը, եթե հաճույք չեք ստանում Աստծու հետ ունեցած ձեր հարաբերությունից ամեն ակնթարթ:

Իրական քրիստոնյան Աստծուն իր կյանքն է տվել, ինչը նշանակում է, որ նա Աստծուն իր եկամտի միայն 10%-ը չի տվել, իսկ մնացածը պահել: Նա Աստծուն առավոտյան ժամանակ չի տրամադրում, որպեսզի կարողանան օրվա մնացած մասն իրեն պահել: Իր օրվա ամեն մի վայրկյանը պատկանում է Աստծուն: Նրա ողջ գումարը, տաղանդներն ու ռեսուրսները պատկանում են Աստծուն, իսկ նա հանդիսանում է ընդամենը իր ժամանակի, տաղանդների և

ունեցվածքի 100%-ի տնտեսվարը:

Սա է միակ իրական քրիստոնեությունը և միակ ճշմարիտ ազատությունը: Հիսուսն ասում է, *որ չմտահոգվենք սննդի, հագուստի, ապագայի և անգամ մեր կյանքի համար*: Սա է իրականում Քրիստոսի մեջ ապրելը:

Աստծուն դուրս թողնելը

Երբ մենք ապագան շատ ենք պլանավորում, մենք արգելք ենք հանդիսանում, որ Աստված այն պլանավորի ու մեր մասին հոգ տանի: Ես գիտեմ, որ մարդիկ սրա հետ չեն համաձայնվի՝ ասելով, թե Աստված մեզ ուղեղ է տվել ու ակնկալում է, որ մենք այն կօգտագործենք, բայց միայն նրանք, ովքեր իրենք իրենց ուրացել են ու նետել են իրենց ապագան Աստծու ձեռքը, իրականում կհասկանան այն ցնծությունը, որ ստանում են, երբ թույլ են տալիս Աստծուն լուծելու քո խնդիրներն ու լինել քո երկնային Հայրը:

Հետաքրքիր կլինի պատկերացնել, թե ինչպես կարող էր Հին կտակարանի Հոբբը իրեն պահել ժամանակակից հասարակությունում: Երբ նրա ծառաներն եկան ու իրեն հայտնեցին իր տան աղետի մասին ու այն, որ իր անասուններին գողացել էին, պատկերացնում եմ, որ նա կնոջը կասեր. «Մի՛ անհանգստացիր, թանկագինս, մենք հուսալի ապահովագրված են «Ամերիկյան կյանք» գործակալության կողմից, և այս ամենից մի լավ բան դուրս կգա: Կարծում եմ, որ տունը վերանորոգման կարիք ուներ: Մենք կկարողանանք նորն ուզել»:

Հոբն ապահովագրված չէր

Եթե Հոբն ապահովագրված լիներ, Աստված չէր կարողանա Սատանային այդ կերպ օգտագործել՝ նրան փորձելու համար: Հոբն իրականում ապացուցեց Աստծու այն հայտարարությունը, թե ինքը

սիրում եր Աստծուն ու ատում չարիքը: Ես միայն կարող եմ հավատալ, որ Նա ինքնիրեն կապահովագրեր՝ Աստծու դեմ: Նա չէր կարող ասել, որ *Աստված տալիս է ու Աստված էլ վերցնում է* (Ջոբ 1:21): Նա կասեր. «Սատանան վերցնում է, իսկ Սատանայի համակարգը այն վերադարձնում է»:

Ինչպե՞ս կարող է ապահովագրական ընկերությանը փող տալը լինի Աստծուն տալ: Ես միայն կարող եմ մտածել, որ այն Աստվածը, ում դուք վճարում եք, իրականում հոգ կտանի ձեր մասին: Ընտրությունը երկուսն է. Աստված, կամ Սատանան՝ այս աշխարհի աստվածը: Դուք պետք է գաք ձեր սեփական եզրահանգմանը:

Մտահոգ մի՛ եղեք

Չիսուսն ասում է, որ մենք չպետք է վաղվա մասին մտահոգվենք, *քանզի բավական է օրվան իր անձկությունը (չարամտությունը)*: Այլ կերպ ասած, մեզանից կպահանջվի մեր ողջ կենտրոնացումն ու ջանքերը, որպեսզի կարողանանք այսօր ապրել Աստծու համար՝ մեր բոլոր խնդիրներով ու փորձություններով ու առանց վաղվա խնդիրների մասին մտահոգվելու: Վաղը ինքը հոգ կտանի իր մասին, ինչը նշանակում է, որ այն իրականում մեր ուժերից վեր է. քանզի այս երկրի վրա և ոչ ոք չի կարող հավաստիացնել, թե վաղը կյանք կունենա: Դա մեր ձեռքում չէ: Կյանքն ու մահը միայն Աստծուն են պատկանում:

Սողոմոն թագավորը, ով շատ իմաստուն բաներ է ասում Նախքան մոլորվելը, այնքան շվայտ ապրեց նորածնության, այս աշխարհի հաճույքների ու իր ապագան կառուցելու բնագավառում, որ երկրի վրա ամենաիմաստուն մարդը լինելուց դարձավ աշխարհի ամենամեծ հիմարն ու վերջում հայտնվեց վիուկության մեջ:

Թույլ տվեք այս գլուխն ավարտել Սողոմոն թագավորից մի քանի մեջբերումներով:

«Տերո՛ջ վստահէ ամբողջ սիրտովդ, ու քու խելքիդ մի՛ ապաւինիր. Զայն՝ ճանչցիր քու բոլոր ճամբաներուդ մէջ, եւ ինք պիտի շտկէ քու

ուղիներդ» (Առակաց գիրք 3:5-6):

«Մարդուն համար ոչինչ անելի լաւ է՝ քան ուտել ու խմել, եւ իր անձին բարօրութիւն վայելել տալ՝ իր աշխատանքէն: Ես տեսայ թէ ասիկա ալ Աստուծոյ ձեռքէն կու գայ» (Ժողովողի գիրք 2:24):



ԵՄ 3

ԻՄԱՏՈՒԹՅԱՆ
Ի ՎԵՐՈՒՄՍ



Գլուխ 10

Մի՛ վախեցիր կրակից

Ուստի առակներով կը խօսիմ անոնց, քանի որ տեսնելով՝ չեն տեսներ, ու լսելով՝ չեն լսեր, ո՛չ ալ կը հասկնան:

Մատթեոս 13:13

Եւ մարդուն ըսաւ. "Ահա՛ Տէրոջ վախն է իմաստութիւնը. ու չարութենէ հեռանալն է խելացիութիւնը":

Հոր 28:28

Հիսուսն այժմ ավարտել է Լեռան քարոզի երկու կարևոր թեմաները՝ կեղծավորությունն ու ազահությունը: Աստվածաշնչի թարգմանիչները նոր գլուխ են սկսում, և համոզված եմ, որ նրանք ոգեշնչված էին այդպես անելու, քանզի այստեղ ուղղության կատարյալ փոփոխություն է նկատվում: Հիսուսն այժմ սկսում է ցուցումներ և իմաստություն տալ:

Գլուխ յոթը Լեռան քարոզի միակ հատվածն է, ուր մենք ունենք առակներ և այլաբանություններ. *մարգարիտների մի՛ նետիր խոզերի առաջ, սուրբ բաները շներին մի՛ տուր*: Մինչ այս պահը խոսակցությունն ուղիղ էր, օրինակներով, բայց այժմ Հիսուսը մեզ տալիս է իմաստություն, որը թաքնված է, քանի դեռ մենք հայտնություն չենք ստացել: Գլուխ 7-ի երկրորդ կեսը քարոզի եզրակացությունն է կամ կոչը, և ինչպես ամեն մի կոչի դեպքում, այն մեզանից ընտրություն ու պատասխան է պահանջում:

Միայն աշակերտների համար

Լեռան քարոզի այս հատվածի մեծ մասը քարոզվում է՝ որպես բարի լուրի պատգամ ոչ-քրիստոնյաների համար, որովհետև եկեղեցին չի ցանկանում ընդունել կոչը: Բայց քարոզն ամբողջությամբ ուղղված է աշակերտներին. *երբ նա նստած էր, աշակերտները եկան նրա մոտ, և նա սովորեցրեց նրանց*: Մեզ այժմ ընտրությունն է առաջարկվում՝ մնալ հետևող, կամ դառնալ աշակերտ. ապրել **մեր սեփական կյանքը**, կամ կորցնել այն, ու ապրել **նրա կյանքը**:

Այս որոշման կարևորությունն ընգծելու համար Յիսուսը մեզ ընտրությունը չորս կերպ է ներկայացնում: Նա մեզ տալիս է երկու դարպասի միջև ընտրություն՝ նեղ կամ լայն, որ տանում են դեպի երկու ճանապարհ՝ լայն կամ նեղ, որոնք բերում են երկու վայրի՝ կործանում կամ կյանք: Նա մեզ առաջարկում է երկու ծառ, որից կարող ենք ուտել՝ բարի կամ չար, և ողջ քարոզը նա ավարտում է կառուցելու համար երկու հիմքերի ընտրությամբ՝ ժայռ կամ ավազ:

Յետևողից աշակերտ

1970-ականներին իմ հայրն իր եկեղեցու անդամներին կոչ արեց դառնալու Յիսուսի աշակերտներ, և երեսուն տարեկանում ես ընդունեցի այդ կոչը՝ ուրանալու անձս ու ընդունելու Քրիստոսի կյանքը: Ես արդեն Յիսուսին ընդունել էի իմ կյանք, երբ վեցը տարեկան էի:

Դա տեղի ունեցավ մեր հին, վիկտորիական ոճով կառուցված եռահարկ առանձնատան առջևի բակում, երբ իմ մեծ քույրը, Նորման, հարցրեց, թե արդյոք կուզենա՞մ ընդունել Յիսուսին իմ կյանք: Ես ասացի «այո», նա ինձ հետ աղոթեց, ու այդ ժամանակից ի վեր ես միշտ գիտակցում էի Աստծու ներկայությունը, չնայած լինելով դեռահաս ու երիտասարդ ամուսնացած տղամարդ, ես այս աշխարհի հաճույքների ուժն այդքան կլանող էի համարում: Աստված, իր խղճահարությունից ելնելով, ինձ շատ բանից էր հեռու պահում, որ ես ցանկանում էի, բայց

Եթե ես շվայտ ապրեի աշխարհում, դա ինձ ծուղակը կգցեր ու իմ կյանքի վրա կունենար երկարատև կործանարար հետևանքներ: Այնուամենայնիվ, Աստված թույլ տվեց, որ ես որոշ ցոփություն ունենամ իմ կյանքում ու ինձ ցույց տվեց իմ իրական եսը՝ թույլ տալով հասկանալ Աստծու շնորհքը: Ես պարզապես հետևում էի ճանապարհին, որ փրկություն ուներ, սակայն ապրում էի մի կյանք, որ հաճոյացնում էր իմ եսն ու հետևում իմ սեփական տենչանքներին ու պահանջներին:

Մեզ միայն ոսկի է պետք

Ես երեսուն տարեկանում գիտակից որոշում կայացրեցի դառնալ աշակերտ ու ապրել Լեռան քարոզը՝ փոխարենը պարզապես դրան հավատալուն, և իմ կյանքը սկսեց անճանաչելիորեն փոխվել: Իհարկե, ինքնագովեստով զբաղվել խորհուրդ չի տրվում, բայց իմ հայրը կարող էր ձեզ վկայել այդ փոփոխության մասին, և իմ կինը նույնպես կարող է հիմա ապացուցել, որ նախքան այս փոփոխությունները նա ինձ համարում էր (իր իսկ խոսքերով) «իր հանդիպած ամենամարմնական քրիստոնյաներից մեկը» և չի կարող հավատալ այն կերպարանափոխմանը, որ Աստված, խղճահարվելով, իմ մեջ իրականացրեց:

Ես դեռ երկար ճանապարհ պիտի անցնեմ, մինչև կարողանամ Պողոս առաքյալի հետ ասել, որ *ես մեռած եմ, և միայն Քրիստոսն է ապրում իմ մեջ*, բայց հավատացած եմ, որ դա հնարավոր է անգամ իմ դեպքում, և ցանկացած այլ մարդու դեպքում, ով պատրաստ է գինը վճարել:

Ցավոտ գործընթաց

Չետևողից աշակերտ դառնալու, մարմնականից բարեպաշտություն փոփոխությունը ցավոտ գործընթաց է, և ես դեռ այդ ցավից չեմ

ագատվել: Մաքուր ոսկին միայն ստացվում է կրակի հաշվին: Ոսկին պետք է գնել, իսկ գինը ներսի ամենաճածուկ մասերում ճշմարտության հուրն է:

Լավողիկեի գաղջ մարմնական եկեղեցու դարմանը հետևյալն էր. *«Կր թելադրեմք քեզի, որ գնես ինձմէ կրակի բովեն անցած ոսկի՝ որ հարստանաս, ու ճերմակ հանդերձ՝ որ հագնիս, որպէսզի մերկութեանդ ամօթը չերեւնայ. եւ դե՛ղ դիր աչքերուդ՝ որ տեսնես» (Հայտնություն 3:18):*

Թույլ տվեք կոչ անել բոլոր քրիստոնյաներին: Խնդրում եմ, մի՛ վախեցեք կրակից. այն միայն այրում է աղբը:



ԳԼՈՒԽ 11

Մի՛ դատիր

Մի՛ դատէք, որպէսզի չդատուիք: Որովհետեւ ինչ դատաստանով որ դատէք՝ անով պիտի դատուիք, եւ ինչ չափով որ չափէք, անով պիտի չափուի ձեզի... ...Կեղծաւոր, նախ հանէ՛ քո՛ աչքէդ գերանը, եւ այն ատեն յստակ պիտի տեսնես՝ հանելու համար չիւղը եղբօրդ աչքէն:

Մատթեոս 7:1-5-ից

Որքան հապիւտեայ ենք մենք մեր մերձավորին կշռում նույն կշեռքով, ինչ ինքներս մեպ:

Թովմա Ա Կենսագի

Հետեւարար ատենէն առաջ մի՛ դատէք՝ մինչեւ որ Տէրը գայ. ինք պիտի լուսաւորէ խաւարին գաղտնիքը ու երեւան պիտի հանէ սիրտերուն ծրագիրները...:

Ա Կորնթացիս 4:5

Մատթեոսի ավետարանի գլուխ 7-ը սկսում է Յիսուսի մի զգուշացմամբ. մենք պետք է զգուշ լինենք, թե ինչպես ենք դատում: Քրիստոնյաները հաճախ են այս սուրբ գրութիւնն օգտագործել չդատելու մասին՝ որպէս եղբայրակից քրիստոնյաների մեղքն ու սխալը թույլ տալու պատճառ, ու պնդում են, թե «մի՛ դատէք, որպէսզի չդատվէք» բառերի պատճառով մեզ թույլ չի տրվում որևէ բան կամ որևէ մեկին դատել: Սակայն սա իրականում ամենևին էլ ճշմարիտ չէ:

Մեր աչքի գերանը

Պնդումը պետք է կարդալ համատեքստում, և եթե մենք կարդանք այս գլխի առաջին հինգ տողերը, ապա պարզ կլինի, որ Հիսուսը շեշտը դնում է այն բանի վրա, որ սխալ է դատել, եթե մենք հաշվի չենք առել, որ ունենք միևնույն, կամ ավելի մեծ սխալներ, և միգուցե ինքներս ենք մեղավոր միևնույն մեղքերում, ինչ դատում ենք ուրիշի մեջ: Իրականում, Հիսուսն ասում է, որ եթե մենք հանենք մեր աչքի **գերանը**, ապա հստակորեն կտեսնենք և կօգնենք մեր եղբորը հանելու իր աչքի շյուղը: Այս շեշտը նշանակում է, որ մենք պետք է ինքներս մեզ դատենք **Նախքան** ուրիշին դատելը:

Սակայն կան մի քանի բաներ, որոնք մեզ թույլ չի տրվում դատել, և ես պատրաստվում եմ դիտարկել այն, ինչ մենք երբեք չպետք է դատենք՝ անկախ հանգամանքներից, իսկ այնուհետև կդիտարկեմ այն, ինչ մենք կարող ենք ու պետք է դատենք:

Մինչև մենք չհասկանանք տարբերությունը, շատ հեշտ կլինի դատել արգելված բաներն ու անտեսել այն բաները, որ մեզ ասվում է դատել:

Արգելված տարածք

Գոյություն ունի մի ոլորտ, որը մեզ, որպես քրիստոնյայի, երբեք թույլ չի տրվում դատել. դա մեկ այլ մարդու սիրտն է, քանզի միայն Աստված գիտի մարդու սիրտը (տես Բ Մացորդաց 6:30-ը և Երեմիա 17:9-ը): Սա նշանակում է, որ քանզի ես չգիտեմ մարդու դրդապատճառները, մղումները և ցանկությունները, ես պետք է մարդու սրտի դատաստանն ամբողջությամբ թողնեմ Աստծուն:

Ինձ թույլ է տրվում դատելու իմ եղբայրակցի գործողությունները, և ես, իրապես, պետք է անեմ դա: Սպանությունը, շնանալը կամ ստախոսությունը բոլորը արտաքին գործողություններ են, իսկ ինձ տրված է Աստծու խոսքը, որն ինձ ասում է, թե որ գործողությունն է

ճիշտ, և որը՝ սխալ: Ես սա ամբողջությամբ կքննարկեմ, երբ հաջորդող գլուխներում դիտարկեմ այն, ինչ մեզ ասվում է դատել, բայց եկեք նախ զգուշությամբ դիտարկենք դատելու ողջ գաղափարը:

Դատելը բաղկացած է երկու հստակորեն առանձնացված գործընթացից: Մեր սովորական դատարանը դրա լավ օրինակ է: Առաջին գործընթացը գնահատել է: Սպանության մեջ մեղադրվող անձը պետք է գնահատվի, այն է՝ դատարանը պետք է դատի նրան, որպեսզի որոշի՝ արդյոք նա մեղավոր է, թե՞ անմեղ: Այս գնահատումից հետո, եթե ապացուցվի, որ նա անմեղ է, մեղադրյալն ազատ կարձակվի, ու դատը կավարտվի: Բայց մյուս կողմից եթե նա մեղավոր ճանաչվի, ապա երկրորդ գործընթացն է երևան գալիս, և ավելի ուշ դատավորը պետք է վճիռ կայացնի: Այլ կերպ ասած, նա կդատի, այն է՝ կգնահատի նրա պատիժը՝ որպես թույլ կամ դաժան: Միայն այդ ժամանակ նա կսկսի կրել պատիժը:

Մարդն արդեն մեղավոր է ճանաչվել՝ անկախ պատժի դաժանության աստիճանից: Այս երկու գործընթացները, չնայած կապված են իրար հետ, այնուամենայնիվ տարբեր կիրառում ու իրականացում ունեն:

Սատանան դեռ ազատ է

Մեկ այլ օրինակ է մեր թշնամի Սատանան, որն արդեն դատվել է Զիսուսի կողմից՝ խաչի վրա: Աստվածաշունչն ասում է, որ Քրիստոսը մերկացրեց խավարի պետություններն ու իշխանությունները: *«...և մերկացուց պետութիւններն ու իշխանութիւնները, և հանրութեան նշաւակ դարձուց՝ անով յաղթելով անոնց» (Կողոսացիս 2:15):* Սատանան մեղավոր ճանաչվեց մարմնացած Աստծուն՝ Զիսուս Քրիստոսին խաչելու համար:

«Այս աշխարհի իշխաններէն ո՛չ մէկը ճանչցաւ զայն. քանի որ եթէ ճանչցած ըլլային, չէին խաչեր փառքի Տէրը» (Ա Կորնթացիս 2:8):

Սատանան այս պահին դեռ չի սկսել իր պատիժը կրելը: Սատանան

դեռ ազատ է և դեռ այս աշխարհի աստվածն է: Նրա դատավճիռը, նրա պատիժը, կսկսի, երբ Աստված, դատավորը, նրան կրակի լիճն ուղարկի (տես Հայտնություն 20:10-ը): Սա դեռ տեղի չի ունեցել, ինչը լավ օրինակ է դատելու երկու տարբեր գործընթացների համար:

Մեկ այլ զգուշացում Հիսուսից

Հիսուսը մեկ այլ զգուշացում է բերում դատի երկու գործընթացների մասին համար երկուսում, երբ ասում է. *«Որովհետև ինչ դատաստանով որ դատեք՝ անով պիտի դատուիք»*: Սա աստվածային կանոն է. ինչպես մենք դատենք, գնահատենք մարդկանց, այնպես էլ Աստված պետք է մեզ դատի: Նա այնուհետև ավելացնում է մեկ այլ արտահայտություն, որը համապատասխանում է պատիժն իրականացնելու մեր ձևին. *և ինչ չափով որ չափեք, նրանով պիտի չափվի ձեզ*: Այն կարեկցանքը կամ դաժանությունը, որով մենք կչափենք պատիժը, իրականում կորոշի, թե ինչպես Հիսուսը մեզ կպատժի, երբ կանգնենք Հիսուսի դատի առաջ՝ հաշիվ տալու այն արարքների համար, որ *մարմնում եղած ժամանակ ենք կատարել*, այն է՝ գնահատվելու վարձատրության կամ պատժի համար (Բ Կորնթացիս 5:10 և Ղուկաս 12:47-48):

Նախ ինքդ քեզ դատիր

Մենք միշտ էլ մարդու մեղքը պիտի դատենք, ինքներս մեզ Մատթեոսի ավետարանի գլուխ հինգի լույսի ներքո դատելուց **հետո**, և պետք է համոզված լինենք, որ մենք միևնույն մեղքը մեր սրտում չենք գործում: Մենք միշտ պետք է պատիժը չափենք սիրով ու կարեկցանքով:

Ես դատելու այս երկփուլ գործընթացը որպես ուղեցույց եմ կիրառում իմ սեփական երեխաներին պատժելուց: Ես միշտ դատում եմ նրանց պահվածքը, այլ ոչ նրանց սրտերը: Ես անգամ չգիտեմ իմ

սեփական երեխաների սիրտը, բայց ես պետք է դատեմ ու պատժեմ նրանց արտաքին գործողությունները, եթե բարեպաշտ հայր եմ: Շատ դժվար է դատել մեկի արտաքին մեղքը՝ առանց փորձելու նրա ներքին մղումները գնահատելու, բայց մենք երբեք չպետք է ընկնենք ծուղակը՝ մտածելով, թե կարող ենք դա անել. իրականում մեկի մղումները գնահատելը նշանակում է Աստծու դերը տանել, ինչն իրականում չափազանց վտանգավոր արարք է:



ԳԼՈՒԽ 12

ԻՆՃՈՒ՞ չդատել

*Ո՞վ կրնայ ըսել. «Իմ սիրտս զտեցի,
Իմ մեղքէս մաքրուեցայ»:*

Առակաց 20:9

*Մարդուն սիրտը կը ծրագրէ իր ճամբան,
Բայց Տէ՛րը կը հաստատէ անոր քայլերը:*

Առակաց 16:9

Այժմ ես ուզում եմ չորս պատճառ ներկայացնել սուրբ գրություններից, որպեսզի ցույց տամ, թե ինչու մենք չենք կարող մարդու սիրտը դատել:

1. Մենք երևան ենք հանում մեր սեփական սիրտը

«Ուստի, ո՞վ մարդ, ո՞վ ալ ըլլաս, դուն որ կը դատես՝ չունիս արդարացում. քանի որ ի՞նչ բանով որ կը դատես ուրիշը, անով կը դատապարտես դուն քեզ. որովհետեւ դուն որ կը դատես՝ կ'ընես նո՛յն բաները» (Հոովմեացիս 2:1): Առաջին հայացքից մենք երևի կհակասենք Պողոս առաքյալի հռոմեացիներին ուղղված խոսքից վերը բերված այս պնդմանը, քանզի սա, վստահաբար, միշտ չէ, որ ճիշտ է մեզ համար, և հետևաբար չի կարելի այն որպես կանոն ընդունել: Անշուշտ, ես միշտ չէ, որ անում եմ միևնույն բաները, որոնցում մեղադրում եմ ուրիշներին: Խնդիրն այն է, որ Պողոս առաքյալի պնդումը շատ ճշմարտացի է, քանզի մենք միայն կարող ենք դատել՝ ելնելով մեր իսկ փորձից ու նրանից, ինչ աշխարհը ներկայացրել է մեզ: Մարդուն

դատելու համար մենք պետք է «հազնենք նրա կոշիկները» ու մտածենք այն, ինչ իրենք կմտածեն: Սա միայն կարող է հիմնված լինել մեր սեփական սրտի ցանկությունների ու մղումների վրա: Իրականում, **երբ մենք ուրիշին դատում ենք, մենք մերկացնում ենք մեր սեփական գաղտնի սիրտը:**

Հիսուսը երբեք արտաքինը չի դատում, այլ միշտ դատում է սիրտը, քանզի նա չի նայում, թե մենք **ինչ** ենք անում, այն զանազանում է, թե **ինչու** ենք մենք դա անում: Խնդիրն այն է, որ մենք Աստված չենք ու ի վիճակի չենք տեսնելու մարդու սրտի մղումները, ուրեմն միայն կարող ենք դատել մարդու մեղքը, այն է՝ այն, ինչ նա արտաքինից անում է, այլ ոչ թե նրա մղումները: Մարդու սիրտը դատելն Աստծու գործն է, այլ ոչ թե մերը:

Ես պետք է այս փաստարկը հիմնավորեմ ու ասեմ, որ եթե Աստված բացահայտի մեզ այդ մարդու սրտի գաղտնիքները, ապա մենք մեր սեփական դատողությունը չենք կիրառում, այլ միայն խոսում ենք՝ որպես Աստծու գործակալ: Ես հաջորդ գլխում օրինակներ կբերեմ Աստվածաշնչից:

Եթե Աստված գերբնական միջոցներով մեկի սիրտը մեզ չբացահայտի, մենք պետք է շատ զգույշ լինենք, որպեսզի մեր սեփական մոլորեցնող գնահատումն առաջ չգա, ու մենք Աստծուն չօգտագործենք որպես արդարացում՝ մեր սեփական նախապաշարմունքներով կամ ծրագրերով չափելու համար: Սա շատ լուրջ է և քրիստոնյաների կողմից անհրաժեշտ լրջությամբ չի ընդունվում:

2. Մենք դատում ենք մեկ ուրիշի ծառային

«Դուն ո՞վ ես՝ որ կը դատես ուրիշին ծառան. հաստատուն կենայ կամ իյնայ՝ իր իսկական Տէրոջ համար է: Բայց կանգուն պիտի պահուի, որովհետեւ Աստուած կարող է կանգուն պահել զայն: ...Իսկ դուն ինչու՞ կը դատես եղբայրդ, կամ ինչու՞ կ'անարգես եղբայրդ, քանի բոլորս ալ պիտի ներկայանանք Քրիստոսի դատարանը: ...Ուրեմն մեզմէ

Խրաքանչիւրը հաշիւ պիտի տայ Աստուծոյ՝ ինքնիրեն համար: Ուստի ա՛լ չդատենք զիրար. այլ մանավանդ սա՛ վճռեցէք, որ ո՛չ մէկը սայթաքում կամ գայթակղութիւն դնէ իր եղբօր առջեւ» (Հոովմեացիս 14:4-13-ից):

Մեկ այլ պատճառ, որի համաձայն մենք չպետք է դատենք մեր եղբոր մղումները, այն է, որ մենք նրան չենք փրկել: Մենք մեր եղբայրակից քրիստոնյաների համար չենք մահացել խաչի վրա: Ոչ ոք մեր անունով չի մկրտվել: Նրանք իրենց կյանքը մեզ չեն նվիրել, ուրեմն մենք մեր եղբոր վրա որևէ իշխանություն չունենք:

Մեր եղբայրը Քրիստոսի ծառան է, այլ ոչ մերը, և սխալ է դատել մեկ այլ մարդու ծառային: Իրականում, հոգևոր սպասավորը դառնում է բոլորի ծառան և ենթադրվում է, որ պետք է լվանա իր հավատացյալների բազմության ոտքերը, ինչպես Քրիստոսն արեց իր աշակերտների հետ (տես Յովհաննես 13:1-17):

Կարգի՝ հրավիրեք ձեր երեխաներին

Մի լավ օրինակ կա ընտանեկան կյանքից: Եթե իմ երեխաներն իրենց վատ պահեն, ուրեմն որպես նրանց ծնող, ես իրավունք ունեմ, ավելի ճիշտ՝ պարտավոր եմ նրանց պատժել: Սակայն եթե իմ հարևանի երեխաներն են իրենց վատ պահում, ես որևէ իրավունք չունեմ նրանց պատժելու: Ես պետք է խնդիրը նրանց ծնողներին ներկայացնեմ, որպեսզի իրենք որոշեն պատժամիջոցը: Միևնույնը ճիշտ է մեզ համար. մենք պետք է թողնենք, որ Աստված դատի սրտերը՝ որպես բոլորիս երկնային Յայր:

Մարդկանց դատելը սովորաբար նրանց վրա իշխելու մի ձև է, և եկեղեցին հաճախ այս ոլորտում սխալվել է: Աշխարհի համակարգը կառավարվում է մարդկանց վրա իշխելու այս անբարեպաշտ մեթոդով: Յիսուսը եկավ մեզ ազատ արձակելու: Ես չեմ խոսում ընդհանուր առմամբ իշխանության մասին, որը լավ բան է և անհրաժեշտ, որի մասին խոսվում է Աստվածաշնչում, այլ խոսում եմ մարդկանց մանկապույսցիայի ենթարկելու համար իշխանությունը չարաշահելու

մասին՝ սեփական տենչանքներն ու իղձերն ի կատար ածելու նպատակով՝ անկախ նրանից, թե դրանք որքանով են բարի: Մենք պետք է թույլ տանք, որ մարդիկ հետևեն Աստծու առաջնորդությանը: Մենք չենք կարող ասել, որ Աստծու հետ անձնական հարաբերություն ունենք, եթե այն որևէ կոմիտեի կամ կազմակերպության միջոցով է: Սատանայի համակարգը միշտ էլ մասսաները կառավարելն է: Աստծու ճանապարհը յուրաքանչյուր անհատի հետ անձնապես քայլելն է: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր անձ պետք է Աստծուն պատասխանատու լինի, այլ ոչ մարդկանց: Մենք բոլորս էլ պետք է կանգնենք Քրիստոսի առաջ ու անձնապես հաշիվ տանք մեր արարքների ու մղումների մասին, և այն մարդիկ, որոնք մեզ վրա իշխանություն ունեն, պիտի կանգնեն մեր կողքին իրենց անձնական հաշվետվությունը ներկայացնելու:

Եկեք թողնենք, որ Քրիստոսը դատի մղումները, երբ վերադառնա, և ինչպես Պողոս առաքյալն է ասում այս գլխում բերված սուրբ գրությունում՝ եկեք այդ ընթացքում ինքներս մեզ դատենք, որպեսզի սայթաքում չդնենք մեր եղբայրներից որևէ մեկի առջև:

3. Արտաքին տեսքը միշտ չէ, որ ճշմարիտ է

Քանի որ մենք չենք կարող կարդալ մարդու սիրտը, մենք պետք է հիմնվենք արտաքին տեսքի վրա, այն է՝ մեր կամ հավաստի մի վկայի կողմից տեսած փաստերի վրա: Այստեղ խնդիրն այն է, որ փաստերը միշտ չէ, որ ճշմարտությունն են, և ինչպես գիտենք մեր իսկ դատական համակարգից՝ արդարադատությունում գոյություն ունեն սխալներ և աղավաղումներ, սուտ վկայություններ և երդմնազանցություն:

Փաստը ճշմարտությունն է

Երբ ես 1960-ականներին աշխատում էի ավտոմեքենաների առքուվաճառքի ոլորտում, գոյություն չունեի որևէ հստակ սահմանված օրենք, և առքուվաճառքն ինքն էր ստեղծում իր օրենքները: Մենք հաճախ էինք հայտնվում դատարանում՝ գնորդի և վաճառողի միջև տարաձայնությունները հարթելու համար: Այդպիսի դեպքերից մեկը հիշողությանս մեջ է մնացել մինչև այսօր:

Իմ ղեկավարած գործի սեփականատերը քրիստոնյա չէր և որևէ խղճի խայթ չէր զգում սուտ ասելիս՝ ինքնիրեն կամ իր հարստությունը պաշտպանելու նպատակով: Երբեմն նա ինձ խնդրում էր իր հետ դատարան գնալ, և ես ասում էի, որ միայն մի պայման ունեմ, այն է՝ ես կարող էի ասել միայն ճշմարտությունը: Սա հաճախ նրա համար խնդիր էր, ինչը սովորաբար նշանակում էր, որ ես նրան չէի ուղեկցում: Բայց մի կոնկրետ դեպքում նա իրոք իմ վկայության կարիքն ուներ: Ես հավատացած էի, որ այն անձը, որ մեզ մեղադրում էր վատ վարքի մեջ, իրականում փորձում էր մեզ շահագործել, ու երբ սեփականատերն ինձ խնդրեց իր հետ գնալ դատարան, ես ասացի այն, ինչ միշտ. «Այո, բայց ես միայն ճշմարտությունն եմ ասելու»:

Ճշմարտությունն ասելը

Նա իրոք իմ վկայության կարիքն ուներ, քանի որ ինձ անակնկալի բերեց՝ ասելով. «Բարի, մենք այս անգամ ամեն ինչ քո ասածով կանենք ու երկուսս էլ ճշմարտությունը կասենք»: Եվ մենք գնացինք դատարան ու ճշմարտությունն ասացինք: Մենք տանուլ տվեցինք, և սեփականատերը ստիպված եղավ փոխհատուցում վճարել: Դա վերջին անգամն էր, որ ես նրա հետ դատարան գնացի:

Այս դեպքին հաջորդող մի իրադարձություն կա, որն ինձ խիստ զարմացրեց ու սովորեցրեց մի սկզբունք, որը ես երբեք չեմ մոռանա: Մի ամիս անց իմ տնօրենը, ավտոմեքենաների ընկերության

սեփականատերը, որը մասուն է, այցելում է մասունական օթյակի պարտեզում կազմակերպված մի խնջույքի, որի ընթացքում հայտնվում է ընդամենը մեկ ամիս առաջ մեր դատավարությունը վարող դատավորի կողքին: Դատավորը նրան ճանաչում է ու հարցնում. «Դուք մի քանի շաբաթ առաջ իմ դատարանում չէի՞ք արդյոք»:

Ազնիվ դատավոր

Իմ տնօրենն ասաց, որ դա ճիշտ էր և որ մենք տանուլ էինք տվել: Նա դատավորին նաև ասաց, որ մենք ճշմարտությունն էինք ասել, սակայն այնուամենայնիվ տանուլ էինք տվել: Դատավորն այնուհետև զարմացրեց նրան՝ ասելով. «Ջենց այդտեղ էլ դուք սխալվել եք: Չաջորդ անգամ դատարան գալուց ինձ փաստեր բերեք: Ես չգիտեմ ճշմարտությունը: Ես միայն կարող եմ դատել՝ ելներով այն փաստերից, որ իմ առջև կան»: Մինչ այդ օրը ես երբեք չէի հասկացել, որ փաստերի և ճշմարտության միջև տարբերություն կար: Դա փոխել է մարդկանց դատելու իմ ողջ աշխարհայացքը:

Արդյո՞ք ես ձեզ ներկայացնում եմ մասունական մի դատավորի փիլիսոփայությունը: Ճիշտ հակառակը, սա կարելի է նկատել Աստվածաշնչում ամեն քայլի: Թույլ տվեք սուրբ գրություններից ձեզ երկու օրինակ բերել, որպեսզի ապացուցեմ այս կարևոր պնդումը, այն է՝ փաստերն ու ճշմարտությունը կարող են իրար հակադրվել:

Ա: Չովսեփին ու նրա բռնաբարության փորձը

Ճնևոց գրքի գլուխ 39-ի պատմությունը քաջաձանոթ է: Պետափրեսը Չովսեփին դարձրել էր իր բոլոր գործերի կառավարիչն ու նրան լիովին վստահում էր: Պետափրեսի կինը անհաջող փորձ կատարեց մի քանի անգամ գայթակղելու Չովսեփին, բայց նա միշտ կնոջը մերժում էր:

Մի օր, երբ նրա ամուսինը տանը չէր, նա անհագությամբ կրկին

փորձեց գայթակղել, բայց կրկին ապարդյուն, քանզի Յովսեփը փախավ նրանից՝ թողնելով իր հագուստը: Կինը հագուստը ներկայացրեց ամուսնուն՝ որպես փաստ այն բանի, որ Յովսեփը փորձել էր իրեն բռնաբարել: Ակնհայտ է, որ Պետափրեսը Յովսեփին լիովին վստահում էր, հակառակ դեպքում նրան չէր հանձնի իր ֆինանսների և ողջ տնտեսության կառավարումը: Եթե Պետափրեսի կինը միայն նրան ասեր, թե Յովսեփը փորձել էր իր նկատմամբ ոտնձգություն կատարել, համոզված եմ, որ նա դա կվերագրեր իր կնոջ երևակայությանը և այն բանին, որ միգուցե կինն ամեն ինչ չափազանցնում էր իր մտքում: Սակայն երբ կինը Պետափրեսին ներկայացրեց նյութական ապացույցը, Յովսեփը միանգամից բանտ նետվեց: **Նրա ապացույցը մեղավոր էր ճանաչել Յովսեփին**, բայց ճշմարտությունը ճիշտ հակառակ էր այն բանի, ինչ փաստն ասում էր:

Բ: Գաբավոնացիները

Չեսու 9:3-16-ում բերված է հետևյալ պատմությունը: Աստված Իսրայելին ասել էր, որ ոչնչացնեք Քանանի բոլոր բնակիչներին, և նրանք իրենց արշավը սկսեցին՝ ոչնչացնելով Երիթով և Գալի քաղաքները ոչնչացնելով:

Գաբավոնի բնակիչները վախեցան, որ Իսրայելն իրենց հետ ու իրենց քաղաքի հետ էլ նույնը կանի, հետևաբար խաբեություն կիրառեցին իրենք իրենց փրկելու համար: Նրանք մարդիկ ուղարկեցին Չեսուի մոտ՝ բորբոսնած հացով, մաշված ցնցոտիներով և պատռված ու փոշոտ հագուստով:

Նրանք Չեսուին ասացին, թե մի հեռավոր երկրի քաղաքից էին ու երբ իրենք ճանապարհ էին ընկել հացը թարմ էր եղել, իսկ իրենց կոշիկներն ու հագուստը՝ նոր: Նրանք Չեսուից երդում էին ուզում, որ Իսրայելն իրենց չի ավերի: **Չեսուն նայեց ակնհայտ փաստերին** և առանց Աստծու հետ խորհրդակցելու՝ որոշեց, որ նրանք իրոք հեռու երկրից էին ու վճռեց, թե ապահով կլինեք նրանց հետ դաշինք կնքել:

Ճճմարտությունը շատ ուշացավ

Երբ Յեսուն հետո հայտնաբերեց, որ նրանք ստել էին, արդեն շատ ուշ էր, քանի որ Նա Աստծու առաջ երդվել էր և չէր կարող իր երդումը զանցել: Նա կոմպրոմիսի գնաց ու գաբավոնցիներին դարձրեց հարայելի ծառաները. այսպիսով, նրանք իրենց կյանքն իրոք փրկեցին, ինչպես և խորամանկորեն նախատեսել էին:

Այստեղ նույնպես փաստերն անվիճելի էին, բայց դրանք իրականում ճճմարտության ճիշտ հակառակն էին: Այս երկու օրինակները պետք է բավարար լինեն, որպեսզի մեր մեջ մտավախությունն առաջացնեն՝ դատելու զուտ փաստերի հիման վրա և առանց Աստծու հետ խորհրդակցելու: Թույլ տվեք այս սկզբունքն ավարտել Յիսուսի հետևյալ խոսքերով. *«Մի՛ դատեք երեւոյթին համեմատ, հապա դատեցէք արդարութեամբ»* (Հովհաննես 7:24):

4. Մեզ թույլ չի տրվում դատել մարմինը

«Որովհետեւ Քրիստոսի սէրը կը պարտադրէ մեզ, ու մեր դատումը սա՛ է, թէ եթէ մէկը մեռաւ բոլորին համար, ուրեմն բոլորն ալ մեռան: Ան բոլորին համար մեռաւ, որպէսզի ապրողները այլեւս չապրին իրենք իրենց համար, հապա անո՛ր համար՝ որ մեռաւ իրենց համար, եւ յարութիւն առաւ: Հետեւաբար ասկէ ետք մենք ո՛չ մէկը կը ճանչնանք մարմինով. թէպէտ Քրիստոսը ճանչցանք մարմինով, հիմա ա՛լ այնպէս չենք ճանչնար: Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, ան նոր արարած մըն է. նախկին բաները անցան, եւ ահա՛ ամէն բան նոր եղաւ.» (Ք Կորնթացիա 5:14-17):

Արտաքինով դատելը

Վերը բերված սուրբ գրությունը, որ պնդում է, թե ամեն բան

անցավ և ամեն բան նոր եղավ, սովորաբար մեջբերվում է համատեքստից դուրս: Վերոնշյալ համարներից մենք տեսնում ենք, որ համատեքստն իրականում դատելու մասին է: Պողոս առաքյալն ասում է, որ մենք ոչ մեկին մարմնով չենք ճանաչում: Մարմինը մեր Ադամի եությունն է, և Պողոս առաքյալն ասում է, որ չնայած նրան, որ առաքյալները Հիսուսին մարմնով ճանաչեցին, նրանք չէին կարող նրան մարմնով դատել:

Սա այսօր ճշմարիտ է մեզ համար: Քանի որ մեր դոկտրինն ասում է, որ Հիսուսը մեղք չի գործել, ինչը, անշուշտ, ճշմարիտ է, մենք Աստվածաշնչում նկարագրված նրա կյանքում որևէ սխալ չենք փնտրում: Սակայն, եթե մենք ուշադիր դիտարկենք Հիսուսի գործողությունները, ապա բազմաթիվ բաներ կգտնենք, որի համար նրան կարող ենք քննադատել, եթե կամենանք: Այլ կերպ ասած, մենք Հիսուսին միայն արտաքինով կդատենք, եթե միայն նայենք նրա արարքներին ու անտեսենք այդ արարքների միտումները:

Հարգեք իշխանավորներին

Վստահաբար, խիստ անքաղաքավարի է, երբ Հիսուսն իր առաքյալներին ասում է, թե Հերոդոտոս թագավորն աղվես է: *«Ինք ալ ըսաւ անոնց. «Գացէ՛ք, ըսէ՛ք այդ աղուեսին. “Ահա՛ ես դեւեր դուրս կը հանեմ ու բժշկութիւններ կ'ընեմ այսօր եւ վաղը, ու երբորդ օրը աւարտած պիտի ըլլամ”» (Ղուկաս 13:32):*

Պողոս առաքյալն ասում է, որ մենք պետք է հարգենք իշխանավորներին: *«Ուրեմն կը յորդորեմ որ ամէն բանէ առաջ աղերսանք, աղօթք, պաղատանք ու շնորհակալութիւն մատուցանէք բոլոր մարդոց համար, մանաւանդ թագաւորներուն եւ իշխանաւորներուն համար, որպէսզի խաղաղ ու հանդարտ կեանք վարենք՝ ամբողջ բարեպաշտութեամբ ու պատկառանքով» (Ա Տիմոթեոս 2:1-2):*

Արդյոք Հիսուսը ճիշտ էր, երբ նա մտրակ սարքեց ու առևտրականներին տաճարից դուրս քշեց, իսկ այնուհետև սեղանները

շուռ տվեց՝ ցրիվ տալով ապրանքը: Անգամ եթե առևտրականները սխալ էին, Յիսուսը պետք է նրանց հետ նախ խոսեր ու հնարավորություն տար հավաքելու իրենց իրերը: Միգուցե նա պետք է գործը Սանհեդրինին ներկայացներ: Անշուշտ, նա չպետք է իր ձեռքն առներ օրենքը: Արդյոք ի՞նչ տեղի կունենար, եթե բոլորս էլ նույնն անեինք:

«Եւ չուանէ խարազան մը չինելով՝ տաճարէն դուրս հանեց բոլորը, ոչխարներն ու արջառներն ալ. թափեց լուծայափոխներուն լուծաները, տապալեց սեղանները...» (Հովհաննես 2:15):

Ես չեմ կարող պատկերացնել, որ որևէ մեկը, ցանկացած քրիստոնեական դավանանքից, թույլ կտար, որ անգամ ճշմարտացիորեն ես որևէ եկեղեցու երիտասարդաց խումբ մտնեի, շուռ տայի խաղային ապարատներն ու ջարդուխուրդ անեի թենիսի սեղանները և երիտասարդներին շենքից դուրս վճռեի: Եթե եկեղեցին սխալ է այս խաղերն իր տարածքում թույլ տալով, դա դեռ չի նշանակում, որ որևէ մեկը պետք է թույլ տա այն պահվածքը, որ ես կդրսևորեմ:

Մեր եղբայրը նոր արարած է

Եթե մենք չիմանայինք, որ Յիսուսն անմեղ է եղել, մենք կարող էինք շատ ավելի դեպքեր դիտարկել և կկարողանայինք նրա դեմ գործ հարուցել՝ պարզապես արտաքին երևույթները դատելով:

Եթե մենք բավարարված ենք այն բանով, որ տվյալ անձն Աստծուց է ծնված, ուրեմն մենք այլևս չենք կարող նրան հին Էուբայան համաձայն դատել, որովհետև նա նոր արարած է: *Նախկին բաները անցան, և ահա ամեն բան նոր եղավ:* Նա այժմ Աստծու աչքին արդար է: Մենք **կարող ենք** դատել այդ մարդու մեղքը, և միգուցե նա պատժվելու կարիք ունենա, բայց մենք երբեք մարդուն չենք կարող դատել, այն է՝ նրա միտումները, նրա սիրտը: Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղղված նամակից բերված այս սուրբ գրությունը, որ դիտարկեցինք, մեզ չի ասում, թե ինչպես պետք է ինքներս մեզ դիտարկենք: Այս համարն ասում է, թե ինչ աչքով մենք պետք է մեր եղբորը նայենք՝ դատելու

համատեքստում:

Այս գլուխը եզրափակելով՝ եկեք հիշենք, որ արտաքին մեղքը դատելը միշտ էլ ճիշտ է, քանզի մենք Աստծու խոսքն ունենք, որ մեզ հստակորեն ասում է, թե ինչն է ճիշտ և ինչը՝ սխալ: Բայց մեղքի միտումներն ու պատճառները Աստծու դատելու բանն են, ու մենք պետք է դա թողնենք նրան:



ԳԼՈՒԽ 13

Ի՞նչ պետք է դատենք

Մարգարէները թող խօսին՝ երկու կամ երեք հոգի, ու միւսները վճռեն:

Ա Կորնթացիս 14:29

Որովհետեւ եթէ մենք մեզ դատէինք՝ չէինք դատուեր: Իսկ երբ կը դատուինք՝ կը պատժուինք Տէրօջմէն, որպէսզի չդատապարտուինք աշխարհի հետ:

Ա Կորնթացիս 11:31-32

Կը խօսիմ որպէս թէ իմասուններու հետ. դո՛ւք դատեցէք ինչ որ կ'ըսեմ:

Ա Կորնթացիս 10:15

Այժմ մենք պետք է հավասարակշռութիւն սահմանենք անցյալ գլխի համեմատ, ուր տեսանք, որ մենք չենք կարող դատել մարդու սիրտը, այլ միայն նրա արտաքին մեղքը, իսկ այժմ նայենք այն բաները, որոնք դատելու ցուցում է տրվում մեզ: Դատելը գնահատել է, վճռել, և Աստվածաշունչն ասում է, որ որպէս քրիստոնյա շատ բաներ կան, որոնք մենք պետք է գհանահատենք: Սա անտեսելը նույնքանով է մեղք, որքանով դատելն այն, ինչ արգելված է դատել: Այժմ ես պատաստվում եմ դիտարկել վեցը բնագավառ, որ մեզ ասվում է, թե պետք է դատենք, և հավատացած եմ, որ դրանք կծածկեն Աստծու և մեր հավատակից ընկերների հետ քրիստոնյա ընթացքի բոլոր ոլորտները:

Յուրաքանչյուր օրինակի համար մենք կտեսնենք, որ դեռ

բավական չէ մեղքի ու անմեղութեան միջև դատելը, այլ եթե մեղադրյալը մեղավոր է, ուրեմն արդարադատության երկրորդ մասը պետք է կիրառվի, այն է՝ պատիժ կամ տույժ, որը կհամապատասխանի հանցանքին:

1. Սեռական անբարոյականությունն եկեղեցում

«Առհասարակ կը լսուի թէ ձեր մէջ պոռնկութիւն կայ. եւ այնպիսի պոռնկութիւն՝ որ հեթանոսներուն մէջ իսկ չկայ, որպէս թէ մէկը ունենայ իր հօր կիներ: Ու դուք հպարտացած էք, փոխանակ սգալու, որպէսզի ձեր մէջէն վերացուի ա՛ն՝ որ այս արարքը կատարեց: Արդարեւ ես - թէպէտ մարմինով բացակայ եմ, բայց հոգիով՝ ներկայ - արդէն իսկ դատեցի այսպիսի արարք գործողը, որպէս թէ ներկայ ըլլալով» (Ա. Կորնթացիս 5:1-3):

Վերոնշյալ հատվածում Պողոս առաքյալը զարմացած է ու հիասթափված, որ եկեղեցում սեռական մեղք գոյություն ունի, և որ այն չի դատվել այս երկու փուլով: Պողոս առաքյալը խոսում է նրանց հետ այն մասին, որ անգամ ոչ-քրիստոնյաները գիտեն, որ այդ սեռական գործողությունը սխալ է, բայց նա ամեն ինչ այս փուլում չի թողնում՝ գնահատելով, թե որն է մեղքն ու որը՝ թույլատրելի, նա շարունակում է՝ կայացնելով վճիռ կամ պատիժ, որ արդարադատությունն է պահանջում:

Քաղցկեղի նման

Պատիժը, որ նա առաջարկում է, իրոք շատ խիստ է, քանզի նա ասում է, որ նրանք մեղսավորի մարմինը պետք է Սատանային հանձնեն, որպեսզի նրա հոգին փրկվի, երբ Հիսուսը դատի իր եկեղեցին՝ երկրորդ գալստյան ժամանակ: Նա բացատրում է, թե ինչու է իր վճիռը սաստիկ, և դա այն պատճառով է, որ մեղքը, ինչպես քաղցկեղը, կտարածվի ողջ մարմնով, եթե չվերացվի: *«Այդ ձեր պարծանքը լաւ չէ:*

Չէ՞ք գիտեր թէ քիչ մը խմորը՝ կը խմորէ ամբողջ զանգուածը» (Ա Կորնթացիս 5:6):

Գոռոզությունը մեծագույն մեղքն է

Չամոզված եմ, որ յուրաքանչյուր եկեղեցում գոյութիւն ունի այս կամ այլ կարգի սեռական անբարոյականութիւն, որ թաքնված է մակերեսի տակ, բայց Պողոս առաքյալը վիուկների որսի մասին չի խոսում: Նա խոսում է մի բանի մասին, որը առհասարակ իմացված էր և անդամների համար ընդունելի էր դարձել: Սա էր առավել մեծ մեղքը, այն է՝ ավագանու շրջանակում գոռոզութիւնն ու ինքնահավանութիւնը: *«Ու դուք հպարտացած էք, փոխանակ սգայու, որպէսզի ձեր մէջէն վերցուի ան՝ որ այս արարքը կատարեց» (տող 2):* Նկատեք, որ նա երբեք չի դատում մարդու միտումները, այլ դատում է նրա արտաքին մեղքն ու այնուհետև վճիռ կայացնում, կամ առաջարկում այն բուժումը, որը անհրաժեշտ է:

2. Անհամաձայնութիւններ՝ քրիստոնյաների միջև

«Եթէ ձեզմէ մէկը խնդիր մը ունենայ ուրիշի մը հետ, միթէ կը յանդգնի՞ անարդարներուն առջեւ դատուիլ, եւ ո՛չ թէ սուրբերուն առջեւ: Չէ՞ք գիտեր թէ սուրբե՛րը պիտի դատեն աշխարհը. ու եթէ աշխարհը կը դատուի ձեզմէ, դուք արժանի չէ՞ք դատելու չնչին խնդիրները: Չէ՞ք գիտեր թէ մենք պիտի դատենք հրեշտակները. հապա ո՛րչափ աւելի այս կեանքին բաները: Ուրեմն եթէ դատեր ունիք՝ այս կեանքի բաներուն համար, դատաւո՛ր նշանակեցէք եկեղեցիին անարգները: Ձեզ ամչցնելու համար կ'ըսեմ. իրա՞ւ իմաստուն մը չկայ ձեր մէջ, ո՛չ իսկ մէկ հատ, որ կարենայ վճռել իր եղբայրներուն միջեւ: Հապա եղբայր՝ եղբոր հետ դատ կը վարէ, այն էլ՝ անհաւատներուն առջեւ: Ուրեմն արդէն ծանր յանցանք մը կայ ձեր մէջ, քանի որ իրարու հետ դատեր ունիք. ինչո՞ւ փոխարէնը

դուք չէք անհրաւուիր. ինչո՞ւ փոխարէնը դուք զրկանք չէք կրեր: Նոյնիսկ դո՛ւք կ'անհրաւէք ու կը զրկէք, այն ալ՝ եղբայրներո՛ւն» (Ա Կորնթացիա 6:1-8):

Պողոս առաքյալն այստեղ խիստ հատկանշական է, քանզի նա ասում է, որ եթէ երկու քրիստոնյաների միջև անհամաձայնություն կա, ուրեմն մենք երբեք չպետք է գործը տանենք աշխարհի դատարաններ: Եկեղեցին պետք է միջամտի ու դատի անհամաձայնությունը: Այն պետք է իր սեփական տունը կարգի բերի՝ նախքան աշխարհին ապաշխարելու կոչ անելը: Նա գրեթէ ծաղրում է նրանց ու ասում, որ անգամ եկեղեցու ամենաթույլ անդամը պետք է Քրիստոսի միտքն ունենա ու կարողանա վճռել ճիշտ դատը:

Լրացուցիչ մղոնը

Կարևոր է ասել, որ Պողոսը նրանց նաև դատում է մեկ այլ տեսակետից ու կշտամբում է եկեղեցուն առաջին հերթին անհամաձայնություն ունենալու համար. իսկ ու՞ր մնաց մյուս այտը շրջելը, լրացուցիչ մղոնը գնալը, բաճկոնը նույնպես տալը: Նա ասում է, որ հնարավոր է, թե նրանք պետք է անտեղի տառապեն ու գործն Աստծուն հանձնեն՝ փոխարենն իրենց իրավունքները պաշտպանելու:

3. Կեղծավորություն

Յիսուսը միշտ էլ թույլ մարդկանց և Աստծու թագավորությունից դուրս գտնվող մեղսավորների նկատմամբ կարեկցանք ուներ: Նա նուրբ էր, բարի ու ողորմածություն էր ցուցաբերում նրանց հանդեպ: Սակայն եթէ Աստծու ժողովրդի մեջ նա երբևէ դեմ էր ամնում գոռոզության, կեղծավորության, «ինքնարդարության», լեզալիզմի և ազահության, նա անգուր էր լինում և ոչ միայն մերկացնում նրանց իր դատով, այլև վճիռ կայացնում ու անիծում նրան: Ես մի թևավոր խոսք եմ կիրառում, որը

թեպետ գավեշտական է, կատարյալ ճշմարտություն է... «Հիսուսը եկավ տանջվողներին մխիթարելու և մխիթարվածներին տանջելու համար»: Սրա շատ օրինակներ կան ավետարաններում, բայց թույլ տվեք միասին անցնել Ղուկաս 11:37-ից մինչև վերջ մի քանի համարով:

Այս օրինակն ապացուցում է, թե որքան էր Հիսուսն ատում ու թե որքան կարիք ուներ դատելու և մերկացնելու կեղծավորությունը, քանզի սա ասվեց մի փարիսեցու տանը: Հիսուսին հրավիրել էին մի փարիսեցու տուն ճաշկերույթի, և նա այս դաժան խոսքերն ասաց հենց այդ մարդու սեղանի վրա: Հիսուսը նաև դատեց կուրությունը, գոռոզությունն ու լեգալիզմը, քանզի դրանք բոլորն էլ Աստծո ժողովրդի միևնույն հոգևոր մեղքի մի մասն են:

Հիսուսը յուրաքանչյուր դասակարգի համար ասում է «վայ ձեզ»: Սա պարզապես ողբն արտաայտելու մի հին բառ է, և երբ Եսայի մարգարեն ասում էր «վայ ինձ», նա պարզապես ասում է, որ ինքը ողբի մեջ էր: Սակայն երբ մի մարդ մեկ ուրիշին է ասում դա, ինչպես Հիսուսն ասաց «**Վայ ձեզ**», սա անեծքի պես մի բան է՝ մարգարեություն, որ նրանց գլխին արհավիրք ու ողբ է գալու:

Թաքնված չարություն

«Երբ այս բաները կը խօսէր, Փարիսեցի մը կը թախանձեր անոր՝ որ իր քով ճաշէ: Ան ալ մտաւ եւ սեղան նստաւ: Երբ Փարիսեցին տեսաւ՝ զարմացաւ, որովհետեւ ճաշէն առաջ չլուացուեցաւ: Տէրը ըսաւ անոր. «Հիմա դուք՝ Փարիսեցիներ, կը մաքրէք զաւաթին ու պնակին արտաքինը, բայց ձեր ներքինը լեցուն է յափշտակութեամբ եւ չարութեամբ: Անմիտներ, ա՛ն որ արտաքինը ըրաւ, ներքինն ալ ինք չըրա՞ւ: Սակայն ողորմութի՛նն տուէք անոնց մէջ եղածներէն, եւ ահա՛ ամէն բան մաքուր կ'ըլլայ ձեզի» (տող 37-41):

ԿՈՆՐՈՒԹՅՈՒՆ

«Բայց վա՛յ ձեզի՝ Փարիսեցիներուդ, որ կը վճարէք անանուխին, փեղենային եւ ամէն տեսակ բանջարեղէնի տասանորդը, բայց զանց կ'ընէք իրաւունքը եւ Աստուծոյ սէրը. ասո՛նք պէտք է ընէիք, ու զանոնք չթողուիք» (տող 42):

ԳՈՌԾՈՂՈՒԹՅՈՒՆ

«Վա՛յ ձեզի՝ Փարիսեցիներուդ, որ կը սիրէք առաջին աթոռները՝ ժողովարաններու մէջ, եւ բարեւները՝ հրապարակներուն վրայ: Վա՛յ ձեզի՝ կեղծաւո՛ր զպիրներ ու Փարիսեցիներ, որ նման էք անյայտ գերեզմաններու, որոնց վրայէն մարդիկ կը քալեն եւ չեն գիտեր» (տող 43-44):

Լեզալիզմ

«Օրինականներէն մէկը ըսավ անոր. «Վարդապե՛տ, ա՛յսպէս խօսելով՝ մե՛զ ալ կը նախատես»: Իսկ ան ըսաւ. «Զեզի ալ վա՛յ՝ օրինականներո՛ւդ, որ դժուարակիր բեռներ կը բեռցնէք մարդկոց, բայց դուք՝ ձեր մէ՛կ մատով չեք հպիր այդ բեռներուն: Վա՛յ ձեզի, որ գերեզմաններ կը կառուցանէք մարգարէներուն, մինչդեռ ձեր հայրե՛րը սպաննեցին անոնց: Ուստի կը վկայէք եւ հաւանութիւն կու տաք ձեր հայրերուն գործերուն. որովհետեւ իսկապէս իրե՛նք սպաննեցին զանոնք, ու դուք գերեզմաններ կը կառուցանէք անոնց: ...Վա՛յ ձեզի օրինականներուդ, որ վերցուցիք գիտութեան բանալին. դո՛ւք չմտաք, եւ մտնողներն ալ արգիլեցիք» (տող 45-52):

Աստծու ժողովրդի գոռոզությունը

Որպեսզի հասկանանք, թե ինչու էր Հիսուսն ակնհայտորեն այդպես խիստ դատում այս մարդկանց ու վճիռ կայացնում, մենք պետք է ընկալենք այն, որ այն հոգին, որին նա դատում էր փարիսեցիների մեջ, ճիշտ նույնն էր, որ Հիսուս Քրիստոսին խաչեց:

Աստծու ժողովուրդը, որ գոռոզ, կեղծավոր ու լեգալիստիկ էր դառել, ասաց. *«Մենք Օրենք մը ունինք, եւ մեր Օրենքին համաձայն՝ պարտաւոր է մեռնիլ...»* (Հովհաննես 19:7): Արդյոք որքան կույր կարող է դառնալ Աստծու ժողովուրդը, երբ նա այնգամ չի ճանաչում Աստծուն, երբ նա մարմնականանում է:

4. Մարգարեություն և վարդապետություն

Աստվածաշնչում մարգարեանալ նշանակում է խոսել՝ աստվածային ներշնչմամբ: Սա նշանակում է, որ ցանկացած վարդապետություն պետք է լինի մարգարեության այս առաջաբանի ներքո, քանզի վարդապետին թույլ չի տրվում խոսել իր կամ էլ աշխարհի փիլիսոփայության համաձայն, այլ միայն աստվածային հայտնությամբ: Կորնթացիների եկեղեցուն դիմելով՝ Պողոս առաքյալն ասում է, որ նրանք պետք է դատեն, թե ինքն ինչ է ասում. *«Կը խօսիմ որպէս թէ իմաստուններու հետ. դո՛ւք դատեցէք ինչ որ կ'ըսեմ»* (Ա Կորնթացիա 10:15):

Նա չէր վախենում, որ իրեն կդատենին, և այն Աստծու մարդը, որ կվախենա իրեն լսողների կողմից դատվելուց, իրականում գոռոզ մարդ է, որ երբեք չպիտի ոտք դրած լիներ հոգևոր ծառայություն:

Ոչ ոք անսխալ չէ

Ելնելով այն փաստից, որ Աստծու խոսքի վարդապետը հնարավոր

Է ուսուցանի այնպիսի բաներ, որոնք Աստծու կողմից հայտնությամբ կամ Սուրբ Հոգու ներշնչանքով չեն տրված, ակնհայտ է դառնում այն, որ որպես քրիստոնյա մենք պետք է դատենք այն ամենը, ինչ ասվում է «Աստծու անունից»:

Մյուս կողմից Պողոս առաքյալը հաճախ մեզ զգուշացնում է, որ ասվածն իր կարծիքն է, այլ ոչ թե Սուրբ հոգու ներշնչանքով տրված:

«Բայց միաներուն ե՛ս կ'ըսեմ, ո՛չ թէ Տէրը. «Եթէ եղբայր մը ունենայ անհաւատ կին մը եւ անոր հաճելի ըլլայ բնակիլ իրեն հետ, թող չձգէ դայն» (Ա. Կորնթացիս 7:12):

«Կոյսերուն մասին Տէրօջմէն հրաման մը չունիմ. սակայն կը յայտնեմ իմ դատումս, իբր մէկը՝ որ ողորմութիւն գտած է Տէրօջմէն՝ հաւատարիմ ըլլալու» (Ա. Կորնթացիս 7:25):

Աստված տար, որ վարդապետներն այսօր Էլ նույնն անեին ու զատեին Աստծու ժողովրդին, որոնք հաճախ իրենք չեն կարողանում տարբերակել, և մանկապույացիան շատ հաճախ սողոսկում է Քրիստոսի մարմին:

Մարգարեությունն ասելով մենք հաճախ մտածում ենք այն հին մարգարեների մասին, որոնք **նախապես ասում էին** ապագան, և սա նույնպես պետք է դատվի: Երբ Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված առաջին նամակի գլուխ 14-ում ցուցումներ է տալիս եկեղեցուն, թե ինչպես պետք է կիրառել հոգու գերբնական շնորհները, նա խոսում է մարգարեության ու այլ լեզուների մեկնության մասին, թե երբ մեկն այս շնորհները կիրառում է, ապա այլ ներկաները պետք է դրանք դատեն: Հիշեք, որ մենք պետք է դատենք շնորհը, այլ ոչ թե մարդու սիրտը:

Այն, ինչ հիմա կասեմ, կարող է որոշ ընթերցողների զարմացնել, բայց հավատացած եմ, որ շնորհը որևէ կապ չունի այն բանի հետ, թե ով է խոսում: Ցավոք սրտի, շատ մարդիկ մեկին դատում են իր շնորհներով, իսկ սա ոչ միայն վտանգավոր է, այլ իրականում սուրբ գրությանը հակասական է: Աստվածաշունչն ասում է, որ մենք Աստծու մարդուն ճանաչում ենք ոչ թե իր շնորհներով, այլ պտուղներով, այն է՝ նրա մեջ Քրիստոսի եռությամբ (Մատթեոս 7:20):

Մենք ավելի մանրամասն այս թեմայի վերաբերյալ կխոսենք

հաջորդ գրքում, երբ հասնենք այն մասին, ուր Հիսուսը մեզ ասում է, թե ինչպես տարբերակել կեղծ մարգարեներին:

Ոչ սուրբ ավանակը

Բաղաամի ավանակը մարգարեացավ մարգարեին, սակայն ավանակը սուրբ չէր: Պարսկաստանի Կյուրոս արքան, մի բռնակալ, Ամենակարող Աստծու կողմից ներշնչված խոսք ասաց ու Աստծու ժողովրդին հետ ուղարկեց՝ Երուսաղեմը կառուցելու: Դրանք ճշմարիտ Ամենակարող Աստծու խոսքերն էին, սակայն Կյուրոսը այդպես էլ բռնակալ մնաց՝ միևնչև մահ: Աստված կարող է ստիպել, որ քարերը խոսեն ու մարգարեանան կամ էլ կողքի հարևանի կատուն, եթե նա այդպես է ցանկանում. խոսքն Աստծունն է, բայց այն արտաբերող գործիքը կարող է նրանը չլինել: Արթուր Բըրթն ասում է, որ եթե փոստատարը ձեզ նամակ է բերում ու նա չափից շատ հարբած է, դա որևէ ազդեցություն չի կարող ունենալ ձեր նամակի պարունակության վրա: Նա պարզապես հաղորդագրությունը տեղ հասցնելու գործիք է:

Երբ մեկը խոսում է, մենք գնահատում ենք, թե արդյոք Աստված է նրան այդ պահին օգտագործում, թե ոչ: Մենք չենք դատում բաներին, այլ դատում ենք խոսքը:

Սակայն մեզ թույլատրվում է դատել բաներին, **բայց մենք այլ չափանիշ ունենք այդ դատի համար**: Մենք պետք է դատենք նրա եռությունը՝ որպես ուղեցույց կիրառելով հոգու պտուղները, այլ ոչ թե հոգու շնորհները:

5. Սուտ մարգարեներ

«Զգուշացէք սուտ մարգարէներէն, որոնք կու գան ձեզի ոչխարի հանդերձներով, բայց ներսէն՝ յափշտակող գայլեր են: Իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք: Միթէ փուշերէն կը քաղե՞ն խաղող, կամ տատասկէն՝ թուղ: Այսպէս ամէն բարի ծառ՝ յաւ պտուղ կը բերէ, եւ

վատ ծառ՝ չար պտուղ կը բերէ: Բարի ծառը չի կրնար չար պտուղ բերել, ո՛չ ալ վատ ծառը՝ լաւ պտուղ բերել: Ամէն ծառ որ լաւ պտուղ չի բերեր, կը կտրուի ու կը նետուի կրակը: Ուրեմն՝ իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք» (Մատթեոս 7:15-20):

Ես վերջին դասակարգը համատեղ ներկայացրեցի այն բանի հետ, որ պետք է դատել սուտ մարգարեներին, և փաստն այն է, որ մենք դատում ենք պտուղը, այլ որ թե շնորհը: Պետրոս առաքյալի երկրորդ նամակի գլուխ 2-ն ամբողջությամբ բացահայտում է սուտ մարգարեներին, և Յուդայի նամակն էլ նույնն է անում: Ես ապշած եմ, որ եկեղեցիներում այս երկար ու հատկանշական հատվածների վերաբերյալ այդքան քիչ է քարոզվում:

Սուտ մարգարեներին դատելը

«Արմատական քրիստոնեություն» շարքի հաջորդ գիրքը կքննարկի այս համարները առավել խորությամբ, սակայն բավական է ասել այն, որ Պետրոս առաքյալն ու Յուդան եկեղեցիներին ուղղված իրենց նամակներում մեզ եղությունը դատելու երեք ոլորտ են տալիս:

- ◆ **Կայենի ճամփան**
- ◆ **Բաղաամի ազահ ուղին**
- ◆ **Կորխի հակաճառությունը**

«Արմատական քրիստոնեություն» շարքի այս հատորի համար բավարար է ասել, որ մեզ ասվում է Աստծու մարդկանց դատել՝ վերոնշյալ երեք ոլորտների լույսի ներքո:

6. Ինքներս մեզ

«Որովհետեւ եթէ մենք մեզ դատէինք՝ չէինք դատուեր: Իսկ երբ կը

դատուինք՝ կը պատժուինք Տէրօջմէն, որպէսզի չդատապարտուինք աշխարհի հետ» (Ա Կորնթացիս 11:31-32):

Այս վերջին դասակարգը միգուցե ամենակարևորն ու ամենաանտեսվածն է բոլոր այն բաների մեջ, որ քրիստոնյաներին ասվում է դատել. այն է՝ ինքներս մեզ դատելը: Մենք այժմ անցել ենք ողջ շրջանը, քանզի Հիսուսն իր պնդումներում ասում է, որ մենք պետք է մեր աչքի գերանը հանենք, նախքան կկարողանանք օգնել մեր եղբորը ճիշտ տեսնել:

Չնայած կորնթացիներին ուղղված Պողոս առաքյալի նամակից վերոնշյալ հատվածն ուսուցանում է հաց կիսելու մասին, ինքներս մեզ դատելու երկու համարները կատարյալ են ինքնադատման գործընթացը հասկանալու համար:

Դատելու երեք փուլերը

Գոյություն ունի ինքներս մեզ դատելու երեք փուլ:

ա. Մենք քննում ու դատում ենք մեր մեջ գտած ցանկացած սխալ: Պողոս առաքյալն ասում է, որ եթե մենք դա անենք, ուրեմն մեկ ուրիշը, այն է՝ Աստված մեզ չի դատի: Նա կարիք չի ունենա դատելու մեզ, եթե մենք պատասխանենք նրա մեղադրանքին ու ինքներս մեզ դատենք:

բ. Եթե մենք դա չանենք, ուրեմն Աստված կդատի մեզ, և եթե մենք սխալ ենք եղել, նա վճիռ կկայացնի՝ կպատժի մեզ:

գ. Եթե մենք Աստծուն թույլ չտանք այս երկրորդ փուլն անել, ուրեմն նա այլևս այլ ելք չի ունենա, քան մեզ մեր իսկ ուղիներին թողնելը, և այդ դեպքում մենք կանգնում ենք Քրիստոսի ատյանի առջև դատվելու վտանգի առաջ, երբ նա նորից գա իր եկեղեցին դատելու: Թույլ տվեք առաջարկել, որ դուք այս իմաստուն ցուցումը կիրառեք ձեր իսկ երեխաների դեպքում կամ եթե դուք առաջնորդ եք կամ ղեկավար, ուրեմն ձեր աշխատակիցների դեպքում:

Ինքներս մեզ դատելը

Թույլ տվեք ձեզ այս գործընթացի միջով տանել՝ ինչպես իմ երեխայի հայրը: Բոլոր երեխաներն էլ մեծանալու որոշակի փուլում գայթակղվում են վերցնել բաներ, որոնք իրենց չեն պատկանում: Եկեք ենթադրենք, թե իմ որդին սեղանի վրա մի տուփ քաղցրավենիք է տեսնում ու թաքցնում այն իր բարձի տակ, որ գիշերն ուտի, երբ իրեն ոչ ոք չի տեսնի: Ենթադրենք, թե նա խղճի խայթ է զգում, և առավոտյան գալիս ու խոստովանում է, որ ինքն է տուփը վերցրել՝ ներողութուն խնդրելով:

Գովեստ, այլ ոչ պատիժ

Ես անձամբ կսեղմեի նրա ձեռքն ու կասեի. «Ապրե՛ս, որդիս, քանզի դու ինքդ քեզ դատել ես, և այժմ ես կարիք չունեմ քեզ պատժելու: Եթե ես ինքս հայտնաբերած լինեի, որ դու էիր տարել քաղցրավենիքը՝ նախքան քո խոստովանությունը, ես, որպես լավ հայր, պարտավոր կլինեի պատժելու քեզ»:

Արդյոք ինչու՞ ես պիտի պատժեմ իմ սիրած երեխային: Պարզապես ելնելով այն փաստից, որ ես նրան սիրում եմ: Եթե ես նրան ներեմ այժմ մի քանի քաղցրավենիք գողանալու փաստը, ապա միզուցե հաջորդ անգամ նա դրամ կգողանա, իսկ ես թույլ տված կլինեմ, որ նա կանգնի քրեական հանցագործ դառնալու այդ ճանապարհին: Հինգ տարվա ընթացքում ես հնարավոր է հայտնվեմ դատարանում, որտեղ դատավորն իմ որդուն կասի. «Դուք յոթը տարի պետք է պատիժ կրեք բանտում՝ որպես գող»:

Աստծու համար խնդիր մի ստեղծեք

Ավելի լավ է ես ինքս դատեմ իմ որդուն, ում սիրում եմ, քան թե

մեկ այլ մարդ, ով որևէ զգացմունք չունի իմ որդու նկատմամբ: Միևնույնը ճիշտ է Աստծու դեպքում: Երանի նրա զավակները իրենք իրենց դատեին, այդ դեպքում նրանք զերծ կմնային իրենց սիրող Յորից այդքան պատժի արժանանալուց:

Համոզված եղեք, որ Աստված իրոք կպատժի, քանզի նա չի ցանկանում, որ մենք աշխարհի հետ դատապարտվենք: Ուշադիր ու դանդաղ կարդացեք հետևյալ բառերը Պողոս առաքյալի երբայեցիներին ուղղված նամակից, որտեղ Աստված ասում է իր իսկ զավակներին:

«...Եւ մոռցաք այն յորդորը որ կը խօսի ձեզի հետ՝ որպէս թէ որդիներու հետ. «Որդեա՛կս, մի՛ անտեսեր Տէրոջ պատիժը, ու մի՛ պարտասիր՝ երբ կչոամբուիս իրմէ: Որովհետե Տէրը կը պատժէ իր սիրածը, եւ կը խարազանէ ամէն որդի՝ որ կ'ընդունի»: Եթէ տոկաք պատիժի, Աստուած կը վերաբերի ձեզի հետ՝ իբր որդիներ. քանի որ ո՞վ է այն որդին՝ որուն հայրը չի պատժեր զինք: Իսկ եթէ ըլլաք առանց պատժի՝ որուն բոլորը բաժնեկից են, ուրեմն ապօրինի զաւակ էք, եւ ո՛չ թէ հարազատ որդի» (Եբրայեցիս 12:5-8):

Լավ հայրը պատիժ է կիրառում

«Յետոյ՝ երբ մեր մարմնաւոր հայրերը կը պատժէին մեզ, կը պատկառէինք անոնցմէ. շա՛տ աւելի պիտի չհպատակի՞նք հոգիներուն Հօր՝ որ ապրինք: Արդարեւ անոնք քիչ օրեր կը պատժէին մեզ՝ իրենց դատումին համաձայն. բայց Աստուած՝ մեր օգուտին համար, որպէսզի բաժին ստանանք իր սրբութենէն: Ո՛չ մէկ պատիժ նոյն պահուն կը թուի ուրախարար, հապա՝ տրտմարար. բայց յետոյ կու տայ արդարութեան խաղաղարար պտուղը՝ անով կրթուածներուն» (Եբրայեցիս 12:9-11):

Այս վերջին երեք գլուխների եզրահանգումը կարող է ներկայացվել երկու պարզ պնդմամբ.

ա. Շատ զգույշ եղեք, որ չդատեք ձեր եղբոր միտումները, այլ միայն նրա մեղքերը՝ սխալները:

բ. Շատ փութաջան եղեք ու անվախ՝ դատելու այն բաները, որ մեզ

ասվում է դատել:

Կա ևս մեկ վերջին ոլորտ, որ ես մինչ այս պահը չեմ քննարկել: Երբեմն Աստված հոգու գերբնական շնորհների միջոցով կարող է որևէ մեկին հայտնություն ու գատորոշում տալ՝ դատելու մարդու սիրտն ու նրա գաղտնի միտումները կամ թաքնված ծրագրերը, և ես դա ավելի մոտիկից կդիտարկեմ հաջորդ գլխում:

Նշումներ

- 1. Տես նաև Մատթեոսի ավետարանի գլուխ 23՝ դպիրների ու փարիսեցիների դեմ դատի երկար ցանկը:*



Գլուխ 14

Յոգեվոր դաս

Սակայն չոգիին յայտնաբերումը իւրաքանչիւրին տրուած է՝ բոլորին օգուտին համար: Մէկուն տրուած է իմաստութեան խօսք՝ չոգիով. ուրիշին՝ գիտութեան խօսք, նոյն չոգիով. ուրիշին՝ հաւատք, նոյն չոգիով. ուրիշին՝ բժշկելու շնորհներ, նոյն չոգիով. ուրիշին՝ հրաշագործութիւններ, ուրիշին՝ մարգարէութիւն, ուրիշին՝ հոգիներու զատորոշութիւն, ուրիշին՝ զանազան լեզուներու տեսակներ, ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն: Այս ամէնը՝ միեւնոյն չոգին կը ներգործէ, եւ իւրաքանչիւրին կը բաժնէ զատ-զատ՝ ինչպէս որ ինք փափաքի:

Ա Կորնթացիս 12:7-11

Ես ինձմէ ոչինչ կրնամ ընել. ինչպէս կը լսեմ՝ այնպէս կը զատեմ, եւ իմ զատաստանս արդար է. որովհետեւ ո՛չ թէ իմ կամքս կը փնտռեմ, հապա անոր կամքը՝ որ զրկեց զիս:

Հովհաննես 5:30

Այս ներկայիս դարում, երբ Յոգու շնորհները գործածվում են մեր ավետարանչական եկեղեցիներից շատերում, հավատացած եմ, որ այս շնորհներից ամենաանտեսվածն ու մեկը, որ ամենաշատը «թեժ պահելու» կարիք ունի, հոգիները զատորոշելու շնորհն է: Արդյոք քանի՞ եկեղեցու տրոհումից կարելի կլիներ խուսափել, եթե այս շնորհը ներկա

լիներ անհաշտության հենց սկզբում: Արդյոք քանի եկեղեցի կխուսափեր ճիշտ ուղղուց շեղվելուց՝ մարդկանց, երբեմն էլ՝ դևերի տարօրինակ դոկտորինների միջոցով, եթե այդ մարմնի անդամներից մեկը ունենար զատորոշման գերբնական շնորհ:

Ես այստեղ հեռատեսության մասին չեմ խոսում կամ էլ երկրային իմաստության: Ես խոսում եմ հայտնության մասին, որ անհանարին էր, որ գար որևէ այլ տեղից, բացի Սուրբ Յոզուց: Եկեղեցում չափից ավելի հոգեբուժություն ու հոգեբանություն կա, որի մեծ մասը գրեթե «նոր դարի» փիլիսոփայությունն է, և կա շատ քիչ հոգիների զատորոշում, որը ոչ թե գիտելիքով կամ կրթությամբ է գալիս, այլ միայն Սուրբ Յոզու հայտնությամբ:

Այս զատորոշումը ներկա էր առաջին եկեղեցում, ինչպես նաև Յիսուսի հոգևոր ծառայությունում: Այն նաև միշտ ակնհայտ է, երբ Աստծու մի թարմ շունչ է իջնում ազգի վրա:

Յիսուսը՝ մեզ օրինակ

Յովհաննեսի ավետարանում Յիսուսը մեզ տալիս է այն բանի բանալին, թե ինչու է իր սեփական զատորոշումը կամ դատաստանը միշտ ճշմարիտ: Դա շատ պարզ է: Դա նրա սեփական դատաստանը չէր: Յիսուսը երբեք որևէ մեկին կամ որևէ բան չի դատել *«Ես ինձմէ ոչինչ կրնամ ընել. ինչպէս կը լսեմ՝ այնպէս կը դատեմ, եւ իմ դատաստանս արդար է. որովհետեւ ո՛չ թէ իմ կամքս կը փնտոեմ, հապա անոր կամքը՝ որ զրկեց զիս»* Հովհաննես 5:30:

Նա ասում է, որ քանի որ ինքը չէր փնտրում իր սեփական կամքը, այլ իր Յոր կամքը, իր սեփական դատաստանն արդար էր: Սա է հոգևոր զատորոշման մեծ գաղտնիքը, քանզի երբ մենք մեր սեփական կամքն ենք փնտրում, մեր դատաստանը անաչառ չէ, և մենք երբեք Սուրբ Յոզուց հայտնություն չենք ստանա: Մենք միշտ էլ հայտնի կդարձնենք մեր սեփական հայտնությունը, այն է՝ մեր սեփական կողմնակալ կամքը: Երբ մենք գիտակցենք, որ ոչինչ ենք ու հետևաբար ոչինչ չենք

կարող ինքներս մեզանով անել, որպեսզի հաճոյանանք Աստծուն, այդ ժամանակ նա կանի այն, ինչ մենք չենք կարող անել: Աստված հաճույք է ստանում հենց այս միակ պատճառով. *փառքն ինքն ունենա ու ոչ մի մարմնի հետ չկիսի:*

Ինձ համար այս հոգևոր զատորոշումը նկարագրելու լավագույն ճանապարհը Աստվածաշնչից մի քանի օրինակ բերելն է՝ տեսնելու, թե ինչպես էին մարդիկ ուրիշների սիրտը դատում՝ համաձայն այն տեղեկատվության, որ իրենք երբեք չէին կարող ունենալ իրենց բնական մտքով ու իմաստութեամբ:

Անանիան և Սափիրան

«Բայց մարդ մը՝ Անանիա անունով, իր կնոջ՝ Սափիրայի հետ ստացուածք մը ծախեց, անոր հասոյթէն խորեց իր կնոջ գիտակցութեամբ, ու մասը մը բերելով՝ դրաւ առաքեալներու տրամադրութեան տակ: Պետրոս ըսաւ. «Անանիա, ինչո՞ւ Սատանան լեցուց սիրտդ, որ ստես Սուրբ Հոգիին եւ խորես արտին հասոյթէն: Քուկդ չէ՞ր ան՝ քանի կեցած էր, ու ծախուած ալ՝ իշխանութեանդ տակ էր: Ինչո՞ւ այս բանը դրիր սիրտիդ մէջ. դուն ստեցիր ո՛չ թէ մարդոց, հապա՛ Աստուծոյ» (Գործք Առաքելոց 5:1-4):

Այս միջադեպը տեղի ունեցավ առաջին եկեղեցու աճի նշանների հենց սկզբում ու շատ լավ ճանաչված է՝ կատարելապես ցույց տալով հենց այդ խիստ անհրաժեշտ շնորհը գործողության մեջ: Այսօր շատ ու շատ բաներ կան Քրիստոսի մարմնում, որ բացահայտման կամ մերկացման կարիք ունեն, որպեսզի Քրիստոսի եկեղեցին անարատ պահեն:

Պետրոսը որևէ կերպ չէր կարող իմանալ, որ այս գույգը գաղտնի համաձայնության էր եկել փողի մի մասը պահելու, իսկ հետո այդ մասին ստելու: Պետրոսը ոչ միայն կարողացավ դատել (գնահատել, որ ստել էին), այլև կարողացավ աստվածային հայտնությամբ խիզախ լինել ու դատել (վճիռ կայացնել) իրավիճակը և այդ մարդուն՝ Անանիային: Նրա

վճիռն իրականում մահապատիժ էր: *«Անանիա՛ լսելով այս խօսքերը՝ ինկաւ եւ շունչը փչեց. ու մեծ վախ համակեց բոլոր անոնք, որ լսեցին ասիկա»* (տող 5):

Պետրոսն այնուհետև դատեց Անանիայի կնոջը, և նա նույնպես տեղում մահացավ, ու նրանց երկուսի մարմիններն էլ դուրս հանեցին ու թաղեցին: Աստված հաճախ անխիղճ է իր ժողովրդի հետ գործ ունենալիս, երբ նրանք գտնվում են հոգևոր զարթոնքի սկզբնական փուլում: Աստված այդ կերպ վարվեց Աքարի հետ Յեսուի գրքում, երբ Աստծու ժողովուրդը խոստացված երկիրը գրավելու հենց սկզբում էր: Այստեղ էլ, Նոր կտակարանում եկեղեցու այս առաջին հոգևոր զարթոնքի ժամանակ, Աստված իր ծառա Պետրոսին աստվածային հայտնությունն տվեց դատելու իրավիճակը:

Մոգ Սիմոնը

«Բայց մարդ մը կար՝ Սիմոն անունով, որ նախապէս մոգութիւն կ'ընէր այդ քաղաքին մէջ եւ կը շէնքեր Սամարիայի ազգը, իր մասին ըսելով թէ մեծ մէկն է: Բոլորն ալ, պզտիկէն մինչեւ մեծը, ուշադիր էին անոր ու կ'ըսէին. «Ասիկա Աստուծոյ մեծ (կոչուած) զօրութիւնն է»: Ուշադրութիւն կը դարձնէին իրեն, որովհետեւ կը շէնքեր զիրենք մոգութիւններով՝ երկար ժամանակէ ի վեր: Բայց երբ հաւատացին Փիլիպպոսի՝ որ կ'աւետէր Աստուծոյ թագաւորութեան ու Յիսուս Քրիստոսի անունին մասին, մկրտուեցան թէ՛ այր մարդիկ եւ թէ՛ կիներ: Սիմոն ինք ալ հաւատաց, ու մկրտուելով՝ չէր թողուր Փիլիպպոսը, եւ կը զմայլէր՝ տեսնելով կատարուած հրաշքներն ու մեծ նշանները: ...Սիմոն, տեսնելով թէ Սուրբ Հոգին կը տրուի՝ առաքելներուն ձեռնադրութեամբ, դրամ մատուցանեց անոնց եւ ըսաւ. «Ինձի՛ ալ տուեք այս իշխանութիւնը, որպէսզի որո՛ւ վրայ որ ձեռք դնեմ՝ ստանայ Սուրբ Հոգին»: Պետրոս ըսաւ անոր. *«Քու արծաթդ թող կորսուի քեզի հետ, որովհետեւ կարծեցիր թէ Աստուծոյ պարգևը կը ստացուի դրամով»* (Գործք Առաքելոց 8:9-20):

Այստեղ մենք աստվածային հայտնությամբ դատաստանի ու մարդու սիրտը դատելու ունակության մեկ այլ օրինակ տեսանք: Պետրոսը գիտեր, որ սխալ էր փող առաջարկել՝ Աստծուց ուժ ստանալու համար, ուրեմն նա կարիք չունեի հայտնության, որպեսզի Սիմոնի գործողությունները դատեր, բայց նա չգիտեր խնդրի արմատը, որովհետև ամեն մեղքի արմատը սրտում է, ինչն Աստծու տիրույթն է: Մեզ չի թույլատրվում դատել այն:

Խնդիրը մեր սիրտն է

Սակայն Սուրբ Հոգին բացահայտեց Սիմոնի սիրտը, և Պետրոսը կարողացավ մատնացույց անել խնդրի արմատը: *«...սիրտդ ուղիղ չէ Աստուծոյ առջեւ: Ուրեմն զղջա՛ չարամտութիւնէդ եւ աղերսէ՛ Աստուծոյ. թերեւս ներուի քեզի սիրտիդ չար մտածումը: Որովհետեւ կը տեսնեմ քեզ մաղձի դառնութեան եւ անիրաւութեան կապին մէջ»* (Գործք Առաքելոց 8:21-23): Արդյոք ինչպես կարող էր Պետրոսը գիտենալ, որ սրտում խնդրի արմատը դառնությունն էր (մաղձը):

Պետրոսը դատեց աստվածային հայտնության համաձայն, որը դատի հաջորդ փուլն է, սակայն վճիռը երբեք չկայացվեց, քանզի Սիմոնը զղջաց: Սիմոնը պատասխանեց. *«Դո՛ւք աղերսեցէք Տէրոջը ինձի համար, որպէսզի այդ ձեր ըսածներէն ոչինչ պատահի ինձի»* (տող 24):

Դիվահար աղջիկը

«Մինչ աղօթքի կ'երթայինք, մեզի հանդիպեցաւ աղախին մը՝ որ հարցուկ ոգի ունէր եւ գուշակութեամբ շատ վաստակ կը բերէր իր տէրերուն: Ասիկա կը հետեւէր Պօղոսի ու մեզի, եւ կ'աղաղակէր. «Այս մարդիկը Ամենաբարձր Աստուծոյ ծառաներն են, ու կը քարոզեն մեզի փրկութեան ճամբան»: Շատ օրեր կ'ընէր այս բանը. Պօղոս ալ՝ նեղանալով դարձաւ եւ ըսաւ այդ ոգիին. «Յիսուս Քրիստոսի անունով կը

Հրամայեմ քեզի, ելի՛ր ատկէ»։ Ու նոյն ժամուն ելաւ» (Գործք Առաքելոց 16:16-18):

Ահա մեկ այլ միջադեպ, երբ Պողոս առաքյալը աստվածային գիտելիքի կարիք ուներ, որպեսզի ի վիճակի լիներ հասկանալու ու դատելու իրավիճակը: Մինչ դա ճանապարհվում էր աղոթքի, այս աղջիկը հետևում էր նրան ու գովազդում այն փաստը, որ նա Աստծու մարդն էր՝ խոսքով: Ուշադիր կարդացեք, թե այդ կինն ինչ է ասում: *Այս մարդիկ Ամենաբարձր Աստծու ծառաներն են, ու քարոզում են մեզ փրկության ճամփան:*

Ես շատ կցանկանայի, որ նման մի բան ասվեր իմ ու իմ հոգևոր ծառայության մասին: Գոյություն չունի որևէ բան անգամ, որ մենք կարող ենք դատել որպես սխալ՝ ելնելով նրա խոսքերից: Իրականում պետք է նշել, որ դրանք ճշմարտացի էին, և այդ խոսքերն ասելով նա հավանաբար շատ մարդկանց էր ստիպում լսել Պողոսի քարոզը:

Աստծու աստվածային ժամանակը

Այն, ինչ լրջորեն սխալ էր, այդ աղջկա սիրտն էր: Նրան տիրացել էր չար ոգի: Արդյոք ինչու՞ Պողոսը այդ ոգու հետ հաշիվները հենց սկզբում չմաքրեց, քանզի սուրբ գրություններն ասում են, որ նա դա անում էր **չառ օրեր**: Միգուցե Պողոսը, օգտագործելով իր բնական զատորոշման ունակությունը, հաճոյացած էր այն փաստով, որ այդ աղջիկը մարդկանց ստիպում էր լսել իր քարոզին, և միայն երբ Աստված գերբնականորեն բացահայտեց, որ արմատը սատանայական էր, նա կարողացավ իրոք զատորոշել ու դատել նրանում եղած ոգին:

Միգուցե Աստված արմատը հենց սկզբից էլ բացահայտել էր, բայց թույլ չէր տվել նրան դրա հետ գործ ունենալ, մինչև սահմանված ժամանակը: Ես չգիտեմ, ու ենթադրում եմ, որ դուք էլ չգիտեք, բայց մենք ունենք այն փաստը, որ հոգևոր զատորոշման միջոցով նա ունակ էր այդ աղջկան Սատանայի ճիրաններից ազատելու՝ դեպի Հիսուսի գիրկը:

Յոգևոր զատորոշում

Շատ քրիստոնյաներ «զատորոշում են», թե մեկին չար ոգի է տիրացել՝ հիմնվելով պարզապես այդ անձի որևէ արտաքին գործողության կամ արտասովոր վարքի վրա, սակայն սա հաճախ կարող է սխալ մեկնաբանվել: Դա կարող է հետևանք լինել ուղեղում քիմիական անհավասարակշռության կամ նման այլ բանի: Այն, ինչի կարիք ունենք մենք, հոգևոր զատորոշումն է, որ գալիս է միայն Սուրբ Յոգուց և որը գերազանցում է մեր բնական, աշխարհիկ մտքերն ու հայտնում մարդկանց սրտերի գաղտնիքներն այնպես, որ մենք իրականում դատում ենք ոչ թե մեր, այլ Աստծու դատաստանը:

Սրանով էլ եզրափակվում է դատելու վերաբերյալ մասը: Մենք պետք է հիշենք, որ մեզ թույլ չի տրվում դատելու մարդու սիրտը, բայց մեզ **ցուցում է տրված** դատելու նրա մեղքերն ու սխալները: Մենք նաև պետք է աղոթենք, գերբնական շնորհի՝ «հոգիները զատորոշելու» համար, որպեսզի Աստված մեր միջոցով կարողանա դատել այն մարդկան սիրտը, որոնք կգան ու կմոլորեցնեն Քրիստոսի մարմինը:



Գլուխ 15

Սուրբ բաներ

Սուրբ բանը մի՛ տաք շուներուն, ու ձեր մարգարիտները մի՛ նետէք խողերուն առջեւ, որպէսզի չկոխկոտեն զանոնք իրենց ոտքերուն տակ, եւ դառնալով չբզբտեն ձեզ:

Մատթեոս 7:6

Ուրեմն, սիրելիներ՛ր, այս խոստումները ունենալով՝ մաքրե՛նք մենք մեզ մարմինի ու հոգիի ամէն տեսակ պղծութենէ, եւ կատարելագործե՛նք սրբացումը Աստուծոյ վախով:

Բ Կորնթացիս 7:1

Մինչև լեռան քարոզի այս պահը Յիսուսը շատ նկարագրութիւններ է մեջբերում, սակայն առաջին անգամն է, որ նա առակ է ասում, իմաստուն մի խոսք, որն ինքնին հասկանալի իմաստ ունի, սակայն մեկնութեան կարիք ունի՝ հոգևոր կիրառութեան համար: «Սուրբ բանը մի տվեք շներին» կարող էր ուղղակի մեջբերում լինել Առակաց գրքից:

Այստեղ երկու հստակ պնդումներն են՝ մեկը սուրբ բաների, իսկ մյուսը՝ մարգարիտների մասին: Սրանք միևնույն բանն ասելու երկու տարբեր ձևեր չեն, այս բացարձակ տարբեր թեմաներ: Ես ցանկանում եմ ցույց տալ, որ առաջին պնդումը՝ «Սուրբ բանը մի տվեք շներին» ֆիզիկական բաների մասին է, իսկ երկրորդը՝ «Ձեր մարգարիտները մի նետեք խողերի առջև» հոգևոր բաների մասին է, և պնդումներից յուրաքանչյուրը տարբեր կիրառություն ունի:

Սրբությունը առանձնանալն է

Այժմ ես կդիտարկեմ առաջին պնդումը: Եթե ես կարողանամ հստակեցնել, թե որ բաներն են սուրբ, իսկ հետո, թե «շներն» ինչ են նշանակում սուրբ գրություններում, ուրեմն կիրառությունը պետք է որ ակնհայտ լինի:

Ի՞նչ է սուրբ բանը: Սրբությունն նշանակում է առանձնանալ, լինել տարբեր և զատված: Քրիստոնեական տեսակետից սա նշանակում է զատված լինել՝ **Աստծու բացառիկ օգտագործման համար**, քանզի եթե որևէ բան միաժամանակ օգտագործվում է Աստծու և մարդկանց համար, իր սահմանամբ այն չի կարող սուրբ լինել:

Երբ մենք որևէ բան ենք ընծայում Աստծուն, մենք հենց դա էլ անում ենք, զատում ենք այն՝ Աստծու բացառիկ օգտագործման համար:

Սուրբ բաները Յին կտակարանում

Այս լույսի ներքո ես նախ կդիտարկեմ այն բաները, որոնք Աստծու ժողովրդի համար սուրբ էին համարվում Յին կտակարանում: Հավատացած եմ, որ գոյություն ունեն երեք ոլորտ՝

- ✓ 1. Ֆիզիկական առարկաներ
- ✓ 2. Ժամանակներն ու ատենները
- ✓ 3. Մարդիկ

Այժմ ես կմեջբերեմ սուրբ գրություններից, որպեսզի ապացուցեմ իմ այս պնդումը երեք ոլորտների վերաբերյալ:

1. Ֆիզիկական առարկաներ՝ ներառյալ շինություններ

Այն անոթները, որ Մովսեսը պատրաստեց անապատում գտնվող

խորանի համար, պատրաստված էին այնպիսի նյութերից, ինչպիսիք են ոսկին, փայտը կամ գործվածքը: Ոսկու ձուլածոն կարող էր դառնալ խորանի համար անոթ կամ էլ որևէ կնոջ համար մի զարդ: Այն պարզապես ոսկի էր, բայց այն պահից սկսած, երբ Մովսեսն այն օժեց ու ընծայեց այդ բաներն Աստծու բացառիկ օգտագործման համար, դրանք կարող էին արդեն սուրբ հաշվվել ու կարող էին ապականվել կամ անպատվվել, եթե օգտագործվեին Աստծու գործածությունից դուրս որևէ նպատակի համար:

«Մովսես օծումի իւղը առաւ ու խորանը եւ բոլոր անոր մէջ եղածները օժեց ու սրբացուց զանոնք: Անկէ զոհասեղանին վրայ սրկեց եօթը անգամ եւ զոհասեղանն ու անոր բոլոր առարկաները, եւ աւազանն ու անոր խարիսխը օժեց՝ զանոնք սրբացնելու համար» (Ղեւտացոյց 8:10-11):

Միայն Աստծու օգտագործման համար

Մինևույնը տեղի ունեցավ այն տաճարի հետ, որ Սողոմոնը կառուցեց: Ծիսությունն ու դրանում եղած բոլոր առարկաները առանձնացված էին՝ Աստծու օգտագործման համար:

«Այսպէս՝ Տէրոջ տան համար Սողոմոն թագաւորին կատարած ամբողջ գործն աւարտեցաւ: Յետոյ Սողոմոն իր հօր՝ Դաւիթի սուրբ բաները - արծաթը, ոսկին եւ առարկաները - տարաւ ու Տէրոջ տան գանձարանին մէջ դրաւ» (Բ Թագավորաց 7:51):

«Սողոմոն՝ Տէրոջ մատուցանած խաղաղութեան զոհին համար՝ քսաներկու հազար արջառ ու հարիւր քսան հազար ոչխար զոհեց; Այսպէս՝ թագաւորը եւ բոլոր Իսրայէլի որդիները Տէրոջ տան նաւակատիքը կատարեցին» (Գ Թագավորաց 8:63):

2. Ժամանակներն ու ատենները

Ժամանակներն ու ատենները նյութի հետ որևէ կապ չունեն, սակայն այնուամենայնիվ կապ ունեն Աստծու գերբնական արարչության բնական կարգուկանոնի հետ: Գոյություն ունեն շատ ժամանակահատվածներ ու օրեր, որ Աստված ասաց, թե հարայելը պետք է առանձնացնի իր օգտագործման համար ու դրանք պետք է դարձնի հատուկ կամ Սուրբ օրեր, բայց մեզ համար առավել ակնհայտն ու դիտարկելու հատվածը շաբաթ օրն է:

Յոթից մեկ օրն Աստծունն է

Յոթից մեկ օրը պետք է առանձնացվեր Աստծու օգտագործման համար, և հարայելի որդիներին թույլ չէր տրվում այդ օրն անել իրենց սեփական գործերը: Դա պետք է Աստծու օրը լիներ: Այն պետք է տարբերվեր շաբաթվա մնացած վեցը օրերից, բայց միայն այն պատճառով, որ իրենք այն պետք է այդպիսին դարձնեին՝ առանձնացնելով այն Աստծու համար, այլ ոչ թե այն պատճառով, որ այն որևէ տարբեր ֆիզիկական հատկանիշներ կամ առանձնահատկություններ ուներ:

Սուրբ տեղը կամ առարկան ինքնին որևէ ուժ չունի. ամեն ինչ կախված է մեր վերաբերմունքից ու այն բանից, թե մենք դրանք մեր մտքում ինչպես ենք գնահատում: Երբ մենք հավատում ենք, որ առարկան ինքն ուժ ունի, դա դառնում է վիուկության մի ձև:

«Յիչէ՛ Հանգստութեան օրը՝ զայն սրբացնելու համար» (Ելից 20:8):

«Ուստի Շաբաթը պահեցէ՛ք, քանի որ ան ձեզի սուրբ է. ո՛վ որ զայն պղծէ՝ անչո՛ւշտ պիտի մեռցուի. արդարեւ ո՛վ որ այդ օրը գործ մը ընէ, այդ անձը իր ժողովուրդին մէջէն պիտի բնաջնջուի: Վե՛ց օր գործ ըրեք, բայց եօթներորդ օրը՝ հանգիստի Շաբաթը՝ սուրբ պիտի ըլլայ Տէրոջ: Ո՛վ որ Շաբաթ օրը գործ մը ընէ, անչո՛ւշտ պիտի մեռցուի» (Ելից 31:14-15):

Չնայած մեր քննարկման առարկան ճաբաթը չէ, արժե նկատեր երկու բան.

ա. Մովսեսի օրենքը չի սահմանում ճաբաթը: Նա ասում է. «**Յիշիր** Յանգստության օրը՝ այն սրբացնելու համար»:

Վերոհիշյալ համարը Տասը պատվիրաններից հավաստում է, որ Իսրայելի որդիներին տրված Մովսեսի օրենքը, այն էր, որ նրանք չպետք է անտեսեին արդեն սահմանվածը՝ Աստծու արարչության միջոցով:

բ. Այն կոտրելու պատիժը մահ էր:

Ակնհայտ է, որ Աստված ճաբաթը չպահելը դիտարկում էր այնքան լուրջ, որքան սպանությունն ու շնանալն էին, քանի որ պատիժը նույնն էր:

3. Ժողովուրդ՝ հավաքական և անհատական

Աստված ցանկանում էր, որ ողջ Իսրայել ազգը զատվեր իր համար, որպես սուրբ ու սեփական ժողովուրդ:

«Ուստի հիմա, եթէ իրապէս իմ խօսքս մտիկ ընէք եւ իմ ուխտս պահէք, դուք ինծի սեփական ժողովուրդ պիտի ըլլաք բոլոր ազգերուն մէջէն. որովհետեւ ամբողջ երկիրը իմս է: Դուք ինծի քահանաներու թագաւորութիւն մը ու սուրբ ազգ պիտի ըլլաք» (Ելից 19:5-6):

«Ոստէ՛ Իսրայելի որդիներուն ամբողջ համայնքին ու ըսէ՛ անոնց. "Սո՛ւրբ եղէք, որովհետեւ ես՝ Եհովան, ձեր Աստուածը, սուրբ եմ"» (Ղեւտացոց 19:2):

Ցավալի է, բայց փաստ

Շավ ցավալի փաստ է այն, որ Աստծու ընտրյալ ժողովուրդը չկարողացավ իրեն սուրբ (զատված) պահել ու ամուսնացավ օտար կանանց հետ և պաշտեց օտար աստվածների: Այնուհետև Աստված կանչեց Ղևիի ցեղին, առանձնացրեց Ահարոնին ու նրա որդիներին, որ

իր սուրբ քահանայությունը լինեին: Նրանք հատուկ օրենքներ ունեին, որոնք բնորոշ էին միայն քահանայությանը: Այդ օրենքները սահմանված էին, որպեսզի նրանց էլ ավելի զատված (սուրբ) դարձնեին, քան Աստծու զավակներից մնացյալը:

«Տէրը խօսեցաւ Ահարոնի՝ ըսելով. «Երբ Հանդիպումի վրանը մտնէք, դուն եւ որդիներդ քեզի հետ, գինի կամ օղի մի՛ խմէք, որպէսզի չմեռնիք: Ասիկա ձեր սերունդներուն մէջ յաւիտենական կանոն թող ըլլայ, որ զանազանէք սուրբը անսուրբէն, եւ անմաքուրը մաքուրէն» (Ղեւտացոց 10:8-10):

«Ոսէ՛ Ահարոնի ու անոր որդիներուն, որ Իսրայելի որդիներուն մատուցանած սուրբ բաներէն զգուշանան, եւ իմ սուրբ անունս չպղծեն այն բաներով՝ որ ինձի կը սրբացնեն. ե՛ս եմ Տէրը» (Ղեւտացոց 22:2):

«...Ահարոն զատուեցաւ, որպէսզի ինք եւ իր որդիները ամենասուրբ բաները ընծայեն յաւիտեան, Տէրոջ առջեւ խունկ ծխեն, անոր պաշտօն կատարեն ու անոր անունով օրհնեն յաւիտեան» (Ա Մնացորդաց 23:13):

Սուրբ բաները Նոր կտակարանում

Չեմ կարծում, որ որևէ քրիստոնյա չի համաձայնվի այն բանի հետ, թե Հին կտակարանում ինչն էր սուրբ, բայց արդյոք ի՞նչը մենք պետք է սուրբ համարենք այս ներկայիս ժամանակաշրջանում և շնորհքի ներքո:

Թույլ տվեք սկսել հետադարձ հաջորդականությամբ ու տեսնել, թե Նոր կտակարանն ինչ է ասում այս երեք ոլորտների մասին, այն է՝ մարդիկ, ժամանակներ և իրեր, շինություններ:

1. Մարդիկ

Ինձ համար շատ հեշտ է ապացուցել այն, որ ակնկալվում է, որ մարդիկ սուրբ կլինեն, քանզի Պետրոսը եկեղեցուն ուղղված իր երկրորդ նամակում մեքբերում է ճիշտ նույն բառերը, ինչ Մովսեսն ասել է Իսրայելի որդիներին:

«Բայց դուք մի ընտրուած ցեղ մըն էք, թագաւորական քահանայութիւն մը, սուրբ ազգ մը, սեփական ժողովուրդ մը, որպէսզի հոչակէք առաքիներութիւնները անո՛ր՝ որ կանչեց ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին: Ժամանակին ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք. առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք» (Ա Պետրոս 2:9-10): Իր այս առաջին նամակում Պետրոս առաքյալը նաև ասում է. *«Հապա, ինչպէս ձեզ կանչողը սուրբ է, դո՛ւք ալ սո՛ւրբ եղէք ձեր ամբողջ վարքին մէջ: Որովհետեւ գրուած է. «Սո՛ւրբ եղէք, քանի որ ես սուրբ եմ» (Ա Պետրոս 1:15-16):*

Ուրեմն, որևէ բանավեճ չպետք է լինի այն մասին, որ Աստված ակնկալում է, որ քրիստոնյաներն այսօր պետք է ապրեն սուրբ կյանքով ու լինեն տարբեր, սեփական, գատված աշխարհում եղած մնացած ամեն ինչից:

2. Օրեր ու ատեններ

Սուրբ օրերն ու ատեններն շատ ավելի վիճելի են: Ներկայիս եկեղեցին ստեղծել է Սուրբ օրերի իր սեփական օրացույցը, որպեսզի «քրիստոնեացնի» հեթանոսական օրացույցը, սակայն ցավոք սրտի այն որևէ հիմք չունի Աստվածաշնչում:

Տոները սուրբ օրեր են (holy days)

Անգլերենում «տոն օր» հասկացությունը ծագումնաբանորեն նշանակում է «սուրբ օր»: Այս նոր օրացույցը փոխարինել է բոլոր այն օրերը, որ Հին կտակարանում Աստված սահմանեց, որպես սուրբ, տեղն օգտագործելով օրերի նոր, բոլորովին այլ կազմ. Հարության տոն՝ Չատկի փոխարեն, Երրորդությունը՝ Երախայրիքի փոխարեն, Կիրակին՝ որպես շաբաթվա առաջին օր, փոխարենը Շաբաթի, որպես շաբաթվա յոթերորդ օր, Քավության օր, Բարեկենդան և այդպես շարունակ:

Նրանք ոչ միայն փոխել են անունները, այլև օրերը:

Աստվածաշնչից հստակորեն պարզ է, որ Յիսուսը մահացել է Չատկի տոնին, և Աստվածաշնչի ոչ մի գիտակ այս փաստը չի քննարկի: Սակայն եկեղեցին Յիսուսի մահը տոնում է ուրբաթ օրը, այնուհետև Յամբարձման տոնը, որը բոլորովին այլ օր է (և հաճախ մեկ այլ ամսում):

Դուք պետք է որոշեք

Այս փաստերը մեր քննարկման նյութից դուրս են, հետևաբար դուք ինքներդ պետք է որոշեք, թե արդյոք եկեղեցին ճիշտ է արել տոնացույցը փոխելով: Բայց բավական է ասել այն, որ անկախ նրանից, թե դուք պահում եք հին տոները, թե նոր եկեղեցական տոնացույցը, այնուամենայնիվ լավ է Աստծու համար օրեր առանձնացնելն ու դրանք չպղծելը:

Վստահաբար, ճաբաթ օրը հանդիսանում է մեր դիտարկման հիմքը, քանզի այն սահմանված է եղել Յին կատակարանից էլ առաջ, ուրեմն Նոր կտակարանը այն անվավեր չի դարձնում: Այն, ինչ օրենքը չի սահմանում, չի էլ կարող չեղյալ հայտարարել: Ճաբաթը որևէ կապ չունի Օրենքի հետ. այն Արարչության սկզբունք է, ինչպես ձգողականության ուժը:

Պողոս առաքյալն ասում է, որ մի մարդ այս օրն է սուրբ դարձնում, իսկ մյուսը՝ մեկ այլ, և մենք չպետք է մեկս մյուսին դատենք:

«Մէկը կը նկատէ օր մը ուրիշէ մը գերադաս, միւսն ալ կը նկատէ բոլոր օրերը հաւասար. իւրաքանչիւրը լման համոզուած թող ըլլայ իր միտքին մէջ: Ա՛ն որ համարում կ'ընծայէ մէկ օրուան՝ Տէրո՛ջ համար համարում կ'ընծայէ, իսկ ա՛ն որ համարում չ'ընծայեր մէկ օրուան, Տէրո՛ջ համար համարում չ'ընծայեր...» (Հռովմեացիս 14:5-6):

Այս սուրբ գրությունները ցույց են տալիս, որ սխալ չէ օրը կամ ժամանակահատվածը զատել, սուրբ դարձնել, Նոր ուխտի ներքո:

3. Իրեր և շինություններ

Արդյոք հնարավոր է, որ անշունչ առարկան, ինչպես ասենք իմ բաս կիթարը, իմ գրասեղանը կամ եկեղեցու շինությունը, Աստուծու համար սուրբ լինեն շնորհքի այս ժամանակաշրջանում: Սա կրկին բարդ ոլորտ է, բայց հավատացած եմ, որ չնայած նրան, որ օրինական պահանջ չկա մեր ունեցածից որևէ բան զատելու, այնուամենայնիվ լավ բան է սրբացնել, զատել, մեր ունեցած որևէ նյութական իր՝ Աստուծու բացառիկ կիրառության համար:

Իմ ընտրությունը

Մենք մեր գրասենյակում մի սենյակ ունենք, որն առանձնացրել ենք և նվիրաբերել Աստուծուն՝ իր կիրառության համար: Մեր երեխաներին թույլ չի տրվում այդ սենյակում խաղալ: Այնտեղ չկա հեռուստացույց կամ ռադիոընդունիչ: Մենք այն հատուկ պահում ենք աղոթքի, ծոմապահության, երկրպագության ու Աստծո խոսքի համար:

Արդյոք սա օրինակա՞ն մոտեցում է: Իհարկե, հնարավոր է, որ այդպես է, բայց որևէ պատճառ չկա դրա համար: Ամեն ինչ կախված է այն բանից, թե արդյոք ես հասկանու՞մ եմ այն սկզբունքը, որ Հիսուսը սովորեցրել է իր աշակերտներին, այն է՝ *«Շաբաթը եղաւ մարդո՛ւն համար, ո՛չ թէ մարդը՝ Շաբաթին համար» (Մարկոս 2:27)*: Աստված ստեղծեց Շաբաթ օրը, որպեսզի մենք հանգստանանք ու գնահատենք մեր աշխատանքային շաբաթը, այլ ոչ թե մեզ որևէ լեզալիստիկ համակարգի կապելու համար:

Միայն իր նպատակով

Դուք պետք է ինքներդ համոզված լինեք, բայց ես իմ երաժշտական գործիքները ընծայել եմ Աստուծուն, քանի որ ցանկանում

Էի, որպեսզի դրանք օրհնված լինեն ու միայն նրա նպատակներով օգտագործվեն: Ես նաև իմ տունն ու դրանում ամեն ինչ եմ ընծայել, որպեսզի Աստծուն փառաբանեն: Ես իմ ժամանակն ու իմ տաղանդներն եմ ընծայել Աստծու բացառիկ կիրառության համար, և իրոք հավատում եմ, որ Աստված հաճոյանում է, երբ կամավոր սրտով, այլ ոչ ստիպված, մենք նրան որևէ բան ենք ընծայում:

Այս բոլոր ոլորտների իմ եզրակացությունն այն է, որ Հին կտակարանից Նոր կտակարան որևէ բան չի փոխվել՝ կապված մարդկանց, իրերը կամ օրերն Աստծու համար առանձնացնելու հետ, բայց այժմ մենք այն ազատ կամքով ենք անում՝ ելնելով Աստծու նկատմամբ մեր սիրուց: Սա շնորհքից է: Սա օրհնական պարտականությունն է, ոչ էլ բեռ կամ օրենքի պահանջ:



ԳԼՈՒԽ 16

Շների բաժին դարձած

Դուք ինձի սուրբ մարդիկ պիտի ըլլաք. դաշտին մէջ գազաններէն բզբտուածին միսը մի՛ ուտէք, այլ՝ շուներուն նետեցէք:

Ելից 22:31

Յիսուսի այս առակն ասում է. «*սուրբ բաները **շներին** մի տուր*», ուրեմն մենք այժմ պետք է սահմանենք, թե շներն Աստվածաշնչում ինչ են խորհրդանշում: Աստվածաշնչում շների վերաբերյալ շատ հղումներ չկան, բայց եղածներն էլ մեզ հստակ կողմնորոշում են: Օրինաց երկրորդ գրքում մի հետաքրքիր համար կա, որ նշում է շներին: *«Իսրայելի աղջիկներէն բոզ պիտի չըլլայ, ո՛չ ալ Իսրայելի որդիներէն՝ իզացեալ: Որեւէ ուխտի համար Տէրոջ՝ քու Աստուծոյդ տունը մի՛ տանիր պոռնիկի վարձատրութիւնը կամ շունի հատուցումը, քանի որ Տէրոջ՝ քու Աստուծոյդ առջեւ երկուքն ալ գարչելի են»* (Բ Օրինաց 23:17-18):

Բառացի պատգամն այն է, որ Իսրայելի որդիները չպետք է թույլ տային, որ իրենց դուստրերից որևէ մեկը պոռնիկ դառնար, ոչ էլ, որ իրենց որդիներից որևէ մեկը միասեռական դառնար: Նրանց արգելվում էր կնոջ կամ տղամարդու մարմնավաճառության վարձը բերել Աստծու տուն՝ որպէս երդման ընծա: Հետևությունն ակնհայտ է. սեռական անբարոյականությունը պղծում է Աստծու տաճարը, և այն մարդիկ, որոնք դրանով էին զբաղվում Յին կտակարանում, պետք է տաճարից դուրս պահվեին:

Սուտ մարգարեներ

Պետրոս առաքյալը եկեղեցուն ուղղված իր երկրորդ նամակում կիրառում է շան ուղիները՝ որպես նկարագրություն այն մարդկանց, ովքեր ճանաչել են Աստծուն, ստացել նրա փրկությունը, բայց հետ են վերադարձել իրենց աշխարհիկ, մարմնական ուղիներին՝ ի վերջո դառնալով սուտ մարգարեներ:

«Արդարեւ եթէ իրենք, փախչելէ ետք աշխարհի պղծութիւններէն՝ Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի ճանաչումով, դարձեալ կաշկանդուին ու պարտուին անոնցմէ, իրենց վախճանը աւելի գէշ կ'ըլլայ առաջին վիճակեն: Որովհետեւ աւելի լաւ կ'ըլլար իրենց՝ որ բնա՛ւ չգիտնային արդարութեան ճամբան, քան թէ՛ գիտնալէ ետք հեռանային իրենց աւանդուած սուրբ պատվիրանից: Սակայն իրենց պատահեցաւ ինչ որ ճշմարիտ առակը է կ'ըսէ. «Շունը կը վերադառնայ իր փսխածին, ու լուացուած խոզը՝ ցեխին մէջ թաւալելու» (Բ Պետրոս 2:20-22):

Յետ սայթաքած ուսուցիչներ

Եսայի մարգարեն միևնույն նկարագրությունն է կիրառում, երբ խոսում է Իսրայելի սուտ ուսուցիչների մասին. նրանց, ովքեր ավելի լավ պիտի իմանային, ովքեր պետք է ուշիուշով հետևեին Աստծու ժողովրդի բարօրությանը:

«Անոր դետերը կոյր են. բոլորն ալ գիտակից չեն: Բոլորն ալ համր շուներ են, չեն կրնար հաջել. Անոնք կը նիրհեն, կը պառկին, մրափը կը սիրեն: Այո՛, շատակեր եւ անկուշտ շուներ են. Անոնք չհասկցող հովիւներ են: Բոլորը իրենց ճամբաներուն ուշադրութիւն կը դարձնեն, Իւրաքանչիւրը իր անիրաւ վաստակը կը փնտռէ՝ մինչեւ վերջինը...» (Եսայիա 56:10-11):

Աստվածաշնչում այլ համարներ մեզ ցույց են տալիս, որ այն մարդիկ, որոնք Իսրայելի թագավորությունից դուրս էին, համարվում էին պիղծ կամ անսուրբ, այն է՝ նրանք զատված չէին Աստծու համար: Նրանք բնորոշվում էին որպես անմաքուր կենդանի՝ շուն:

Երեխաների հացը՝ շներին

Նոր կտակարանում նրանց, ովքեր աշխարհիկ էին ու մարմնական և հարայելի ժողովրդից դուրս էին, միևնույն կերպ էին վերաբերում: Ահա այդ համարներից մի քանիսը:

«Եւ ահա՛ քանանցի կին մը, այդ հողամասերէն ելած, կը պոռար անոր. «Ողորմէ՛ ինծի, Տէ՛ր, Դաւիթի՛ որդի, աղջիկս սաստիկ կը չարչարուի դեւէն»: ...Ինք ալ պատասխանեց. «Ես դրկուեցայ միայն Իսրայելի տան կորսուած ոչխարներուն»: Բայց անիկա եկաւ, երկրպագեց անոր եւ ըսաւ. «Տէ՛ր, օգնէ՛ ինծի»: Ան ալ պատասխանեց. «Լաւ չէ առնել զաւակներուն հացը և նետել չուներուն»: (Մատթեոս 15:22-26):

«Զգուշացէ՛ք չուներէն, զգուշացէ՛ք չար գործաւորներէն, զգուշացէ՛ք թշպատութենէն. որովհետեւ թշպատութիւնը մե՛նք ենք, որ կը պաշտենք Աստուած Հոգիով եւ կը պարծենանք Քրիստոս Յիսուսով, ու վստահութիւն չունինք մարմինի վրայ» (Փիլիպպեցիս 3:2-3):

Նոր Երուսաղեմը

«Երանի՛ անոնց՝ որ կը գործադրեն անոր պատուիրանները, որպէսզի իրաւունք ունենան ուտելու կեանքի ծառէն, ու դռներէն ներս՝ քաղաքը մտնեն (Նոր Երուսաղեմ): Քանի որ դուրս պիտի մնան չուները, կախարդները, պոռնկողները, մարդասպանները, կռապաշտները, եւ ո՛վ որ սուտը կը սիրէ ու կը խօսի» (Հայտնութիւն 22:14-15):

Այս սուրբ գրութիւններից կարող ենք տեսնել, որ «շները» հատկապես վերաբերում է մարդկանց, այլ ոչ թե, ինչպես հնարավոր է, որ մենք ենթադրեինք, դներին ու հոգևոր ուժերին: Սակայն այն ամենից, ինչ աշխարհից է, ինչը սահմանամաբ անմաքուր է, պետք է խուսափել՝ որպես մի բանից, որ կպղծի մեզ: Հովհաննես առաքյալն ասում է մեզ, որ պետք է զատված լինենք աշխարհի համակարգից:

«Մի՛ սիրէ՛ք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը կը սիրէ աշխարհը, Հօրը սէրը չկայ իր մէջ. որովհետեւ ամէն ինչ որ

աշխարհի մէջ է՝ մարմինի ցանկութիւնը, աչքերու ցանկութիւնը եւ այս կեանքին ամբարտաւանութիւնը՝ Հօրմէն չէ, հապա այս աշխարհէն է» (Ա Հովհաննես 2:15-16):

Այն ամենն, ինչ աշխարհից է, Աստուծոյ չէ, և պղծում է մեր սրբութիւնը և կարող է հոգևոր իմաստով վերագրվել «շներ» անվանմանը:

Մի՛ արեք

Առական այժմ ինքնիրեն կմեկնաբանի: Աշխարհի բոլոր համակարգերը, սեռական անբարոյականությունը և մարմնական լինելը Աստուծու համար անմաքուր են: Ուրեմն այն, ինչ մենք նվիրաբերում ենք Աստուծուն, կլինի դա մեր կյանքը, մեր երեխաները, մեր տունն ու ունեցվածքը, պետք է զատված լինի միմիայն Աստուծու գործածության համար, և մեզ թույլ չի տրվում խառնելու սուրբն ու պիղծը:

Ինչու՞ է Աստված այդքան անկոտրում: Որովհետև մենք ստիպողաբար որևէ բան չենք նվիրաբերում Աստուծուն: Մենք դա անում ենք մեր իսկ ազատ կամքով, հետևաբար **մենք որևէ արդարացում չունենք պղծելու այն, ինչը զատել ենք**: Դա շատ լուրջ բան է: Ծատ ավելի լավ է ոչինչ սուրբ չդարձնելը, քան թե այն զատելն ու պղծելը:

Խառնուրդ՝ գարշանք

Խառնուրդը, որ քառս է ստեղծում, միշտ էլ գարշելի է Աստուծու համար, ուրեմն մենք անդամնալիորեն սխալվում ենք, երբ աշխարհի ցանկացած համակարգ ու մտածելակերպ բերում ենք մեր քրիստոնյա կյանք: Այս աշխարհի թագավորություններն անմաքուր են, քանի որ այս աշխարհի թագավորն ու աստվածն է անմաքուր: Արդյոք կարող է Սատանայի թագավորության անգամ ամենափոքր մասը լինել մաքուր ու անպիղծ: Արդյոք կարող է սրանցից որևէ մեկը գոյություն ունենալ

երկնքի սուրբ թագավորությանը զուգահեռ, այն է՝ շուր քիզնեսը, քաղաքականությունը, հռչակը, ցուցադրական մրցակցությունը, էգոն, եսը:

Վստահաբար այս ամենը երկնքի թագավորության համար վիրավորական են: Արդյոք ես չեմ տալիս սուրբ բաները շներին, երբ աշխարհը բերում եմ եկեղեցի կամ երբ իմ տաղանդները կիսում եմ Աստծու և Սատանայի թագավորությունների միջև:

Յնացած

Արդյոք այս կարգի ուսուցումը հնացած է թվում: Միթե ինձ սպառնում է ստրկություն ու լեգալիզմ վարդապետելու վտանգը՝ շնորհքի այս դարում: Ճիշտ հակառակը, քանզի չնայած կեղծ սրբությունը լեգալիզմի է տանում, ճշմարիտ սրբությունը տանում է ազատության ու ճոխ կյանքի:

Իմ փաստարկն այն կլինի, որ սրբության իմ որոնման մեջ ես ավելի ազատ եմ, քան որևէ այլ քրիստոնյա, որին ես երբևէ հանդիպել եմ, իսկ իմ կյանքը ցանկացած մարդու մանրամասն ուսումնասիրության համար բաց է: Ես Պողոս առաքյալի հետ միասին կարող եմ ասել, որ իրականում փաստն այն է, որ ամեն ինչը ու ցանկացած բան ինձ համար արտոնված է, *բայց ամեն բան շահավետ և օգտակար չէ, և ես ոչ մեկի իշխանության տակ չպիտի լինեմ* (տես Ա Կորնթացիս 6:12 և 10:23):

Ուրրտներ, որ կարելի է հաշվի առնել

Այս առակը եզրափակելու համար ես վեցը ուրրտ կնշեմ, որ կարող ենք հաշվի առնել, որպեսզի մենք կարողանանք համոզվել, թե արդյոք դրանք բացառապես Աստծու գործածության համար ենք զատել, թե միգուցե թույլ ենք տվել, որ դրանք պղծվեն: Հիշեք, որ Հիսուսն ասաց. *«Սուրբ բաները շներին մի տվեք»:*

1. Մեր տաղանդները

Եթե մենք որոշում ենք մեր տաղանդներն Աստծուն նվիրաբերել, ուրեմն մենք պետք է վստահ լինենք, որ դրանք աշխարհում որևէ այլ բանի համար չենք կիրառում: Մենք այժմ պետք է մեր տաղանդներն օգտագործենք՝ **որպես Աստծուն ծառայություն**, այլ ոչ թե **որպես Աստծու ժողովրդին զվարճացնելու միջոց**. մեծ տարբերություն կա դրանց միջև:

2. Մեր փողը

Մենք արդեն դիտարկել ենք Անանիայի և Սափիրայի դեպքը Գործք առաքելոց 4-րդ գլխից, ուր նրանք հայտարարեցին, թե իրենց տան վաճառքի ողջ փողը տվել են Աստծուն, բայց ճշմարտությունն այն էր, որ նրանք մի մասն իրենց էին պահել:

Փողն ամբողջությամբ այդ գույզին էր պատկանում: Այն իրենցն էր, և նրանք պարտավոր չէին Աստծուն որևէ բան տալ, բայց իրենց մոլորությունն ու ստերը մահացու մեղք էին՝ անգամ շնորհքի դարում:

3. Մեր եկեղեցին

Եթե մենք որևէ շինություն Աստծուն ենք նվիրաբերում, այն դառնում է նրանն ու այժմ զատված է միայն նրա օգտագործման համար: Մենք պետք է զգույշ լինենք, որ այն սոցիալական օգնության կենտրոն չդարձնենք, ուր անաստված գործողություններ են տեղի ունենում:

Ավետարանչությունը, համաձայն Նոր կտակարանի, իրականացվում է, երբ մենք գնում ենք աշխարհ: Մենք բարի լուրը պետք է քարոզենք աշխարհի տարածքի վրա, այլ ոչ թե աշխարհը բերենք մեր եկեղեցի:

4. Մեր տները

Եթե մենք մեր տունն Աստծուն ենք նվիրաբերում, ուրեմն մենք պետք է զգույշ լինենք, թե ինչ ենք ներս թողնում: Եթե ես հեռուստատեսությամբ մի ֆիլմ եմ դիտում, և այնտեղ կա հասարակաց տան մի դրվագ, կամ էլ շանալու տեսարան, ապա արդյոք հնարավոր է, որ ես իմ տունը պղծում եմ:

Ես ինքս չեմ շանա, ուրեմն արդյոք լավ իրավիճակ է, եթե ես դիտում եմ իմ սեփական տանը, թե ինչպես է մեկ այլ մարդ շանում: Իհարկե, դուք պետք է ինքներդ որոշեք, թե ինչ անել այս բոլոր ոլորտներում: Ես պարզապես այս հարցերը ձեր դիտարկմանն եմ ներկայացնում՝ Հիսուսի ասածի լույսի ներքո, քանզի մենք պետք է այս հարցերի հետ գործ ունենանք:

5. Ինքներս մեզ

Պողոս առաքյալն ասում է, որ մեր մարմիններն այժմ Աստծու և **Սուրբ** Հոգու տաճարներն են: Դրանք պղծելը շատ լուրջ բան է: *«Չէ՞ք գիտեր թէ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Ուրեմն Քրիստոսի անդամները առնելով պոռնիկի անդամներ՞ը ընեմ: Ամենեւին: Չէ՞ք գիտեր թէ ա՛ն որ պոռնիկի կը միանայ, անոր հետ մէկ մարմին կ'ըլլայ. քանի որ Գիրքը կ'ըսէ. «Երկուքը պիտի ըլլան մէկ մարմին»:* Իսկ ա՛ն որ Տէրոջ կը միանայ, անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ: Փախէ՛ք պոռնկութենէն: Ամէն մեղք՝ որ մարդ կը գործէ, իր մարմինէն դուրս է. բայց ա՛ն որ կը պոռնկի, կը մեղանչէ իր մարմինի՛ն դէմ: **Չէ՞ք գիտեր թէ ձեր մարմինը տաճարն է Սուրբ Հոգիին՝ որ ձեր մէջն է.** զայն Աստուծմէ ստացաք, եւ դուք ձեզի չէք պատկանիր, քանի որ մեծ գինով մը գնուեցաք. ուստի **փառաւորեցէ՛ք Աստուած ձեր մարմինին ու ձեր հոգիին, որոնք կը պատկանին Աստուծոյ»** (Ա Կորնթացիս 6:15-20):

6. Հոգևոր ծառայությունում գտնվողները

«Մինչ անոնք Տէրոջ պաշտօն կը կատարէին ու ծոմ կը պահէին, Սուրբ Հոգին ըսաւ. «Զատեցէ՛ք ինձի Բառնաբասը եւ Սօղոսը՝ այն գործին համար, որուն ես կանչած եմ զանոնք» (Գործք առաքելոց 13:2):

Երբ որևէ մեկը ձեռնադրվում է ու զատվում հոգևոր ծառայության համար, ուրեմն շատ լուրջ բան է աշխարհի սիստեմը այդ հոգևոր ծառայությունն բերելը, և ես ցույց եմ տվել, որ եկեղեցում սուտ մարգարեները նրանք են, որոնք զատված են եղել Աստծու գործածության համար, բայց կրկին խառնվել են աշխարհի սիստեմներին:

Որքան հեշտ է, երբ գտնվելով հոգևոր ծառայությունում սկսում ես տեսչալ գործության ու կառուցել քո կայսրությունը: Որքան հեշտ է դառնալ քաղաքականացված, մարտնչել այն արդյունքների համար, որ դու ես ցանկանում: Որքան հեշտ է դառնում մանիպուլյացիայի ենթարկել մարդկանց՝ սեփական նպատակներին հասնելու համար: Սրանք աշխարհի գործունեությունն է և ցուցադրական մրցավազքը, ու դրանք Աստծու թագավորությունում մաս չունեն:

Համոզված եմ, որ ցուցակը երկար կլիներ, թե մենք դիտարկեինք բոլոր այն ուղիները, որոնցով կարող ենք պղծվել, բայց եթե մենք սկզբունքն ունենանք մեր մտքում, ուրեմն մենք միշտ զգոն կլինենք ու՝

ա) Համոզվենք, որ եթե որևէ բան Աստծուն ենք նվիրաբերում, ապա պատրաստ ենք վճարել գինն ու այն զատված պահել՝ բացառապես Աստծու կիրառության համար:

բ) Կջանանք չկաշառել որևէ բան, որն արդեն սուրբ ենք դարձրել, ու եթե անհաջողության մատնվենք որևէ ոլորտում, արագ կապաշխարենք ու կսկսենք նորից:



ԳԼՈՒԽ 17

Իմաստութեան մարգարիտներ

*Արդարին շրթունքը շատերը կը սնուցանէ,
Իսկ յիմարները խելքի պակասութենէ կը մեռնին:
Առակաց 10:21*

*Սակայն կատարեալներուն կը խօսինք
իմաստութեան մասին. բայց ո՛չ այս աշխարհի,
ո՛չ ալ այս աշխարհի ոչնչացող իշխաններուն
իմաստութեան մասին, հապա՜ Աստուծո՛յ
խորհրդաւոր եւ ծածկուած իմաստութեան
մասին կը խօսինք, որ Աստուած դարերէն
առաջ սահմանեց մեր փառքին համար:*

Ա Կորնթացիս 2:6-7

*Տասներկու դռները՝ տասներկու մարգարիտ էին.
Խրաքանչիւր դուռ՝ միակտուր մարգարիտ էր:
Հայտնություն 21:21*

Նախորդ գլխում ես ցույց տվեցի, որ սուրբ բաները միշտ կապ ունեն ֆիզիկական երկրի հետ՝ ունեցվածք, մարդիկ, ժամանակ: Երկրորդ մասում Յիսուսն ասում է. «Ձեր մարգարիտները մի նետեք խոզերի առջև», և հավատացած եմ, որ մարգարիտները ներառում են հոգևոր բաները: «Սուրբ բաները շներին տալը» կապ ունի խառնուրդի՝ անմաքրության հետ. Բայց այս այլաբանությունը մարգարիտների մասին որևէ կապ չունի խառնուրդի հետ, այլ իմաստության ու հիմարության: Բառացի պնդումից ելնելով ակնհայտորեն հիմարություն

կլինի մարգարիտները՝ ինչ-որ թանկարժեք բան տալ խոզերին, որոնք չեն կարող գնահատել դրանք կամ էլ իմաստուն կերպով օգտագործել դրանք:

Ես միևնույն մեթոդը կկիրառեմ, որ օգտագործում էր սուրբ բաները շներին տալու դեպքում: Ես կդիտարկեմ, թե մարգարիտներն ինչ են խորհրդանշում Աստվածաշնչում, այնուհետև, թե խոզերն ինչ են ներկայացնում, և առակն ինքն իրեն կմեկնաբանի:

Վատնել կամ ներդնել

Նախքան մենք կդիտարկենք մարգարիտները, մենք պետք է հասկանանք, որ գոյություն ունի «նետել» բառը դիտարկելու երկու ճանապարհ ...

ա) Դեն նետել կամ աղբը նետել, ինչպես ասվում է ժողովող 3:6-ում՝ պահելու ժամանակ ու **նետելու ժամանակ**, կամ էլ Մատթեոս 5:13-ում՝ Դուք եք երկրի աղը. եթե աղը կորցնում է իր համը, ինքն ինչո՞վ պիտի աղվի: Դրանից հետո ոչ մի ազդեցություն չի ունենա, այլ **դուրս կնետվի** և կկոխկրտվի մարդկանց ոտքի տակ:

բ) Աճի համար ներդնել, ինչպես մենք ուռկանն ենք նետում ձուկ որսալու համար կամ էլ սերմերն ենք նետում երկրի վրա բերքի համար:

Այս առակից ակնհայտ է, որ Հիսուսը բառը երկրորդ իմաստով է կիրառում, երբ ասում է, թե «մի կարծեք, թե կարող եք ներդնել կամ շահույթ ստանալ մարգարիտները խոզերին տալով»։ Նրանք դրանք չեն գնահատում: Եթե դուք այդպես անեք, ապա աղբը նետած կլինեք դրանց, այն է՝ վատնած կլինեք:

Մարգարիտներն իրենք արժեքավոր են, ուրեմն էլ ավելի կարևոր է իմաստուն վարվել մեր մարգարիտների հետ և ուշադիր լինել, թե ուր ենք մենք դրանք նետում կամ ներդնում: Հիսուսը չի ասում՝ «մարգարիտներ մի նետեք», նա ասում է, որ իմաստուն լինենք ու չներդնենք դրանք այնտեղ, ուր որևէ հնարավորություն չկա, որ դրանք որևէ շահույթ կբերեն:

Այս երկու այլաբանությունների միջև ևս մի տարբերություն կա: Առաջինը պատգամ է՝ «սուրբն ու անսուրբը մի խառնեք», իսկ երկրորդը մեզ խորհուրդ է տալիս ու այդ խորհուրդն անտեսելու հետևանքները ներկայացնում: Խոզերը ոչ միայն չեն գնահատում մարգարիտները, այլև «կդառնան ու կբզկտեն մեզ»:

Այլ կերպ ասած՝ մենք ոչ միայն կվատենք մարգարիտները, այլ ինքներս վնասված կլինենք այդ գործընթացում:

Կնոջ հանդերձը

Աստվածաշնչում շատ անգամ չեն նշված մարգարիտները, բայց որտեղ էլ դրանք նշված են, հեշտ է հասկանալ, թե ինչ են խորհրդանշում: Շատ հղումներ իրենք իրենց պարզաբանում են, և մարգարիտները թվարկվում են թանկարժեք քարերի հետ՝ որպես արժեքավոր բաներ:

«Նոյնպէս ալ կիները իրենք զիրենք զարդարեն համեստ տարազով, ամօթխածութեամբ եւ խոհեմութեամբ, ո՛չ թէ հիւսուածքներով, ոսկիով, մարգարիտներով կամ մեծածախս պատմուճաններով» (Ա Տիմոթեոս 2:9):

Այն հղումները, որ մեզ հետաքրքիր են այս ուսումնասիրության համար նրանք են, որոնցում մարգարիտները նշվում են, որպես կնոջ հանդերձ, և համոզված եմ, որ հենց այստեղ էլ մենք կհասկանանք այս այլաբանության իմաստը:

Աստվածաշնչում յուրաքանչյուր կին ներկայացնում է երկուսից մեկը. կամ Քրիստոսի հարսնացուին, կամ էլ կեղծ հարսնացուին՝ ինքնակոչին, Բաբելոնի պոռնիկին:

Պոռնիկն ու կուլյաը

Հայտնություն 17:4-5-ը մեզ ցույց է տալիս, որ ինքնակոչ կինը, Բաբելոնը, որպես իր հանդերձի մի մաս մարգարիտներ է կրում:

«Կինը հագած էր ծիրանի եւ որդան կարմիր, պճնուած էր ոսկիով, պատուական քարերով ու մարգարիտներով, եւ ձեռքին մէջ ունէր ոսկիէ բաժակ մը՝ գարշութիւններով ու իր պառնկութեան անմաքրութիւններով լեցուն: Անոր ճակատին վրայ գրուած էր անուն մը. «Նորհուրդ, Մեծ Բարեւոյն, պոռնիկներուն ու երկրի գարշութիւնների մայրը» (Հայտնութիւն 17:4-5):

Երբ Բաբելոնն Աստծու կողմից դատվի և կործանվի, այդ ժամանակ «Բաբելոնի մարգարիտները» նույնպես կկործանվեն. *«Վայ, վայ, մե՛ծ քաղաք, դո՛ւն որ հագած էիր բեհեզ, ծիրանի ու որդան կարմիր, եւ պճնուած էիր ոսկիով, պատուական քարերով ու մարգարիտներով. որովհետեւ այ՛չպի շատ հարստութիւնը աւերեցաւ մէկ ժամուան մէջ» (Հայտնութիւն 18:16-17):*

Հարսնացուն քաղաք է

Իրական կինը, Քրիստոսի հարսնացուն, նույնպես քաղաք է՝ Նոր Երուսաղէմը, և այս քաղաքի դարպասները մարգարիտներ են: *«Տասներկու դռները՝ տասներկու մարգարիտ էին. իւրաքանչիւր դուռ՝ միակտուր մարգարիտ էր» (Հայտնութիւն 21:21):*

Որպեսզի էլ ավելի հասկանանք, թե մարգարիտներն ինչ են խորհրդանշում, ավելի լավ կլինի նախ հասկականք, թե ինչպես են մարգարիտները ստեղծվում, քանի որ դրանք հանածո չեն երկրի ընդերքից, ինչպես այլ թանկարժէք քարեր, օրինակ՝ գմբուխտը կամ ադամանդները: Մարգարիտը ստեղծվում է տանջանքի միջոցով: Փափկամարմինը (ոստրեն), ինքնիրեն պաշտպանելով որևէ բանի մի կտոր ներս ընկնելու հետևանքով առաջացած գրգռումից, կիպ հպվում է խոցու ներսում և սկսում այդ օտար մարմինը պարուրել սադափի անհամար շերտերով, որպեսզի ստեղծի հազվագյուտ ու թանկարժէք մարգարիտը:

Թաքնված իմաստություն

Մեր ամենօրյա խոսակցականում, երբ մեկը որևէ խորհմաստ բան է ասում, մենք ասում ենք. «Դա մարգարիտ է», և ես հավատացած եմ, որ դա էլ հենց նշանակում է մարգարիտը, երբ Հիսուսը խոսում է մեր մարգարիտները վատնելու մասին: Հավատացած եմ, որ մարգարիտներն այն **թաքնված իմաստությունն** են և հայտնությունը, որ գալիս է **մեր փորձությունների և փորձերի արդյունքում**, այլ ոչ թե սովորելով: Ահա թե ինչու է իմաստությունը տարիքով մարդկանց մոտ ի հայտ գալիս, այլ ոչ երիտասարդության: Կյանքի փորձություններն ու փորձերը մեզ բնականից են իմաստուն դարձնում, իսկ քրիստոնյայի փորձությունները մեր մեջ ձևավորում են Քրիստոսի անգին կյանքը, հարսնացուի կույս կյանքը, այն թաքնված իմաստությունը, որի մասին այս աշխարհն ու աշխարհիկ քրիստոնյաները ոչինչ չգիտեն:

Կեղծ կնոջ մարգարիտները կեղծ են, և նրա կեղծ իմաստությունն էլ հենց պատճառ է դառնում ճշմարիտ եկեղեցու տանջանքների:

«Տեսայ այդ կինը, որ արբեցած էր սուրբերուն արիւնով եւ Յիսուսի վկաներուն արիւնով: Երբ տեսայ զայն՝ մեծապէս զարմացայ» (Հայտնութիւն 17:6):

Այլաբանությունները մարգարիտներ են

Մենք կարող ենք ասել, որ այլաբանությունը մարգարիտ է, քանի որ այն բնական պատմություն է, բայց ունի թաքնված հոգևոր իմաստ, որը չլուսավորվածները չեն կարող իմանալ: Հիսուսը դա բացատրում է Մաթևոսի ավետարանում:

«Աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն. «Ինչո՞ւ առականերով կը խօսիս անոնց»: Ինք ալ պատասխանեց անոնց. «Քանի որ ձեզի՛ տրուած է գիտնալ երկինքի թագաւորութեան խորհուրդները, բայց անոնց տրուած չէ: ...Ուստի առականերով կը խօսիմ անոնց, քանի որ տեսնելով՝ չեն տեսներ, ու լսելով՝ չեն լսեր, ո՛չ ալ կը հասկնան: ...Բայց երանի՛ ձեր

աչքերուն՝ որ կը տեսնեն, եւ ձեր ականջներուն՝ որ կը լսեն» (Մատթեոս 13:10-16):

Իմաստութիւնն ի վերուստ

Պողոս առաքյալը նաև խոսում է թաքնված իմաստութեան մասին, որի վերաբերյալ աշխարհը ոչինչ չգիտի:

«Սակայն կատարեալներուն կը խօսինք իմաստութեան մասին. բայց ո՛չ այս աշխարհի, ո՛չ ալ այս աշխարհի ոչնչացող իշխաններուն իմաստութեան մասին, հապա՝ Աստուծո՛յ խորհրդաւոր եւ ծածկուած իմաստութեան մասին կը խօսինք, որ Աստուած դարերէն առաջ սահմանեց մեր փառքին համար: Այս աշխարհի իշխաններէն ո՛չ մէկը ճանչցաւ զայն. քանի որ եթէ ճանչցած ըլլային, չէին խաչեր փառքի Տէրը» (Ա. Կորնթագիս 2:6-8):

Երկու իմաստութիւնները

Իր նամակում Յակոբոս առաքյալը խոսում է երկու տեսակի իմաստութեան մասին: Նա ասում է, որ ի վերուստ իմաստութեան արդյունքն է հենց Աստուծու կյանքն ու Էութիւնը, իսկ այս աշխարհի իմաստութիւնը (որն իրականում սատանայական է ու կեղծ իմաստութիւն) բերում է սխալ ծառի իմաստութիւնն ու Էութիւնը՝ բարու և չարի իմացութեան ծառի: Ծիշտ այնպես, ինչպես մոգութիւնը լուսավորում և հայտնութիւն է առաջարկում (որը կեղծ լույսն է), այն նույնպես առաջարկում է իր նախաձեռնած թաքնված իմաստութիւնը:

Սակայն դա կեղծ իմաստութիւնն է, և Յակոբոս առաքյալն ասում է, որ այն երկրային է, շնավոր և դիվական:

«Բայց եթէ դառն նախանձ եւ հակառակութիւն ունենաք ձեր սիրտերուն մէջ, ճշմարտութեան դէմ մի՛ պարծենաք ու մի՛ ստէք: Այս իմաստութիւնը չ'իջներ վերէն, հապա՝ երկրային, շնչաւոր եւ դիւական է:

Որովհետեւ ո՛ր կայ նախանձ ու հակառակութիւն, հո՛ն կայ խառնակութիւն եւ ամէն տեսակ չար բան: Բայց վերէն եղող իմաստութիւնը՝ նախ անկեղծ է, յետոյ՝ խաղաղարար, ազնիւ, հլու, լի ողորմութեամբ ու բարի պտուղներով, անկողմնակալ եւ անկեղծ» (Հակոբոս 3:14-17):

Քաղաքն ու հարսնացուն

Մուտքը Նոր Երուսաղեմ մարգարտե դարպասներից է: Այլ կերպ ասած, որևէ այլ ճանապարհ չկա դեպի այս Երկնային քաղաք, բացի այն, որը ձևավորվել է քրիստոնյայի փորձությունների ու տառապանքների միջոցով: Պողոս առաքյալն ասում է, որ նրանք, ովքեր տառապում են Քրիստոսի հետ, պիտի նաև նրա հետ իշխեն:

«...եթէ տոկանք, պիտի թագաւորենք ալ անոր հետ: Եթէ ուրանանք զինք, ինք ալ պիտի ուրանայ մեզ» (Բ Տիմոթեոս 2:12):

«Եւ բոլոր անոնք՝ որ կ'ուզեն բարեպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով, պիտի հալածուին» (Բ Տիմոթեոս 3:12):

Քրիստոնյայի տառապանքը կձևավորի այս իմաստությունը, որի մասին աշխարհը չի կամենում գիտենալ: Երբ «երկաթե» և «եղեգնյա» վարագույրներն ընկնում են, ինձ մոտ տպավորություն է, որ արևմուտքի բոլոր քրիստոնյաները շտապում են տառապող եկեղեցուն ուսուցանել Յիսուսով հաղթանակի, հաջողության ու բարգավաճման մասին: Իրականում այն, ինչ նրանք պետք է անեն, ուսուցանվելն է և այն իմաստությունը փնտրելը, որը միայն եկեղեցու տառապանքը կարող է փոխանցել:

Քաղաքն ու պոռնիկը

Կեղծ կինը, Բաբելոնը, Նույնպես որպես իր հանդերձի մի մաս մարգարիտներ ունի, բայց նա ինքնակոչ է, քանզի նրա իմաստությունն

առաջացել է հարսնացուին հալածելուց և իր ազահոււթյունից ու ամբարտավանությունից, այլ ոչ թե տառապանքից:

«Ո՛րչափ փառաւորեց ինքզինք եւ ապրեցաւ պերճանքով, այդչափ ալ տանջանք ու սո՛ւգ տուէք անոր, որովհետեւ իր սիրտին մէջ կ'ըսէ. "Ես կը գահակայեմ իբր թագուհի. բնա՛ւ այրի չեմ եւ բնա՛ւ սուգ պիտի չտեսնեմ"» (Հայտնութիւն 18:7):

Նա արտաքինից ճշմարիտ հարսնացուի ճիշտ հանդերձն ունի, բայց նրա իմաստութիւնն ի վերուստ չէ: Սա այն կեղծ իմաստութիւնն է, որ պիտի մոլորեցնի ողջ աշխարհը և, որքան էլ տխուր թվա, հավատացած եմ, որ եկեղեցու մեծ մասը նույնպէս: Պոռնիկը բնականից տղամարդու համար շատ հմայիչ է ու չափազանց գայթակղիչ: Եթե ժամանակը չկրճատվեր, ապա հենց ընտրյալները կ'մոլորվէին:

«Որովհետեւ սուտ Քրիստոսներ ու սուտ մարգարէներ պիտի ելլեն, եւ ցոյց պիտի տան մեծ նշաններ ու սքանչելիքներ, որպէսզի՝ եթէ կարելի ըլլայ՝ մոլորեցնեն ընտրյալներն իսկ» (Մատթեոս 24:24):

Սա չընդունելն իրականում արդէն գայթակղված լինել է: Ուրեմն, իմ հետևութիւնն այն մասին, թե մարգարիտներն ինչ են խորհրդանշում, հետևյալն է. մարգարիտները հայտնի դարձած հոգևոր գիտելիք են, հոգևոր ճշմարտութիւն և իմաստութիւն, որը միայն կարելի է ձեռք բերել մեր փորձութիւնների, փորձերի և տանջանքների միջոցով:



ԳԼՈՒԽ 18

Խոզերից՝ ոչ մի օգուտ

...նաեւ խոզը, քանի որ կճղակաբաշխ է ու ճեղքուած կճղակ ունի, բայց չ'որոճար. ան ձեզի անմաքուր ըլլայ:

Ղեստացոց 11:7

*Գեղեցիկ կինը՝ որ դատողութիւն չունի,
Խոզին քիթը դրուած ոսկի օղակին կը նմանի:*

Առակաց 11:22

*Խորագէտ մարդը իր գիտութիւնը կը ծածկէ,
Իսկ անմիտներուն սիրտը իր յիմարութիւնը կը
յայտարարէ:*

Առակաց 12:23

*Սակայն իրենց պատահեցաւ ինչ որ ճշմարիտ
առակը կ'ըսէ. «Շունը կը վերադառնայ իր
փսխածին, ու լուացուած խոզը՝ ցեխին մէջ
թաւալելու»:*

Բ Պետրոս 2:22

Խոզերն Աստվածաշնչում շատ նման են շներին: Նրանք Մովսեսի օրենքում համարվում են անմաքուր կենդանիներ, և իսրայելացուն արգելված էր դրանց ուտել (Ղեստացոց 11:7):

ԴԱԵՐՂ ՄԱՆՈՒՄ ԵՆ ԽՈՂԵՐԻ ՄԵՋ

Սա, իհարկե, ճիշտ է հոգևոր իմաստով, քանզի երբ Հիսուսի կողմից մի մարդու միջից դուրս հանվեցին դևերը, նրանք խնդրեցին, որ նա իրենց թույլ տա բնակվելու խոզերի մեջ, և Հիսուսը բավարարեց նրանց այդ խնդրանքը: *«Դևերը կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին. «Եթէ հանես մեզ, արտո՞նէ՛ մեզի՝ որ երթանք մտնենք խոզերու երամակին մէջ»: Ըսաւ անոնց. «Գացէ՛ք»: Երբ անոնք դուրս ելան, գացին խոզերու երամակին մէջ, եւ ահա՛ ամբողջ երամակը գահավէժ տեղէն ծովը վազեց ու ջուրերուն մէջ մեռաւ» (Մաթևոսի ավետարան 8:31-32):*

Խոզաբունը մի խորհրդանշական վայր է, ուր մարդը հայտնվում է՝ իր երկնային հորը թողնելուց ու իր ժառանգությունը վատնելուց հետո. ինչպես անառակ որդու դեպքում: *«Ուստի գնաց՝ այդ երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ. ան ալ իր արտը դրկեց զայն՝ խոզ արածելու համար: Կը ցանկար խոզերուն կերած եղջիւրէն իր փորը լեցնել, բայց ո՛չ մէկը կու տար անոր» (Ղուկաս 15:15-16):*

ՍՈՒՄ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԸ

Մինուէյնը տեղի է ունենում, երբ քրիստոնյան հեռանում է Աստծուց, հռչակ, ունեցվածք ու այս աշխարհի հաճույքներն է փնտրում և վատնում իր հոգևոր ժառանգությունը՝ գալիք թագավորությունում: Պետրոս առաքյալն ասում է, որ այս երբեմնի կրակոտ քրիստոնյաները դարձել են դավաճան սուտ մարգարեներ եկեղեցում: Նա դրանց նմանեցնում է շների, որ վերադառնում են իրենց փսխածին կամ լվացված խոզերի, որ վերադառնում են ցեխի մեջ թավալելուն: Նրանք մաքրագործվել են՝ սրբագործվել, իսկ այժմ պղծվել են ու աղտոտվել: Ինչպիսի տխուր իրավիճակ պետք է լինի, եթե քրիստոնյան իրեն այստեղ գտնի:

«Սակայն իրենց պատահեցաւ ինչ որ ճշմարիտ առակը կ'ըսէ. «Շունը կը վերադառնայ իր փսխածին, ու լուացուած խոզը՝ ցեխին մէջ

Թաւալելու» (Բ Պետրոս 2:22):

Բարի լուրն այն է, որ շատ մարդկանց համար խոզաբունը իրականության ու իրենց հորը վերադառնալու սկիզբն է: Քանի՞ քրիստոնյաներ են շնորհակալություն հայտնել Աստծուն խոզաբնի համար վերադառնալուց ու վերականգնվելուց հետո:

Հավատացած եմ, որ գոյություն ունի երեք դասակարգ, որ խոզերը ներկայացնում են Հիսուսի այս պնդման մեջ՝

- ◆ **Եկեղեցում սուտ մարգարեն**
- ◆ **Աշխարհիկ քրիստոնյաները**
- ◆ **Ոչ քրիստոնյաները**

Հիսուսն ասում է, որ մենք չպետք է մեր մարգարիտները խոզերի առաջ նետենք, բայց ինչպե՞ս արդյոք մենք պետք է կիրառենք այն, ինչ հենց նոր կարդացինք, մեր պրակտիկ կյանքում, և ի՞նչ պետք է այն մեզ համար նշանակի: Սա նշանակում է, որ այն հայտնությունն ու իմաստությունը, որ մենք ձեռք ենք բերել մեր փորձությունների և մեր փորձերի միջոցով, շատ թանկ են մեզ համար ու չպետք է վատնվեն այն մարդկանց մոտ, որոնք չեն հասկանում կամ էլ որոնք ճշմարտության նկատմամբ կուրացել են՝ իրենց սայթաքելու կամ աշխարհիկ, մարմնական լինելու հետևանքով:

Ապաշխարումը բանալին է

Աստծու թագավորությանը երբեք որևէ շահույթ չի լինի այս մարդկանց մեջ ներդրում անելու փորձը: Աշխարհիկ քրիստոնյան կամ սուտ մարգարեն կարիք ունի ապաշխարանքի մասին լսելու: Նրանց պետք է ասել, որ վերադառնան իրենց հորը:

Ոչ քրիստոնյան կարիք ունի լսելու այն բարի լուրը, որ Հիսուսը մահացել է իր բոլոր մեղքերի համար, և որ նա կարող է հավիտենական կյանք ունենալ: Միայն Քրիստոսի աշակերտը կգնահատի թաքնված

իմաստությունն ու կկիրառի այն թագավորությանը շահույթ բերելու համար:

Նրանք կբզկտեն ձեզ

Յիսուսն ասում է, որ այս մարդիկ չեն գնահատի ձեր իմաստության մարգարիտն ու իրականում ձեզ վնաս կտան, քանզի այնուհետ, իմաստությունը մերժելուց հետո, նրանց կգրոհեն ձեզ վրա: Խորը ճշմարտություններն ու հոգևոր իմաստության խոսքերը հոգևոր տեսակետից իմաստունների համար են, այն է՝ այն մարդկանց, որոնք կշահեն այն հայտնությունից, որ դուք կկիսեք նրանց հետ:

Յիշում եմ մի քանի տարի առաջ, երբ ես մի գործընկեր հոգևոր սպասավորի հետ սկսեցի կիսել այն զգուշությունը, որն ունեի իր դավանանքի դոկտրիններից մեկի վերաներյալ: Ինձ համար դա հայտնություն էր, սակայն նախքան անգամ ես նրան կասեի իմ նոր մտքերը, նա վազեց վերև ու տասը րոպե անց ցած իջավ՝ աստվածաբանական գրքերի մի մեծ կույտ ձեռքին ու սկսեց քարոզ կարդալ գլխիս:

Իմ սեփական փորձը

Ես նստած լսում էի՝ ապշած, քանզի ես անգամ նրան չէի էլ ասել իմ հայտնությունը: Երբ նա վերջացրեց, նա ասաց. «Դե, եղբայր, եթե դու այս դոկտրինին չես հավատում, ես կասկածում եմ անգամ, որ դու քրիստոնյա ես»: Այս ամենը պարզապես այն բանի հետևանք էր, որ ես ընդամենը նշել էի, թե զգուշացում ունեի: Ես սովորեցի դասս, ու այժմ հասկանում եմ, որ ես իմ մարգարիտները խոզերի առաջ էի նետում: Նա ոչ միայն չգնահատեց այն, ինչ ես ուզում էի ասել, այլ իրականում շուռ եկավ ու ինձ սկսեց մեղադրել, որ անգամ «վերածնված» չեմ:

Յուսով եմ, որ ես ձեզ համոզեցի մինչև այժմ իմ ասածով, սակայն

եթե ոչ, լավ կլինի, եթե ես կարողանամ ցույց տալ, որ Հիսուսը, իսկ հետո Պողոս առաքյալը, այս սկզբունքը կիրառում էին իրենց հոգևոր ծառայությունում:

Նախ և առաջ, եկեք դիտարկենք Հիսուսի հոգևոր ծառայության վերաբերյալ մի քանի սուրբ գրություն: Հանրության մեջ ու փարիսեցիների համար (որոնք, ըստ սահմանման, սուտ մարգարեներ էին դարձել), Հիսուսը միշտ խոսում էր այլաբանություններով, ինչպես արդեն ցույց եմ տվել նախորդ գլուխներում: Հիսուսը սա անում էր, որպեսզի ճշմարտությունը թաքցներ նրանցից, ովքեր կդառնային ու կբզկտեին իրեն: Իր աշակերտներին նա մանրամասն բացատրում էր թաքնված իմաստությունը, բայց առանձին:

«Յիսուս առականերով խօսեցաւ բազմութեան այս բոլոր բաները: Առանց առակի չէր խօսեր անոնց, որպէսզի իրագործուի մարգարէին միջոցով ըսուած խօսքը. «Առականերով պիտի բանամ բերանս, եւ պիտի արտայայտեմ աշխարհի հիմնադրութենէն ի վեր ծածկուած բաները» (Մատթեոս 13:34-35):

«Եւ ըսաւ անոնց.(աշակերտներին) «Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն են՝ ամէն ինչ առեղծուած կ'ըլլայ» (Մարկոս 4:11):

Պողոսի հոգևոր ծառայությունը

Պողոս առաքյալը միևնույն կերպ էր գործում իր հայտնությունների հետ, ինչպես ցույց կտան հետևյալ սուրբ գրությունները: Դրսի մարդկանց Պողոս առաքյալը քարոզում էր խաչն ու խաչված Հիսուսին, բայց եկեղեցիներին նա միշտ ասում էր. «Ես ձեզ առեղծված ցույց կտամ», իսկ հետո բացահայտում գաղտնի իմաստությունը՝ մարգարիտները:

«...որովհետեւ որոշեցի ուրիշ որեւէ բան չգիտնալ ձեր մէջ, բայց միայն Յիսուս Քրիստոսը, եւ զայն՝ խաչուած» (Ա. Կորնթացիս 2:2):

«Որովհետեւ Քրիստոս զրկեց զիս ո՛չ թէ մկրտելու, հապա

աւետարանելու. բայց ո՛չ խօսքերու իմաստութեամբ, որպէսզի Քրիստոսի խաչն ընդունայն չըլլայ» (Ա Կորնթացիս 1:17):

«Որովհետեւ չեմ ուզեր, եղբայրներ՛, որ անգիտանաք սա՛ խորհուրդին, (որպէսզի դուք ձեզ իմաստուն չսեպէք), թէ մասնակի կուրուժին պատահեցաւ Իսրայէլի, մինչեւ որ ներս մտնէ հեթանոսներուն լիութիւնը» (Հոովմեացիս 11:25):

«Ահա՛ կը յայտնեմ ձեզի խորհուրդ մը. «Բոլորս պիտի չննջենք, բայց բոլորս ալ պիտի փոխուինք» (Ա Կորնթացիս 15:51):

Մարգարիտները խոզերի առաջ նետելու վերաբերյալ այս գլուխը վերջացնելու ու ի վերուստ իմաստութեան վերաբերյալ գրքի այս հատվածն ավարտելու համար, երկու իմաստութեանների մի կատարյալ օրինակ կա, որտեղ Հիսուսը խոսում է մարգարտի մասին:

«Դարձեալ՝ երկինքի թագաւորութիւնը նման է մի առեւտրականի մը, որ գեղեցիկ մարգարիտներ կը փնտռէ, եւ շատ պատուական մարգարիտ մը գնտելէ ետք՝ գնաց, ծախեց իր ամբողջ ունեցածը, ու գնեց դայն» (Մատթեոս 13:45-46):

Հիսուսը վերոնշյալ առակում ասում է մի մարդու մասին, ով մարգարիտներ էր փնտրում, իսկ երբ գտնում է մեկը, որը շատ թանկարժեք է, նա իր ունեցած ամեն ինչը վաճառում է, որպեսզի այն գնի: Քանզի սա առակ է, իմաստը թաքնված է և կատարելապես ներկայացնում է իմ պնդումը: Քրիստոնյաների մեծամասնությունն իենց սեփական մեկնությունն է տվել այս առակին, ու հասել թագավորության այս առեղծվածի ճիշտ հակառակ բանին, որի մասին Հիսուսն իր աշակերտներին էր ասում:

Մարգարիտը հարսնացուն է

Մի եկեղեցական երգ կա, որը շատ հայտնի էր հիսունական հոգևոր շարժման սկզբնական շրջանում, այնտեղ ասվում է. «Ես գտել եմ մեծագույն արժեքի մարգարիտը, իմ սիրտը երգում է ցնծությամբ», և խոսվում է այն մասին, թե ինչպես ենք մենք գտնում թանկարժեք

մարգարիտը՝ Յիսուսին:

Աստվածաշնչի շատ մեկնաբաններ համաձայնվում են այս երգի հետ ու միևնույն բանն ասում, այն է՝ որ մենք պետք է լինենք վաճառականի նման, որը պատրաստ է ամեն ինչ տալու, որպեսզի գնի մեծարժեք մարգարիտը՝ Յիսուս Քրիստոսին:

Խնդիրն այն է, որ սա բնական մտածելակերպ է, այլ ոչ աստվածային հայտնություն, և իրականում անգամ բնականից որևէ իմաստ չունի: **Մենք չենք փնտրում և գնում Քրիստոսին:** Ճիշտ հակառակը, Յիսուսն է փնտրում մեզ ու գնել է մեզ իր սեփական արյունով: Եկեղեցին, նրա հարսնացուն, այն մարգարիտն է, որը Յիսուսը եկավ փնտրելու և գնելու: Այս առակում թաքնված իմաստությունն իրականում Քրիստոսի հարսնացուի մասին թաքնված իմաստությունն է:

«Ասիկա մեծ խորհուրդ մըն է. բայց ես կը խօսիմ Քրիստոսի և եկեղեցիին մասին» (Եփեսացիս 5:32):



Այս շարքի հաջորդ գիրքը կլինի վերջինս ու կեզրափակի Չիսուսի այս քարոզը: Այն նաև մեզ համար, որպես աշակերտներ, առաջ կբերի որոշումներ, որ պետք է մենք կայացնենք: Ընտրություն, թե որ դարպասից մենք ներս կմտնենք, որ ճանապարհի վրա կքայլենք, որ ծառից կուտենք, և որ հիմքի վրա կկառուցենք:





Մորիս Բարրաթը դաստիարակվել է իր հոր՝ Բիլլ Բարրաթի քրիստոնեական ծառայության ներքո: Նա քրիստոնյա է դարձել վեց տարեկանում և իր երիտասարդությունից ի վեր ապրել ավանդական քրիստոնյա կենսակերպով: Սակայն երեսուն տարեկանում նրա վրա խորը ազդեցություն է թողնում իր հոր ուսուցումը՝ հիմնված Հիսուսի Լեռան քարոզի վրա, որտեղ խոսվում է իրական քրիստոնյայի

սկզբունքների և կենսակերպի մասին: Այդ ժամանակվանից ի վեր նա սկսում է ավանդական, «նորմալ» քրիստոնյայից դառնալ մի մարդ, ով համոզված է, որ այն, ինչի պակասն այսօր քրիստոնյաներն ունեն, ոչ թե գերբնական զորությունն է կամ շնորհները, այլ պտուղը՝ Հիսուսի եռությունը, նրա բնավորությունը:

Վերջին երեսուն տարիների ընթացքում Մորիսը նվիրաբար հետևում է իր կանչին. ուսուցանում է եկեղեցուն (այսինքն հավատացյալ ժողովրդին) քրիստոնյա աշակերտի իրական կենսակերպը: Նա ուսուցանում է եկեղեցիներում, տնային խմբերում, բանտերում, դպրոցներում և աստվածաշնչյան դպրոցներում, Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի մի շարք պետություններում, ԱՄՆ-ում և Կանադայում:

Քրիստոնյայի կենսակերպին վերաբերող դասերի մեծամասնությունը հասանելի են համացանցում՝ www.barrattministries.org.uk կայքում, որտեղ ներառված է նաև Լեռան քարոզի շարքը՝ 64 դասից կազմված:

Մորիս Բարրաթը Մեծ Բրիտանիայի Մանչեսթեր քաղաքում գործող «Barratt Ministries»-ի տնօրենն է: Նրա «Արմատական քրիստոնեություն» շարքը ուղղված է Լեռան քարոզի խորաթափանց ուսումնասիրությանը, որի նպատակն է, կոչ անել այսօրվա քրիստոնյաներին հետևելու Հիսուսին՝ ապրելով նրա պատգամած կենսակերպով:



**«Barratt Ministries» հրատարակչության
կողմից հրատարակված այլ գրքեր**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 1
Կարող եմ արդյոք իրական քրիստոնյաները
ոտքի կանգնել**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 2
Աղ և լույս. աշակերտի եությունը**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 3
Օրենքի իրագործումը**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 4
Աշակերտի գաղտնի կյանքը**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 6
Աշակերտի ընտրությունը**



«Barratt Ministries»-ը քրիստոնյա կազմակերպություն է, հիմնադրվել է 1985 թ-ին Մեծ Բրիտանիայի Մանչեսթեր քաղաքում: Այն զբաղվում է գրքերի և գրականության հրատարակմամբ, երաժշտական, ուսուցողական սկավառակների ձայնագրմամբ և այլն:

«Barratt Ministries» հրատարակչություն

